

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

КАРО КАФАДАРЯН

ЕРЕВАН

СРЕДНЕВЕКОВЫЕ ПАМЯТНИКИ
И
НАДПИСИ НА КАМНЯХ

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1975

902.3(47.925)
2-52

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՇ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ


ԿԱՐՈ ՂԱՖԱԳԱՐՅԱՆ

Ե Ր Ե Վ Ա Ն

ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՐՁԱՆՆԵՐԸ
ԵՎ
ՎԻՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

648

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՇ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1975



Ներկա աշխատությունը արդյունք է հեղինակի բառասուն տարիների ընթացքում հավաքած նյութերի և կատարած ուսումնասիրությունների:

Բաղկացած է ներածականից և երկու մասից:

Ներածական հոդվածի մեջ, հեղինակը բազմաթիվ հնագիտական ավազների հիման վրա ցույց է տալիս, որ միջնադարյան Երևանը ուրարտական Էրեբունի բազալի շարունակությունն է:

Առաջին մասում նկարագրում և արժեքավորում է Երևանի միջնադարյան հուշարձանները, որոշում նրանց կառուցման ժամանակն ու հետազայում կրած փոփոխությունները: Մեծ կարևորություն է տալիս Ավանի տաճարին, ճշտում է նրա կառուցման ժամանակը և խաղացած դերը հայ ճարտարապետության զարգացման մեջ:

Երկրորդ մասում հրատարակվում են Երևանի 293 արձանագրությունները, որոնք կարևոր աղբյուր են միջնադարյան Երևանի պատմության, մշակույթի, սոցիալ-տնտեսական հարաբերությունների, լեզվի և շատ այլ բնագավառների ուսումնասիրության համար:

Պատասխանատու խմբագիր՝ Բ. Ն. ԱՌԱՔԵՆՅԱՆ

Ս. Ռ. Ա. Ջ. Ա. Բ. Ա. Ն

Երևանը վերջին հինգ դարերի ընթացքում Արևելյան Հայաստանի կենտրոնն է եղել և հիսուն տարուց ավելի է՝ Սովետական Հայաստանի մայրաքաղաքն է և աշխարհով մեկ ցրված հայության հույսն ու ապավենը:

Մեր սերնդի պատժն է ֆալաֆի վերակառուցման և ընդարձակման այս բուն շրջանում ուսումնասիրել անհետացող անցյալի մնացորդները:

Այդ ուղղությամբ փիչ բան չի արված սովետական կարգերի հաստատումից հետո: Այսպես՝ այժմ ուսումնասիրվում են Երևանի ֆաբրիկայի անավանդները (Հ. Մարտիրոսյան, Բ. Երիցյան, Հ. Ազիզյան), պեղվել են և շարունակվում են պեղվել պղնձեդարյան և բրոնզեդարյան բնակատեղիներ Շենգավիթում, Մուխանեաթ-քափայում (Ե. Բայրուդյան, Ս. Սարգսյան), ուրարտական ամրոց-ֆաղաֆները Կարմիր-բլուրում և Աբին-բերդում (Ք. Պիտրովսկի, Կ. Հովհաննիսյան), գրվել են մի քանի գրքեր, վերծանվել և հրատարակվել են ուրարտերեն սեպագիր արձանագրություններ (Մ. Իսրայելյան, Ն. Հարությունյան), ինչպես և հայերեն վիճակալի արձանագրություններ: Կատարվել են պեղումներ ֆալաֆի տարածության վրա:

Ներկայացվող աշխատությունը ևս պատկանում է այդ կարգի ուսումնասիրությունների թվին և իր մեջ ընդգրկում է Երևանի միջնադարյան հուշարձանների ու երանց վիճակալի արձանագրությունների ուսումնասիրությունը և հանդիսանում է հեղինակի «Հայաստանի պատմական հուշարձանները» մասնագիտական հեռանկարի հերթական 4-րդ գիրքը, որի վրա, ընդհատումներով, աշխատել է շուրջ քսուսուս տարի, սկսած 1931 թ.:

Այս գրքի համար կազմած նախնական ծրագիրը շատ ընդարձակ էր և անհրաժեշտ էր մեկ մարդու համար: Հեղինակը ծրագրել էր Երևանը հնագիտորեն ուսումնասիրել համակողմանիորեն և արդյունքը ամփոփել մի սովորական գրքի մեջ:

Ուսումնասիրություններն սկսվեցին շինարարության և այլ հողային աշխատանքների վայրերում պատահաբար բացվող հնությունների պեղմամբ: 1936 թ. հեղինակը հետախուզական պեղումներ կատարեց Կարմիր-բլուրում, որոնք շարունակեց նաև 1939 թ. Բ. Պիտրովսկու ընկերակցությամբ:

Սակայն շուտով համոզվեց, որ արդի գիտության բարձր պահանջների պայմաններում մի մարդը չի կարող գրավել հնագիտության բոլոր դարաշրջաններով, քեկուզ միայն մի ֆաղաֆի սահմաններում: Այդ պատճառով նա աշխատության շրջանակները նեղացրեց, և ի վերջո, ուսումնասիրության համար, վերցրեց Երևանի միայն միջնադարյան հուշարձանները՝

Այդ նյութն ընտրելուն նպաստեց նաև այն հանգամանքը, որ հեղինակն արդեն հավաքել էր Երևանի մի շարք հնավայրերի վիճակալի արձանագրությունները (Կոպենի գերեզմանոց, Կարողիկե եկեղեցի, Պողոս-Պետրոս), ու-

¹ 1920-30 թվականներին Հայաստանում աշխատող հնագետները սակավաթիվ էին, սկզբում միայն մեկն էր (Աշխ. Քալանթար), իսկ հետո դարձան 5 (Աշխ. Քալանթար՝ 1920-ից,

սումնասիրել էր Ավանի տաճարը և պեղումներ կատարել այնտեղ. Սարգսրի բերդում՝ «Արարատ» գիւղու գործարանի շինարարական և հողալին աշխատանքների ժամանակ և Բաղաբի տարբեր կետերում պեղել էր բազմաթիվ դամբարաններ:

Ներկա աշխատության որոշ մասերն անցյալում տպագրվել են գիտական պարբերականներում և առանձին զբոսկով²:

Աշխատության մեջ հեղինակը ներկայացրել է Երևանի միայն միջնադարյան հուշարձանները և չի շոշափել Բաղաբական և սոցիալ-տնտեսական խրդիրներ: Այդ խնդիրներն ուսումնասիրողները հարուստ նյութ կգտնեն հրատարակվող վիմակառ արձանագրությունների բովանդակության մեջ, որ հնդինական աշխատել է ներկայացնել մինչև իսկ իրենց ամբողջությունն ու իմաստը կորցրած հուշարձանների վրա հանդիպող գրերը՝ հնագույնից մինչև XVIII դարը ներառյալ, իրենց գծագրական առանձնահատուկ ձևերով և լուսանկարներով: XIX դարից ևս կան մի քանի շինարարական կամ այլ բնույթի կարևոր արձանագրություններ:

* * *

Ներկա աշխատության մեջ հրատարակվող արձանագրությունների գծագիր տախտակները կազմել և գծագրել է հեղինակը: Լուսանկարների մեծ մասը վերցված է Հայաստանի Պատմության պետական բանգարանի ժողովածուներից, մի մասն էլ (Քանաֆեռի, Կոնդի, Զորավոր, Ավանի և Հովհաննես և Աստվածածին Եկեղեցիներն ու նրանց արձանագրությունները), որոնք շկային, լուսանկարել է հնագետ Աբրահամ Շահինյանը:

Ճարտարապետական հուշարձանների չափագրությունները վերցված են Պետլինի հուշարձանների պահպանության վարչության դիվանից, մի մասն էլ ներկա աշխատության համար չափագրել են հեղինակի հարտապալա որդիները՝ Կորյուն և Գրիգոր Ղաֆազարյանները:

Հայաստանի և Երևան Բաղաբի պատմության բանգարանների վարչություններին, ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի դիրեկցիային, Հայաստանի Պետլինի հուշարձանների պահպանության վարչությանը, ինչպես նաև լուսանկարիչներ Արտաշես Վրույրին և Ասքանյա Աճեմյանին, այս հատորի պատրաստման գործին ցույց տված աջակցության համար, հեղինակն իր խորին շնորհակալություն է հայտնում:

Ե. Քաջուրջյան՝ 1927-ից, Կ. Ղաֆազարյան՝ 1929-ից, Ա. Բարխուդարյան՝ 1932-ից, Զ. Եղիազարյան՝ 1932-ից), այդ պատճառով էլ զբաղվում էին ամեն բնույթի հարցերով (պեղումներ, ուղարկական սեպագրերի վերծանություն, դրամագիտություն, հուշարձանների պահպանություն, քանդակապիտ աշխատանք և այլն), հնարավոր չէր մասնագիտանալ որևէ հնդ բնագավառում, մինչև որ հանդես եկավ հնագիտների նոր սերունդը՝ 30-ական թվականների վերջերի և հետագայում:

² Նախագիտ լույս են տեսել հետևյալ հոդվածները, որոնցից երեքը (Գ, Ե, Զ) մտել են ներկա աշխատության մեջ:

Ա. «Կարմիր-բլուրի նորագյուտ սեպագիր արձանագրությունը», «Տեղեկագիր» 2002 Պատմության և դրամագիտության ինստիտուտի, № 2, 1937, էջ 222—236:

Բ. «Երևանի Կաթողիկեի և նորահայտ հուշարձանի վիմակառ արձանագրությունները», «Տեղեկագիր» 2002 պատմության և դրամագիտության ինստիտուտի, 1938, № 1, էջ 165—193:

Գ. «Раскопки Кармир-блугра» (предварительный отчет), «Տեղեկագիր» ՍՍՀՄ ԳԱ Հայկական ֆիլիալի, 1940, № 3, էջ 26—36:

Դ. «Պատմահնագիտական գիտություններ Ավանի տաճարի վերաբերյալ», ՊԲԶ, 1968, № 3, էջ 76—90:


Ե. «Երևանի միջնադարյան հուշարձանները», «Լրտեր» հատ. գիտությունների, 1969, № 1, էջ 73—93:

Զ. «Երևան քաղաքի պատմության մի քանի հարցերի մասին», ՊԲԶ, 1969, № 1, էջ 3—14:

Է. «Ավանի երկկղզյան ծածկագիր արձանագրությունը», Երևան, 1945 (առանձին զբոսկով):

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ
ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ



Գ ԼԵՈ ԻՋԻՆ Ա.

ԵՐԵՎԱՆԻ ԲԱՆԿԱՎԱՅԻՆ ՏՆՊԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄԱՌՈՒԹՅՈՒՆԸ



րևանի անցյալի վրա հնագետներն ու պատմաբանները հատուկ ուշադրություն դարձրին Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո:

Հին մատենագրության մեջ Երևանն աններկի կերպով բիշ է հիշատակվել, այնքան բիշ, որ այդ հիշատակությունների հիման վրա պատմության հարցերը պարզաբանին անհնարին է: Վաղուց հայտնի վիմական արձանագրությունների տված որոշ վիճակներն էլ սխալ և միակողմանի եղբակցությունների էին հանգեցրել ուսումնասիրողներին: Այդ արձանագրությունների մեջ Երևանը հիշատակված էր վանքերին նվիրվող այգիների կապակցությամբ, զրանից էլ պատմաբանները կարծել էին, որ Երևանը զուտական տիպի բնակավայր էր ևղև՝ հայտնի իր բազմաթիվ այգիներով:

Ճիշտ է, Առաքել Դավրիժեցին, Զարարիա Քանաբեղյին, Աբրահամ Երևանցին, Միմեոն Երևանցին, ինչպես նաև Հովհաննես Շահաբունյանցը, Ալիշանն ու Մեսրոպ Մմբատյանցը որոշ տեղեկություններ հաղորդում են Երևանի մոտիկ և հրբեմն էլ հետավոր անցյալի մասին, բայց դրանք բիշ են ու հավաքական:

Առաջին անգամ հին Երևանը հատուկ ուսումնասիրության նյութ դարձրեց բազմավաստակ բանասեր և պատմաբան Երվանդ Շահաղիբը: Նա Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի առաջարկությամբ գրեց և 1931 թ. հրատարակեց «Հին Երևանը» աշխատությունը, որի առաջաբանում ասում է, որ նպատակ ունի «տալու մեր ընթերցող հասարակության Հայաստանի բազարներից մեկի պատմությունը, որի անցյալը

բաճկված է խորին հեռության մեջ և որի հնագույն շրջանի պատմությունը տակավին գոյություն չունի իսպառ»:

Շահաղիբի «Հին Երևանը» աղբատիկ բովանդակություն ունի և իրավացի է հեղինակը, երբ գրում է, թե «ապագայում այդ ուղղությամբ (Երևանի բաղաբի պատմության—Ա. Ղ.) կատարվելիք հետազոտությունները, ուսումնասիրությունները և նամանավանդ պեղումները, անկասկած, մեզ կտան այնպիսի ավյալներ, որոնք վերջնականապես կպարզեն մեր մայրաքաղաքի այդ հնագույն շրջանի պատմության կնճառու առեղծվածը»:

Նախատվետական շրջանում հայտնի էր միայն 1879 թ. Արին-բեղբի ստորոտում նորբեցի Տեր-Ավետիսենց Պապոյի¹ հողային-երկրագործական աշխատանքների մասնակի պատահաբար գտած սեպագիր արձանագրությունը՝ գրված Արեգիշտի Մենուագրու անունից (որ թվագրվել է 786—765 թթ. մ. թ. ա.): Այդ բարը Ա. Խլանովսկին զննել էր և իր հետ տարել Մոսկվա, այնտեղի Պատմության թանգարանին հանձնելու համար:

Այդ արձանագրության մեջ խոսվում է Ար-

¹ Երվանդ Շահաղիբ, Հին Երևանը, 1931, էջ 11: Երևանի բաղաբի անվան ստուգաբանության մասին վաղեմի հնագետ Մեսրոպ արքեպ. Մմբատյանցը գրում է: «Երևանա անվան նշանակության համար զանազան ավանդություններ կան, ոմանք ասում են նոյնահասակոր տաղանից զուրս եկած միջոցին նախ Երևանն անսած է և ասած. «Ահա երևեցան լեռիքը և բլուրքը» վասն որո կոչված է երևան: Ոմանք գրում են թվ երվանդ Բ. Արշակունի թագավորը այստեղ գանել է թնշամվույն, ոտորի անդի անունը մնացել է երևանդավան, իսկ ևս Ղազար Ջահիկեցի կաթողիկոսի հետ համաձայն եմ, որ բաղաբի հիմքը զրել է Հայկազունի Ա. Երվանդը և անվանել է երվանդավան, ապա դարձել Երևան» («Տեղագրություն Գեղարքունի ծովազարդ գավառի...», Վաղարշապատ, 1895, էջ 5):

գիշտի թագավորի կատարած շինությունների մասին, բայց չի հիշատակված Արին-բերդի ուրարտական անունը և այդ պատճառով էլ նրա անունը երկար ժամանակ անհայտ էր մնում:

Արձանագրության մեջ, այսօրվա թարգմանությանը, ասված է.

«Արգիշտի Մենուարդին այս շտեմարանը կառուցեց 10.000 կապի այնտեղ (տեղագրություն համար)»¹:

Առաջներում այդ արձանագրությունը կարդում էին՝ «...այս տունը կառուցեց 10.000 բար զինվոր»²:

Երևան բառի նախահայկական ծագումն էլ հայտնի չէր: Ոմանք այդ բառը կապում էին երկրի թագավորի անվան հետ, որ իբրև թև բաղադրը կառուցել է երկրանց Ա կաղապրը (Պաղար Զահեկցի), ոմանք կարծում էին թե երևան-ը առաջացել է երկրանց և վանել (հետաքննել) բառերից, զրա համար էլ իբրև թև սկզբում կոչվել է երևան-ը զովան, իսկ հետո սեղմվելով գարձնել է երևան: Անգամ երևանը շփոթվել են երկրանցալատի հետ (Հակոբ Նալբանդյան):

Մեր դարի սկզբներից սկսած դիտական զրահանություն մեջ սկսեց տարածվել սեպագրադեան նիկոլսկու կարծիքը: Նիկոլսկին գրում է, որ 1894 թ. Ա. Ա. Իվանովսկին վերահիշյալ սեպագրի գտնված տեղը տեսնելու նպատակով Արին-բերդ էլ գնացել և նրա զագավրին տեսել է բերդապարիսպների և շենքերի մնացորդներ: Նիկոլսկին նկատի ունենալով սեպագրի զյուտը և այդ մնացորդները, ենթադրել է, որ երևան բաղադրը սկզբնական հիմնադրված է եղել Արին-բերդում, ուրարտացիների ժամանակ և կոչվել է Երիախի: Այդ անունը հիշատակված է Սեանա լճի ափին, ժայռի վրա փորագրված, այսպես կոչված Սուլի-

նարի արձանագրության մեջ, որտեղ Ռուսա Սարգուրդին (730—714 թթ. մ. թ. ա.) թվարկում է իր գրաված 23 երկրները, որոնցից երկրորդը Երիախին է:

Շատերը տուրք տվեցին այդ կարծիքին, արձանակներն էր, որովհետև Երիախին արձանագրության մեջ հիշատակված է իբրև Երիախ և ոչ թե Բաղախ, իսկ երևանը երկիր չի, այլ բաղադր է:

Այսօր հաստատապես գիտենք, որ Երիախին երևանը չէ, բայց Նիկոլսկու մեծ ծառայությունն այն էր, որ նա երևան բաղադրի անունը կապեց Արին-բերդի հետ, իսկ դա, ինչպես կունենեք ստորև, ճիշտ զրաբ կեղծ բուրդովին այլ տվյալներին հիման վրա, որոնց ծանոթ չէր Նիկոլսկին:

Վաղուց հայտնի էր նաև Վանա ժայռին փորագրված ուրարտական սեպագրի արձանագրություններից մեկը, որ դիտության մեջ հայտնի է Խորխոջյան տարեգրություն անունով: Նրա մեջ Արգիշտի Մենուարդին հերթով թվարկում է իր թագավորության տարիներին կատարած կարևոր գործերը և հինգերորդ տարվա իրադարձությունների շարքում հիշատակում է Էրբունի (Բրբունի) բաղադրի կառուցումը: Արձանագրության այդ հատվածը թարգմանվում է այսպես.

«Սալգի աստուռ կամրով» Արգիշտի Մենուարդին՝ ասում է. Էրբունի բաղադրը ևս կառուցեցի՝ Բիախնա երկրի հողորթության և թշնամի երկրի սարսափի համար: Հողն անշեն³ էր, ոչինչ չկար այնտեղ կառուցած: Մեծ

¹ Տե՛ս Մ. Н. Никольский. Клинообразные надписи Закавказья, „Материалы по археологии Кавказа“, выпуск V, М., 1890, էջ 97:

² Խորխոջյան տարեգրությունը ժայռի վրայից առաջին անգամ արտադրել է Ֆրանսիական-սուրիական ընկերության կողմից 1827 թ. Վան գործուղված Ֆ. Շուլցը: Ինչպես հայտնի է, նրան սպանեցին այնտեղ, իսկ հավաքած նյութերը հետո մասն հրատարակվեցին Փարիզում, նույն ընկերության գիտական նախագահի, E. F. Schulz, Memoires sur le lac de Van et ses environs, Journal Asiatique, t. IX, 1840, էջ 237—323:

³ Բնագրում ba-u-si-ni պետք է թարգմանել՝ կամրով, չնուրիվ, կամ հեմառնով, բայց ոչ երբեք մեծույնքով, ինչպես ասում են ոմանք:

⁴ Բնագրում Me-nu-a-xi-ni-še (Մենուարդինի) բառացի նշանակում է Մենուարդի որդի, բայց քանի որ ուրարտերենում Մենուարդինի-ն մի բուն է, այդ պատճառով նախընտրելի է Մենուարդի մեր, ինչպես հայերենում ոմանք Տառադարի Ապավառցի:

⁵ Երավացի է Մ. Բարաշեյանը, երբ կասկածում է արձանագրությունների մեջ հաճախ հանդիպող զի-u-րա-ni զի-u-նի-ni ma-nu բառերի թարգմանության ճշտության վրա. եր-

գործեր կատարեցի այնտեղ: 6.600 հատե ևս Սուլիսի երկրներից զինվոր բնակեցրին»:

Երկար ժամանակ այդ բաղադրի տեղը մնում էր անհայտ: Էրբունին երևանի հետ կապելու ոչ մի հիմք չկար, չնայած այն բանին, որ Խորխոջյան տարեգրության մեջ երկրորդ օրինակի սկզբի և վերջավորության մասերը պահպանվել էին նաև Վան բաղադր. ս. Սահակ եկեղեցու մեջ, որտեղ բառացի կրկնված էր նույն արձանագրությունը:

1950 թ. երևան բաղադրի պատմության համար եղավ շրջադարձային այդ բաղադրի սեպագրի սկզբիցին Արին-բերդի ամենամյա կանոնավոր պեղումները, նույն տարվա սեպտեմբերի 25-ին այնտեղ գտնվեց բաղադրի հիմնադրմանը վերաբերող սեպագրի արձանագրությունը և պարզվեց, որ Էրբունի բաղադրը երևանն է և մեր բաղադրի անունը ոչ մի կապ չունի Երիախի երկրի անվան հետ:

Այդ արձանագրությունը նույն բովանդակությունն ունի, ինչ որ Վանա ժայռի և նույն բաղադրի ս. Սահակ եկեղեցու արձանագրությունների համապատասխան մասերը, բայց ունի նաև որոշ տարբերություններ.

ա. Արին-բերդում գտնվածի մեջ Արգիշտին շեշտում է, որ բաղադրը կառուցել է Վայտեղը, այսինքն Արին-բերդում: Որքան է Երբունին Արին-բերդն է: Հասկանալի է, որ այդ բառը (Վայտեղ) չէր կարող գրված լինել Խորխոջյան տարեգրության և ս. Սահակ եկ. արձանագրությունների մեջ, որոնք Արին-բերդից հեռու են գրվել:

բ. Արին-բերդի արձանագրության մեջ Էրբունու ամրոցը կոչված է Վճարք: Խորխոջյան տարեգրության մեջ հավանաբար կարևոր չեն համարել նշելու նրա հզորությունը:

գ. Արին-բերդի արձանագրության մեջ չկա այնտեղ 6.600 զինվոր բնակեցնելու մասին ոչ մի խոսք: Կարծում ենք, որ զինվորների թվի բացակայությունը պատճառն այն է, որ այդ արձանագրությունը գրվել է բաղադրի հիմնադրման միջոցին, երբ դեռևս կալապորի մարդկանց թիվը պարզ չէր²:

կիր ամառի էր, հողն ամառի էր (ԳԱ «Տեղեկագիր», 1957, № 9, էջ 99, ծանոթություն):

Կարծում ենք, որ այդ բառերը ճուշտ են առիտ ոչ թե Էրբի ամառի լինելը, այլ այն, որ այնտեղ նախորդ այլ շենքեր կառուցված չեն եղել:

³ Գ. Ա. Меликшванли, նշված աշխ., էջ 214:

⁴ Էրբունու առաջին բնակիչների թիվը 6.600-ով չի սահմանափակվել: Աղբյուր մյուս զինվոր է կցել, որոնք ամրոցում են սեպագրվել, իսկ նրանց սպասարկող մարդիկ

Վանի զույգ արձանագրությունները Արգիշտին գրել է տվել իր թագավորության 5-րդ տարին և այնուհետև ամեն տարի ավելացրել է նույն տարվա կարևոր գործերի տարեգրությունը, հասցրելով մինչև իր թագավորության վերջը՝ զահակություն 23-րդ տարին:

Ուրարտական թագավորներից շատերը, որոնց թվում նաև Արգիշտի առաջինը, հիշատակված են ասորեստանյան սեպագրերի մեջ, և այդ սեպագրերի հիման վրա որոշվում է նրանց թագավորության ճիշտ կամ մոտավոր տարիները:

Արգիշտի առաջինի զահակություն տարեթվերը ճիշտ են որոշվում: Նրա զահակություն սկիզբը՝ 786 թվականն է մ. թ. ա.: Այդ թվականը բոլորովին պահպանվել են թվական և պարզվեց, որ Էրբունի բաղադրը երևանն է և մեր բաղադրի անունը ոչ մի կապ չունի Երիախի երկրի անվան հետ:

Արին-բերդի 1950 թվականին գտնված սեպագրի արձանագրությունը, որ երևան բաղադրի հիմնադրման վկայագիրն է, ունի հետևյալ բովանդակությունը.

1. Խալդ աստուռ զորովյալմը,
 2. Արգիշտի Մենուարդին,
 3. Այս հզոր ամրոցը կառուցեց:
- [Արգիշտի Մենուարդին ասում է]⁴
4. «Կույնցի բաղադրն Էրբունունի անունով»

և բաղադր բնակիչները, անշուշտ, մեծ թիվ են կազմել, նրանց ապրել են բերդի ստորոտի հարթավայրում, ինչպես պարզվեց պատահական պեղումների շնորհիվ:

³ Ե. Վ. Շաբուրյանով, երևանի հիմնադրման ժամանակի հարցի շուրջ, ՊՖՆ, 1959, № 2—3, էջ 78—94:

⁴ Արձանագրության առաջին երեք տողերը գրված են Արգիշտի անունից երրորդ զեմբով, 4-րդը սկզբում է առաջին զեմբով նույն Արգիշտի անունից: Այդ պատճառով երրորդ և չորրորդ տողերի մեջ միջակ փայտեղանով ավելացրել ենք մի տող, որ արձանագրության մեջ չկա, որովհետև երրորդ զեմբից անցումն առաջին զեմբի պատճառաբանվի:

5. Բիսիան երկրի հորրոթյան
6. [Ե.] թշնամի երկրի արտափի [համար]:
7. Արգիշտին ասում է. «Տողը»¹
8. Կառուցապատված չէր, կատարեցի
9. Կան գործեր այստեղ
10. Խաղ ասածու գործվածք
11. Արգիշտի Մենուարդին
12. Քաղաքը հզոր, թագավորը Բիսիան երկրի
13. Տեր Տոսպ բաղաբն⁵

Սակայն էրբերունի այսօրվա նրանք կլինի միայն այն դեպքում, եթե այն հիմնադրման օրից մինչև այսօր իր գոյությունը շարունակեցր ատանց ընդմիջման: Իսկ եթե երբևէ ընդհատվել է նրա գոյությունը, նշանակում է նոր բաղաբը միայն անուն է ժառանգել հնից և հնի հետ անմիջական կապ չունի:

Ք. Ք. Պետրովսկին իր մի քանի աշխատություններում այն կարծիքն է հայտնել, որ Արին-բերդում դեռևս ուրարտացիների օրով կյանքն ընդհատվել է, այն էլ ոչ թե միանգամից, հրդեհի կամ պատերազմների հետևանքով, այլ էրբերունի իր-րե բաղաբ իր նշանակությունը կորցնելու հետև-վանքով հետզհետե ամալացել է և նրա դանձրը մ. թ. ա. VII դարում տեղափոխել են Քեյշերախ-

նի ամրոցը, որն այն ժամանակ վերելք էր ապ-րում²:

Այդ տեսակետն առաջ է կնկն երկու պատճա-ռով: Նախ այն բանի հետևանքով, որ Արին-բեր-դում մի ժամանակ գտնվում էին միայն ուրար-տական վաղ շրջանի սեպագիր արձանագրություն-ներ և երկրորդ՝ Կարմիր-բլուրում պեղումներից դուրս էին գալիս էրբերունի ամրոցին պատկանող արձանագրած առարկաներ:

Նշանակում է, եթե էրբերունիում կյանքը շա-րունակվեք, այնտեղ ի հայտ կգալին նաև 7-րդ դարի և հետագայի սեպագիր արձանագրություն-ներ և էրբերունի ամրոցին պատկանող առարկա-ներ Կարմիր-բլուր չլին տեղափոխի:

Պետրովսկու այդ տեսակետը ընդառաջվեց³ և հերքվեց: Հետո ամրոցում ի հայտ եկան ուշ ժամանակի առարկաներ, մասնական ուրարտա-կան վերջին թագավոր Ռուսա էրմեննաորդու շի-նարարական բնույթի արձանագրությունը, իսկ այդ Ռուսան թագավորին է արդեն VI դարում և նրանով էլ վերջացել է ուրարտական պետությու-նը: Պեղումների ժամանակ բացվել են վաղ հայ-կական շրջանի շինքեր՝ բազմաշարուն դահլիճ (ա-պագրան), որ մինչ այդ հայտնի էր Արմենյան Պարսկաստանից, հրո տաճար, սյունադարձը սրահ և V դարին (մ. թ. ա.) պատկանող Մլիխտ բաղաբի արձանագրությունը:

Ուրարտուի անկումից հետո, VI դարում, էրբ-րունին ոչ թե լրված ու ամալացած էր, այլ նոր շինքերով էր զարդարվել, իսկ ավելի ուշ, հայկա-կան վաղ դարաշրջանում, էրբերունին, ինչպես են-թացրում են պեղողները, վարչական խոշոր կենտ-րոն էր դարձել Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան մասում և, ամենայն հավանականու-թյամբ, 18-րդ ստարապոլսյան կենտրոնն էր: Եվ այդ ենթադրությունն առանց հիմքի չէ⁴:

Մեր կարծիքով Ուրարտուի թագավորության օրերին էրբերունին և Քեյշերախին⁵ ոչ թե հակա-դրվել են միմյանց և մեկի գոյությունն ու բար-բալանումը զուգորդվել է մյուսն ավերման ու

¹ Երևանի թագաբի պատմության մի քանի հարցերի մասին, ՊՐԸ, № 1, 1969, էջ 3—14:

² Ե. Բ. Пиотровский, Ванское царство (Урарту), М., 1959, էջ 22—23:

³ Գ. А. Меликишвили, Вестник древней истории, 1963, № 3 (գրախոսական Պետրովսկու գրքի մասին): Մ. Երսր-յիլյան, Վերահիշյալ հոդվածը, էջ 103: Կ. Վաֆադարյան, Վերահիշյալ հոդվածը (ՊՐԸ, 1969, № 1) և այլն:

⁴ Մերի այլը, գիտական գրականության մեջ հիշա չեն լուսարանվում Կարմիր-բլուրի (Քեյշերախի ամրոցը) պե-ղումների սկզբնապարտության հանգամանքները: Ընդունված տեսակետն այն է, որ այդ պեղումներն սկսվել են 1939 թ.

լրման հետ, այլ ուրարտական այս երկու բերդա-բաղաբները միմյանց լծակից են եղել և միմյանց լրացրել: Եթե մեկը կորցրած լիներ իր նշանակու-

Ք. Ք. Պետրովսկու զեկավարությամբ, իսկ Կարմիր-բլուրը հայտարարել է երկրորդն Ա. Պ. Դեմիրճյան: Այդ երկու տե-ղեկություններն էլ հշտան կարիք ունեն:

Կարմիր-բլուրի հետախուզական պեղումներն սկսվել են դեռևս 1936 թվականին, առանց Ք. Ք. Պետրովսկու մաս-նակցության: Այդ թվականի պեղումների մասին հազորա-գրություններ են տպագրվել Հայաստանի լրագրերում և գի-տական պարբերականներում:

Այսպես, հազորագրություն է տպագրված «Խորհրդային Հայաստան» թերթի 1936 թ. Նոյեմբերի 18-ի համարում (266) «Կարմիր-բլուրի պեղումները» վերնագրի տակ, որի մեջ ասված է.

«Պատմության և գրականության ինստիտուտի հու-շարձանների քամճի հետախուզական էքսպեդիցիան, որը պեղումներ է կատարում երևանի մերձակայքում գտնվող Կարմիր-բլուրի վրա, Նոյեմբերի 15-ին հայտնաբերել է մի շարք հետաքրքիր հնություններ ուրարտական և նա-խուրարտական շրջանների վերաբերյալ»: և այլն: «Коммунист» թերթի Նոյեմբերի 1936 թվականի հոկտեմբերի 28-ի (243) համարում հետևանք Ե. Բալթրոպյանը գրել է.

«В настоящее время Институт истории и литерату-ры организует ряд экспедиций в район этого хол-ма (Кармир-блур—К. К.) на поиски недостающих частей вновь найденной надписи»:

Հազորագրություն է լույս տեսել նաև Պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագրի» 2-րդ գրքի մեջ (Երևան, 1937) «Հետախուզական աշխատանքներ Կարմիր-բլուրում» վերնագրի տակ (էջ 31):

Նույն «Տեղեկագրում» լույս է տեսել նաև առանձին հոդ-ված (Կ. Վաֆադարյան, Կարմիր-բլուրի նորագույն սեպագիր արձանագրությունը), որ փաստորեն 1936 թ. պեղումների հաջվածությունն է:

1939 թվականին, երբ սկսվեցին կանոնավոր պեղումները, Ք. Պետրովսկին միայն էրմիտաժի շտակի զեկավարն էր: Հովա. Օրբելու հոդվածի մեջ «Коммунист» օրաթերթում (հոկտ. 6, 1939, 231) ասված է.

«28 сентября здесь начались совместные работы археологов, выделенных Армянским филиалом Академии наук, Комитетом охраны памятников Армянской ССР и Государственным Эрмитажем. Работы будут вестись под руководством тов. К. Кафадаряна (Ереван) и кандидата исторических наук Б. Пиотровского (Ленинград)»:

1940 և 1941 թվականներին Վաֆադարյանին փոխարե-նել Ամրատ Տեր-Ավետիսյանը, իսկ պատերազմից հետո, 1945 թվականին, Պետրովսկին զարձակ պեղումների ընդ-հանուր զեկավարը: 1939 թվականի պեղումների վերաբերյալ լույս է տեսել Վաֆադարյանի հաջվածությունը (Կ. Кафа-дарьян, Раскопки Кармир-блур (1939). Предваритель-ный отчет, Պետրովսկու հաջվածության կողմից): «Տե-ղեկագրի» ԳԱ Հայկական ֆիլիալի, 1940, № 3): 1940 թվա-կանի պեղումների միացյալ հաջվածությունը լույս է տեսել Ս. Տեր-Ավետիսյանի և Ք. Պետրովսկու ստորագրությամբ: Այնպես երկրորդ խոշորին:

Հնագետներից ոման կարծում են թե Կարմիր-բլուրը

Քյունը, հագրվ թե մյուսը բարգավաճեր նրա կող-քին:

Այստեղ տեղի է ունեցել սովորական երևույթ. էրբերունի ամրոցն իր գոյության երկրորդ հարյու-րամյակի թևակոխելուց հետո նեղված էր և եղել կա-լազարի մեծանալու հետևանքով, այդ պատճառով էլ Արգիշտի Ա-ի թոռան թոռը՝ Ռուսա Բ-ն, հիմնել է մի երկրորդ ամրոց Հրազդանի ափի բաժնուր-ներից մեկի վրա և գրքի մի մասը սեպագիրով էլ այնտեղ, անհրաժեշտ գույքի հետ մեկասին:

Այս խնդրում մեծ դեր է խաղացել նաև այն, որ Ուրարտուի հյուսիսային սահմանների ամրա-պնդելը VII դարում կարևոր նշանակություն ու-նեք և շպետք է մոռանանք, որ վերջիվերջո, սկյու-թական ցեղերն այդ կողմից ներխուժեցին և կոր-ծանեցին Ուրարտական լավ կազմակերպված պե-տությունը:

Քեյշերախի ամրոցի շնորհիվ էրբերունին եր-կու կենտրոն ունեցավ և զգալիորեն ընդարձակ-վեց, մասնավառ ոչ թե Քեյշերախին իր նոր կառույ-ցվածքով ավելի հուսալի էր: Հարձակվող թշնամին սկսել էր ուժերը երկուսի բաժանել՝ երկու ամ-րոցի և երկու կալազարի զեմ պայքարելու համար, որոնք ամեն բույս պատրաստ էին միմյանց օգ-նելու:

Կարմիր-բլուրի Քեյշերախին անունը մեղ հայտնի է միայն երկու աղբյուրից: Գրանցից մե-կը բրնձեգ արձանագրած մի ձող է, կտր կարված-քով, որն իր երկու ծայրերին ունի երկու օղբը, մե-կը մեծ, մյուսը՝ փոքր: Ենթադրում են, որ այդ ձողը փոքր զսկով միացած է եղել դուսնը, իսկ մեծ զսկով թակել են դուրս: Քեյշերախին անվան երկրորդ աղբյուրը մեղ ծանոթ է 1961 թ. գտնված սեպագրի մեծ արձանագրությունից, միայն այն ստորերթվյալով, որ ձողի վրա Քեյշերախի անու-նը գրված է քաղաքի զաղափարանիչը բացահայ-

հայտնագործվել է 1936 թվականին Այդ և հիշա չէ:

Կարմիր-բլուրը վաղուց էր հայտնի և դասնցված էր իբրև հուշարձան Հնությունների պահպանության կոմիտեում:

Գեո սեպագրի գրույթը առաջ, 1936 թվականի մարտին, հետախուզական աշխատանքներ կատարեցին այնտեղ պե-ղումներ սկսելու համար:

Այդ մասին 1936 թ. հաջվածությունն մեջ ասված է. «Կարմիր-բլուրը վաղուց էր վեր հետաքրքրել է... Հու-շարձանների պահպանության բաժնին: Բլուրը ոչ միայն հաշ-վի է առնված իբրև հնագիտության համար կարևոր վայր, այլև նա իր ամրոցը շրջապատված հայտարարված է փակ հե-տախուզական շրջան (Պատմ. և գրականության ինստիտուտի «Տեղեկագրի», 1937, գիրք 2-րդ, էջ 222): Նույն տեղում գրված է, որ սեպագրի թեկորը գտել են Չարախ գյուղի աշա-կերտները:

¹ Կարմիր է եղի փոխանց գրել, գեղեցիկ, տեղը:

² Կառուցապատված չէր, կամ նշեն էր:

³ Ռուսերում Tu-uš-pa-e բառն է, որ հայերենի Տոսպ տե-ղանունն է: Այդ բառը ուրարտերենում էլ կարելի է Տոսպ աբասանել, որովհետև ուրարտական սեպագրության մեջ u և o տարբեր գրություն չունեն, ինչպես և s և š համախ փոխարինել են միմյանց: Օրբելու sar և šar, ինչպես sur և šur գրվել են նույն նշանակությամբ:

⁴ Արքին a հնչյունը կարելի է չկարգալ, այդ a-ն գրվել է, որովհետև այլ կերպ չլին կարող գրել վանկազարը: Ուրար-տական փոխառությունների մեջ, հայերենում բառերը բաղա-ձայնով են վերջանում և ոչ թե ձայնավորով (ue-tu-ni-ուրտ, Արանե-Արամ):

⁵ Արին-բերդի այս արձանագրությունն առաջին անգամ հրատարակել է Մ. Երսրյանը, տե՛ս նրա «Ուրարտական եր-կու նոր արձանագրություն» ԳԱ «Տեղեկագրի» (հաս. գիտ.), 1951, № 8, էջ 89—99: Արձանագրությունը գտնելու հանգա-մանքները նկարագրել է արշավախմբի պետ Կ. Հովհաննիսյանը (Կ. Оганесян, Арин-берд (Гамли-гана)—урартская крепость гор. Ирпуни (Версизьялы «Տեղեկագրի» Նույն հա-մարում, էջ 75—88): Արին բերդի սակ տաճարն և նրա արձանագրությունները, ԳԱ «Տեղեկագրի» (հաս. գիտ.), 1957, № 9, էջ 93—104: Երբեմնու պեղման և ծարարա-պետական հուշարձանների մասին տե՛ս Կ. Լ. Оганесян, Архитектура Эрбунуи, Ереван, 1961:

⁶ Երևանի հիմնադրման 2750-ամյակի առթիվ լույս տե-սան մի քանի աշխատությունները. Կ. Оганесян, Эрбунуи, 2750-летию основания Еревана, 1968, հայգաներ կան նաև «Сообщения» гос. музея изобразительных ис-кусств им. А. С. Пушкина, IV, 1968, Կ. Վաֆադարյան,

տիշի հետ վանկագրութեամբ, իսկ մեծ արձանագրութեան մեջ Քեյզեր ռազմի աստուծու և բազարի գաղափարագրով, առանց վանկագրի (DiM—ni URU):

Իրավացի է Ք. Պիտտոմպիին, երբ այդ արձանագրութեան գլուխին, անկասկածաբար բովանդակությունից, մեծ նշանակություն է տալիս նաև այն պատճառով, որ նրա մեջ հիշատակված է քաղաքի անունը, որովհետև բրոնզե ձող կարող էին այդտեղ բերել մի այլ վայրից և բազարի Քեյզերաբնի անունը վերաբերված մի այլ տեղի:

Մեծ արձանագրութեամբ այդ կասկածը փառատվում է և հաստատվում, որ Քեյզերաբնի Կարմիր-բլուրի անունն է:

Բրոնզե ձողի արձանագրությանը նվիրած իր հոդվածում Մ. Բարալեյանը չի բերում, որ Քեյզերաբնի բազարի հաստի անունն է: Նա գրում է.

«Ըստ երևույթի, տարբերի, ռազմի այդ աստուծու (Քեյզեր—Վ. Վ.) անունն են կրել ուրարտական սաղմուկան ամրությունները, զինանոցները, որոնք կոչվել են նաև բազարը, և օրինակ է բերում Մոսկիայի արձանագրությունը, որտեղ Ռուս Սարգուրդերին Մոսկիայի բերդն անվանում է Քեյզեր աստուծու բազար (DiM—ni URU):»

Բարալեյանի սխալ պատկերացումներն է, որովհետև Մոսկիայի զինանոց չէ, այլ ամրոց և բազար, հետևապես իրավացիորեն բազար էլ կոչվում է, իսկ զրանից հեռանցնել, թե բոլոր զինանոցներն անցյալ են կոչվել, իհարկե, անհիմն ենթադրություն է:

Ուրարտուի հյուսիսային սահմանների ապահովությունը պահանջում է ամրոցներ և զորակալաններ ունենալ այդ սահմանների մոտակ վայրերում և այդ նկատառումով էլ կառուցվել են ամրոցները Սիսիան կելի ճգնաժամի և քչնամի երկրի սահմանի մասը, ինչպես ինքը Արգիշտին է գրել արձանագրության մեջ:

Դրա լավագույն ապացույցներից մեկն էլ Արգիշտիի թագաբն է: Ըստ հորիզոնական տարիագրության, այդ թագար հիմնադրել է նույն Արգիշտին, իր թագավորության 11-րդ տարում, այսինքն 776 թվականին մեր դարաշրջանից առաջ կամ էրբունդի հիմնադրույց ընդամենը 6 տարի հետո:

Այստեղ արդեն խոսք չի կարող լինել այն մասին, որ էրբունդի կարող էր կոչված լինել իր նշանակությունը և լրված իր հիմնադրումից ընդամենը վեց տարի հետո և այդ պատճառով Արգիշտին մի նոր բազար շինեց հինի փոխարենը: Նա մասը:

Արգիշտիի շինարարական արձանագրություններ են գտնվել Արգիշտի Ա-ի և նրան հաջորդող մյուս թագավորների և անգամ վերջին ուրարտական թագավոր էրիսմենայի անունից գրված:

Արգիշտիի շինարարական արձանագրություններ կապված է եղել էրբունդու և Քեյզերաբնի հետ: Նա էլ էրբունդու նման իր գոյությունը պահպանել է նաև Ուրարտուի անկումից հետո, վաղ հայկական շրջանում, երբ բազարը կոչվեց Արմավիր: Այժմ դժվար է նրա այդ անվան մասին որևէ բացատրություն տալ, որովհետև Արգիշտիի շինարարական արձանագրության անկումից, դժվար թե Արմավիրը դառնա: Մնում է ենթադրել, որ Արմավիրը տեղի նախաորարարական տոհմական տեղանունն է, և Ուրարտուի անկումից հետո այդ հին անունը նորից վերակենդանացել է:

Պատմաճայր Մովսես Խորենացին (V դար) նշում է, որ Արմավիր թագարը հիմնադրել է Արմավանյանի որդի Արմավիրը և Արմավիրը բառն էլ առաջացած է համարում նրա անունից: Նա գրում է. «Արմավանյան իր բնակության համար առն է շինում գետի ափին մի բլուրի վրա և իր անունով այն կոչում է Արմավիր»: Մի այլ տեղում Խորենացին նշում է, որ Վաղարշակը «այս բլորից հետո՝ Արմավիրում մեհյան շինելով՝ արձաններ է կանգնեցնում արեգակին, լուսնին և իր նախնիներին»:

Տեղանունների ծագումն անձնանուններից սովորական երևույթ է եղել հնում և հիմնված է եղել ավանդությունների վրա, որոնցից առատո-

³ Արգիշտիի շինարարական արձանագրությունների մեծ մասը տեղահանված վիճակում, շրջապատի գյուղերում հայտնաբերել է Էշիմանի միտան, հնագույն Մետաք աբեալ. Մարտիանը և հրատարակել «Արարատ» ամսագրում: Արգիշտիի շինարարական տարածություն է բռնել տեղի բլուրների վրա: Այսօր այնտեղ երկու ինքնուրույն ճանաչողական արշավախմբեր են պեղումներ կատարում բլուրների տարբեր մասերում (Գավթի բլուր և նոր Արմավիր): Երկու արշավախմբերն էլ կազմակերպվել են Գիտ. ազգային ճակատային և ազգագրության ինստիտուտի կողմից:

⁴ Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, թարգմանություն և ծանոթություններ տեղագրության Մո. Մալխասյանի, Երևան, 1961, էջ 104:

¹ Н. В. Арутюнян, Новые урартские надписи, Ереван, 1966, էջ 41:

² Մ. Բարալեյան, Կարմիր-բլուրի նորագույն արձանագրությունները, Ե. Մատի անվան կարենյանի աշխատություններ, 1947, № 2, էջ 223: Գր. Կալաչյան, Халдская надпись Русы I из Калаграма: Эривань, 1931, էջ 5:

րեն օգտվել է մեր պատմաճայրը: Հասկանալի է, որ ուրարտական հին ավանդությունները հետագայում հայկական են վերածվել: Խորենացու պատմության մեջ Արագած լեռան անունը առաջացած է համարում Արմավրակից, երախ գետի անունը՝ երախից, որ Արմավիրի թուն էր, Երախալ գետի անունը՝ շատակը Երախից, Գեղամա ծովի և Գեղարուի անունները՝ Գեղամից, Սիսակներ՝ Սիսակից, Ագեղաճուր՝ Տար-Ագեղից և այլն:

Ուրարտական պետության հյուսիսային մասույցների պաշտպանության համար հիմնադրված մեղ ծանոթ երկր կենտրոնների գոյությունը Արարատյան դաշտավայրում, ինչպիսիք էին էրբունդին (հիմնված մ. թ. ա. 782 թ.), Արգիշտիի շինարարական (հիմնված մ. թ. ա. 776 թ.) և Քեյզերաբնի (հիմնված VII դարի առաջին կեսին Ռուսաբ-ի օրով) բացատրվում է նաև նրանով, որ Արարատյան դաշտավայրը բարեբար է եղել և նպաստավոր բազարների և զորատեղանքների համար:

Այս դաշտավայրը կարող էր ուսեստեղենով ապահովել բազարների բնակիչներին, կերով՝ ձիերին և անասուններին: Գաղափարի բարեխառն կիրման էլ նպաստավոր էր ձեռնարկ համար: Հետագայում էլ հռոմեական զորքը ձեռնարկ էր Արարատյան դաշտում (Արտաշատ, Վաղարշապատ), ինչպես և հայոց զորքը միջին դարերում Արարատյան դաշտի նոր կենտրոնում՝ Գլինում:

VI դարի հույն մատենագիր Պրոկոպիոս Կեսարացին գրում է.

«Պուլին (Գլին—Վ. Վ.) շատ բերրառատ երկիր է, ունի բարեխառն օդ և լավ ջուր... Այստեղ դաշտերը հարթ են և հարմար ձիավարության»:

Արարատյան դաշտավայրն իրեն է ձգել մարդուն դեռևս ուրարտական էրբունդի և մյուս բազարների հիմնադրումից շատ ու շատ առաջ: Մեր այս ասածի ապացույցները մի շարք հնավայրերի գտնվելու են այնտեղ, որոնց հնությունը հասնում է մինչև 5-րդ հազարամյակը մ. թ. ա.: Այդ բնակավայրերի թվին են պատկանում Երեք-բլուրը, Մոխրաբլուրը, Շենգավիթի հնագույն բնակա-

վայրը, Գլինի միջնաբերդի հնագույն բնակատեղի և շատ ուրիշներ:

Այս տիպի պղնձեղարան բնակատեղիների լավագույն օրինակը երևան բազարի այժմյան սահմաններում գտնվող Շենգավիթի հնավայրն է, որը պեղվել է 1936—1938 թթ. և երկար ընդմիջումից հետո պեղումները վերստին են 1958 թ.:

Երևանի երկաթուղային կայարանի մոտ գրեթե զրոյի Մոխրանախ-թափա բլուրը, որտեղ ի հայտ էր եկել բրոնզեդարան և վաղ երկաթեդարան բազմաշերտ բնակատեղի, ուսումնասիրվել է 1935 և 1936 թթ.:

Երևան բազարի սահմաններում, Հրազդանի ձորաբերանին աջ ափին, 1968 թ. ի հայտ եկավ բարեկարգյալ մնացորդներով հարուստ մի քաղաք, որի ուսումնասիրությունը և պեղումները կատարել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կոմպլեքսային արշավախումբը 1968 և 1969 թթ. ընթացքում (ղեկ. պրոֆ. Բ. Մարտիրոսյան, պեղումները կատարել է Ք. Երիցյանը): Այստեղ գտնվել են 20.000-ից ավելի իրեր՝ բարեկարգված (ձեռքի հասիչներ, ատամնավոր կրակներ, նետասլաքներ և նիզակներ, սարածայր գործիքներ, բերիչներ, բրինձեր, կոկիչներ, ծաղիկներ), միջուկներ և ցիպակներ: Ետև են նաև կենդանիների մնացորդներ: Գտնվել են ռեզիդուցիայի, ինչպիսիք են, եղջերուի, աքիցի, գալի, աղվեսի, ցիխի, վայրի ձիու, ինչպես նաև թռչունների և կրծողների ոսկորներ:

Այդ այրի մեջ մարդը բնակվել է երկար ժամանակ, որպես ստացային շրջանում, միջին հին բարեկարգում (Մուստիկ), որն սկսվել է մոտավորապես 80.000 տարի առաջ և տևել է մոտ 40.000 տարի: Նման բարայրեր կան նաև Հրազդանի կիրճի երևանամերձ տեղերում, որոնց ուսումնասիրությունը կատարվելու է առաջիկա տարիներին:

Այս ուղղությամբ կատարվող ուսումնասիրություններից մեծ սպասելիքներ ունի Հայաստանի հնագիտությունը:

Երբունդի ամրոցը դեռևս ուրարտացիների ժամանակ իր ստորտան, հարթավայրի վրա, ունեցել է ընդարձակ բազար, որն առայժմ մեզ

¹ Հռոմեական 15-րդ Ապոլոնիայի լեզնոնը մեծում էր Վաղարշապատում (К. В. Тревер, Очерки истории культуры древней Армении, М.-Л., 1933, էջ 264), իսկ Սիսակական կոչվող 4-րդ Լեզնոնը՝ Արտաշատում (Ք. Ասրիլյան, Լուսինյան արձանագրությունների Արտաշատ մայրաքաղաքից, ՊԲ, 1967, № 4, էջ 302—311):

² Прокопий Кесарийский, История войны римлян с персами, СПб., книга вторая, էջ 181—182:

³ Ի պատիվ Երևանի բազարային տեղի, պետք է ասենք, որ այդ երկու վայրերի, ինչպես նաև այլ տեղերի պեղումները բազարի սահմաններում կատարվել են նրա արածարած գրամական միջոցներով, այդ նույն վայրերում չեն բեր կատարելուց առաջ:

⁴ 2. Ա. Մարտիրոսյան, Հայաստանի նախնադարյան մշակույթի նոր հուշարձաններ, ՊԲ, 1969, № 1:

⁵ 4. Արաբաբաբյան, Հնագիտական աշխատանքը Հայաստանում Մովսեսիան շրջանում, ՊԲ, 1970, № 3:

Հայտնի է միայն պատահական գլուխների միջոցով, ուստի և ուրարտական այդ բազաբի սահմաններն ու նրա բնույթը դեռևս անձանոթ է, չնայած այն բանին, որ իր ամբողջ հետ միասին նա է հիմք հանդիսացել Երևանին:

Սակայն ընդհանուր գծերով մեղ լավ հայտնի է, որ Արին-բերդը հետագայում բազաբից դուրս է մտնացել, որովհետև նոր շենքերի կառուցումը բազաբի միայն մի կողմի վրա է շարունակվել, իսկ մյուս կողմում, որտեղ Արին-բերդի ամբողջ է եղել, բազաբը չի նորոգվել և հետզհետե հին շենքերը բանդվելով՝ այդ տարածությունները դաշտերի են վերածվել: Այլ կերպ ասած, բազաբը Արին-բերդից տարածվել է դեպի Մուխամանթ-թափա, այնտեղից էլ ուղղվել դեպի Կոնդ:

Այս տեղաշարժի հետևանքով բազաբի կենտրոնը մեր թվականությունից առաջ III—II դարերում արգեն փոխադրվել էր Հին երևան կողմից թաղի և Կոնդի սահմաններին մոտիկ: Այդ են վկայում բազաբի այդ թաղերում հողային աշխատանքների ժամանակ գտնված սելևկյան, հունական, հռոմեական և պարթևական դրամները, իսկ ավելի հին դրամներ, ինչպես ասել ենք, գտնվել են Արին-բերդում: Նույնն են մատնագույց անում շինարարության հետ կապված հողային աշխատանքների ընթացքում ի հայտ եկած կարասային և ուշ բարբարկային թաղումները, որոնք բոլորն էլ պատկանում են մեր թվականությունից առաջ III դարից մինչև մեր թվականության III դարին: Այսպես օրինակ.

Փողոտան (Պեսական օպերայի) հիմքերը փորելիս, Գեթանմանի մատուռի տակ ի հայտ եկավ մեր թվականության առաջին կամ երկրորդ դարին պատկանող կարասային թաղում: Հետագայում և նման դամբարաններ գտնվեցին նրա մոտերում, բավականին մեծ խորությամբ (2,5—3 մ) մեջ: Կոնդի՝ դեպի Հրազդան գետի կողմի լանջին, հողային աշխատանքների ժամանակ, 1932 թ. բազմաթիվ ենդ ու երկար պարարկաց դամբարաններ բացվեցին, որոնք պատկանում էին քրիստոնեության վաղ շրջանին՝ IV—V դդ.:


Մոսկովյան փողոցի Կոնդի փնջերով անցնող մասերում 1967 թ. բանվորները հնագիտական ա-

ռարկաների հետ միասին գտել էին նաև առաջին դարին պատկանող պարթևական արձանից հրամ: 1929—1930 թթ. և հետագա տարիներին Ավանի ճանապարհին (Նորի ձոր) բացվեցին բազմաթիվ դամբարաններ, որոնց մի մասի թաղումը կատարված էր ուղղակի տուֆի շերտի մեջ՝ երեսները շերտաբարով ծածկված: Այդտեղ կային նաև կարասային թաղումներ, որոնք պատկանում էին մեր թվականության առաջին կամ երկրորդ դարերին: Կարասային թաղումներ ի հայտ եկան նաև Երևանի հարավ-արևմտյան թաղերում, Կալինինի փողոցի վրա:

Այս բոլորը վկայում են, որ Երևան բազաբը մոտ 6—7 հարյուր տարիների ընթացքում, մի կողմի վրա տարածվելու հետևանքով, եկել-հասել էր Կոնդի սահմաններին, իսկ ավելի ուշ, մեր թվականության IV—V դարերում, բազաբի կենտրոն էին դարձել Կոնդի իբրև Միջնաբերդ, Հին երևան (Շահար) կողմից թաղը, մտավորապես այժմյան Պես. օպերայի, Մոսկովյան կենտրոններին, Կաթողիկե եկեղեցու (Արտվանի և Սալաթ-Նովայի փողոցների հատման տեղում) միջև ընկած տարածությունները: Կուլտուրայի տան տեղը կենինի հրապարակի հետ միասին, ինչպես նաև Արարատ գործարանի իր մերձակա տարածությունը, բազաբից դուրս ամառի վայրեր էին կամ դերեղմանոցներ:

Այսպիսով, եզրակացնում ենք, որ էրեբունին հին Երևանն է՝ որն անընդհատ, առանց խափանման, մշտապես գոյություն է ունեցել, բայց մի կողմից շինվելով և հակառակ կողմից անխնամ և առանց կառուցումների մնալու հետևանքով հետարգհետե եկել մոտեցել է Կոնդին և կանգ առել: Տեղաշարժման այդ ընթացքը կանգ է առել մեր դարաշրջանի մտավորապես IV դարում: Քաղաքի այդ մասում էլ կառուցվել են մեզ ճանաչ միջնադարյան հուշարձանները, որոնց մասին խոսք կլինի սուրբ:

¹ Միջնադարյան վրացական աղբյուրներում Երևանը կոչվել է ուրարտական անվան մոտիկ էրեունի (տե՛ս Ն. Մուխոմբի-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր 9, Երևան, 1955, էջ 16, 18):



Գ. Լ. Ա. Խ. Ե. Բ.

ԵՐԵՎԱՆԻ ՄԻՋՆԱԳՐԱԲԱՆ ՀՈՒՆՈՐԱՆՆԵՐԸ

Երևանն ունի մի խումբ միջնադարյան հուշարձաններ, որոնք մինչև այժմ գիտությունը բիշ են ծանոթ: Նրանց մասնագիտական ուսումնասիրությունը ոչ ոք չի զբաղվել: Այդ պատճառով էլ հրատարակությունների մեջ բազմաթիվ լիակերպ կան, որոնք անվերջ կրկնվում են նաև մեր օրերում:

Երևան բազաբի հուշարձաններից շատերը ծանոթ են միայն մատենագրության մեջ պատահականորեն հիշատակված տարեթվերով:

Անտեղյակ լինելու հետևանքով երբեմն հարյուրավոր կիրմեաբեր Երևանից հեռու գտնվող հուշարձաններ վերագրվել են նրան: Օրինակ հ. Ղ. Այվազյան իր մեծածավալ «Այլարատ» աշխատության մեջ Հաղատավանքի Անապատը ներկայացրել է իբրև «Անապատի եկեղեցի լճերան», կամ պարսկական մի դամբարան՝ իբրև «Աշտարակի Երևանայ»¹:

591 թվականին հակաթոռ կաթողիկոսության կենտրոն դարձած Ավանի տաճարի կառուցումը վերագրել են VII դարին, ոմանք VII դարի առաջին տասնամյակին², իսկ ոմանք էլ VI դարի վերջին և VII-ի սկզբին³:

Ինչպես կարելի է 591 թվականին գործող տաճարի կառուցումը վերագրել ավելի ուշ ժամանակի, մասնավորապես որ հայ ճարտարապետության պատմաբան Թ. Թորամանյանն Ավանի տաճարը

վաղուց անտի անվանել է «6-րդ դարու հարազատ շինություն»⁴:

Նա իր այդ տեսակետը չի հիմնավորել, հավանաբար այդ է պատճառը, որ այժմ էլ շատերը շարունակում են Ավանի տաճարի կառուցումը վերագրել VII դարին: Այսպես օրինակ, «Всёобщая история архитектуры» բազմամասնոր աշխատությունը հայկական ճարտարապետության վերաբերյալ բանում (հեղինակ Հովհ. Խալիվալյան) Ավանի տաճարի շինությունը վերագրված է 589—609 թվականներին:

Գեո ախոր էլ մեր մամուլում լույս են տեսնում սխալ տեղեկություններ և աղաքրվում են Երևանի շվեդաբերդը լուսանկարներ⁵:


Սուրբ հերթականությամբ համառոտակի կրկնվողները Երևան բազաբի այսօրվա սահմանների մեջ գտնվող միջնադարյան հուշարձանները:


Ս. ԿԱՌՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ

(Տե՛ս եկ. 1—17, գծ. 1—7)


Կաթողիկե կառուցված է Երևան բազաբի կենտրոնական մասում (այժմ Արտվան փողոց № 15): Այդ թաղի առաջ կոչվել է Հին թաղ, իսկ ավելի վաղ՝ Ծհար (բազաբ, բուն Բաղափ իմաստով): Այդ թաղում, ինչպես հարդրում է Հովհ. Շահաթրյանյանը, հնում հայերի հետ ապրել են

¹ «Այլարատ», Բնաշխարհ Հայաստանեայց, հ. Ղ. Այվազյան, Վենետիկ, 1890, էջ 304 և 312:
² Գ. Մ. Կաթողիկոսյան, Разыскания по армянской архитектуре, Тбилиси, 1967, стр. 37.
³ Ա. Լ. Կոնյակ, Очерк истории зодчества Армении V—XVII веков. М.—Л., 1950, стр. 21.
⁴ Թ. Թորամանյան, Նյութեր հայ ճարտարապետության պատմության, Ա զրբ, Երևան, 1942, էջ 71:
⁵ «Всёобщая история архитектуры», том 3, Л.—М., 1966, стр. 217.
⁶ «Ներկայան Երևան» օրաթերթ, 1968 թ. հոկտեմբերի 14, № 242, «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, 1968 թ. նոյեմբերի 27, № 48:





1. Կաթողիկէ եկեղեցու Հատակագիծը, ավագ խորանի տեղում Աստվածածին եկեղեցին
Չափազրոյթուն՝ Տարագրոսի:



2. Կաթողիկէ եկեղեցու կտրվածքը երկրորդ վայրէ, ան ծալքի Աստվածածին եկեղեցին
Չափազրոյթուն՝ Տարագրոսի:

փորք թվով նաև մասնակալաններ (ազրբեչանցիներ):

Կաթողիկե եկեղեցին կառուցված էր 1679 թ. երկրաշարժի ժամանակ կործանված հին եկեղեցու տեղում, ուղղանկյուն բառանկյունի մեծ շինություն էր, ուներ չորս հաստահեղույս սյուներ և արտաքին պատերի վրա նստած երկթեք տանիքով թաղակալ ծածկ: Ներքին չորս սյունների միջոցով դահլիճը բաժանված էր երեք թաղի, որոնցից միջինի կենտրոնում գտնվում էր անհամապարփուն փորքի մի գանգակատուն:



Նկ. 1. Կաթողիկե եկեղեցու ան պատը, կենտրոնական մասում երևում է Աստվածածին փորք եկեղեցու ան պատը:

Եկեղեցին կառուցված էր մաքուր տաշված սուֆր բարով և զարմանալին այն էր, որ նրա սեղանը շենքի արևելյան ծայրին առանձին գմբեթ ուներ, որը կիսով չափ թաղված էր մեծ դահլիճի պատերի և ծածկի մեջ:

Տարօրինակ և անբնական էր նաև տաճարի արևելյան պատի արտաքին տեսքը. նա ուներ երեք մասի բաժանված ճակատ, որոնցից կենտրոնականը վերաբերում էր եկեղեցու սեղանին, իսկ երկու կողմերն էր աջ և ձախ կողմերի ավանդաաներին:

Արևելյան պատի կենտրոնական մասն ուներ երկու խորշ: Այդպիսի խորշեր ունենում են առանձին եկեղեցիները, երբ նրանց պատերի ներսում

առաջանում են մեծ զանգվածներ և պատերը ավելորդ զանգվածներից ազատելու համար խորշեր են ձևացնում: Բացի այդ, արևելյան պատի կենտրոնական մասը կիսազլան երկաղծեր ուներ, որոնք նրան առանձնացնում էին նույն պատի երկու ծայրամասերից: Այդ բաժանումը նկատելի էր նաև բարերի շարվածքի ձևի և բարձրության մեջ: Երկու ծայրերը տարբերվում էին կենտրոնական մասից:

Այս բոլորից կարելի էր եզրակացնել, որ Կաթողիկեի արևելյան պատի կենտրոնական մասը հին է, իսկ կողքի մասերը՝ հետագայրյան հավելվածք:

Այդ տեսակետին հակասում էր միայն ավագ սեղանի պատահանը, որ լայն էր և ուղղանկյուն տեսք ուներ: Նա բոլորովին նման չէր միջնադարյան նեղ ու երկար պատահաններին: Սակայն, պատահանի բացվածքի ձևից պարզ երևում էր, որ այն նախապես եղել է միջնադարյան սովորական նեղ ու երկար լուսամուտ, բայց հետագայում «այժմանականացվել» է լայնքն ավելացնելու միջոցով: Անբնական էր ու տարօրինակ նաև սեղանի ներքին տեսքը. փոխանակ սովորական սեղանների նման կիսաբոլոր տեսք ունենալու, բարդ էր ու առաջ ընկնող մասերով անսովոր ձև ուներ:

Վաղուց էին նկատել Կաթողիկեի այդ անսովոր ձևերը, բայց խորամուխ չէին եղել հասկանալու նրանց առաջացման պատճառները:

Շահախախտությանցը ևս ուշադրություն էր դարձրել սեղանի տարօրինակ ձևի վրա: Նա գրել է, որ Կաթողիկեն մեկն է երևանի Հին թաղի (Շարի) եկեղեցիներից՝ «Կառուցեալ ի վերայ շորից հիւսածու սեանց», օրոցաձև, ունի զմի և եթ սեղան յանուն սրբուհւոյ աստուածամանի, որոյ կամաւայարկն փոքր ինչ խորագոյն երկայնեալ ընդ արեւես, քարակերտ կարողիկն կրկին ի վերայ սեղանոյն և ի վերայ տանեաց նորին»²:

Նկատելով այլևս եկեղեցու այդ անսովոր ձևերի վրա ոչ որ ուշադրություն չէր դարձրել և միայն ճ. Շահազիզն է գրել հետևյալը.


«Վեցերորդ հնությունը Շարի «Կաթողիկե» կաշված ս. Ածածին եկեղեցին է, որ հիշում է Շարգեներ, կոչելով «Կաթովիկ»: Գա կործանված լինելով 1679 թվին, վերաշինվել է 1693-ին, ինչպես ցույց է տալիս արևմուտ»¹:

¹ Չիսաձոյ սին տակով՝ Շահախախտությանցը հասկանում է մույթ, որ բազմաթիվ քարերով է շարված:

² «Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւաւացն Արարատայ, աշխատարութեամբ Յովնանու Լեւ. Շանխարունեաց, հասոր Բ, Էջմիածնի, 1842, էջ 141:

յան պատի ճակատին հաջորած մարմարին խաչարարի վրա փորագրված համարտտ արձանագրության թվականը — «Յիշատակ է խաչս Օհաննիսի որդի Աղաճալին թվ. Թճևթ—1693»: Վերաշինության ժամանակ սակայն, ինչպես երևում է, դա բոլորովին կործանված չի եղել և վերաշինվել է, բայց երևելի է, չնի՞ստ և ո՞՞նով, չնի՞ մնացորդների վրա»:

Այս բոլորն առիթ ծառայեցին, որպեսզի 1935 թվականին, երբ երևանի վիճակահան արձանագրությունների ժողովածուի համար նյութեր էին հավաքում, ուշադրություն դարձնենք տաճարի այդ տարօրինակությունների վրա: Պարզվեց, որ իրոք Կաթողիկեի մեջ փորքի եկեղեցի կա հին ժամանակներից մնացած, բայց հայտնի չէր, թե այն ինչ չափով է պահպանվել և իրենից



Նկ. 2. Կաթողիկե եկեղեցու քանդվող հետագայրյան գանգակատունը և հր պատը:

Այնուհետև Շահազիզը գրում է, որ Կաթողիկեի «արևելյան պատը, որ խոր, գեղի արևերը երկարացած սեղանի և դրա վրա բարձրացող գմբեթի հետ միասին հիշեցնում է մեզ մեր ԺԳ դարի եկեղեցիները, իսկ շինության ոճով ոչ մի բանով չի նմանվում, չի կապվում դիմավոր շինության հետ»¹:

Թեև Շահազիզը Կաթողիկեն անվանում է ս. Աստվածածին, բայց Շահախախտությանցի գրածից պարզ երևում է, որ Աստվածածին անունը հատկացված է եղել միայն սեղանին և դա նույնպես անսովոր է հայ եկեղեցուն: Սեղանները եկեղեցուց տարբեր անուն կարող են ունենալ, երբ մի բանի սեղաններ կան եկեղեցում, իսկ երբ միայն մի սեղան է, նրա առանձին անունն անսովոր է:


Ինչ է ներկայացնում: Հայտնի էր նրա միայն ներքին հատակաձևը:

Եկեղեցու արևմտյան ճակատին կար մի հիշատակություն՝ 1693 թվականին պատկանող, և այդ թվականը համարվում էր մեծ եկեղեցու շինության տարեթիվը:


Շահախախտությանցը գրում է, որ Կաթողիկեն շունէր արձանագրութիւն շինութեանն որպես և միս եկեղեցիք բաղաբիս, այլ գտանի ի ճակատ արևմտյան որմոյն արտաբուստ թուական հայոց Թճևթ (1693), ոչ միայն սա, այլև միս եկեղեցիք և այլ շէք մղկթաց և պանդոկաց և այլն, շինեցան զկնի մեծի երկրաշարժութեանն զիպելոյ յամի 1679, յորում միջոցի որ ինչ շինուածք էին յառաջնոց կործանեցան իսպառ»²:

¹ Երկանց Շահազիզ, Հին երևանը, երևան, 1931, էջ 207:

² «Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի...», հասոր Բ, էջ 141:



ԿՏՐՎԱԾՔ Ա-Բ



ՇԻ ԵՐԵՎԱՆԻ ՎԱՍՏԱՎԱԾԱԾԻՆ ԵԿԷՂԵՑՈՒ ՀԱՏԱԿԱԾՔԻ և ամ-ան կորովածքը:
Չափազորություն՝ 9/16 ուսանդների, զծաղրեց՝ 2. Գապարչյան:

3. Նորահայտ Աստվածածին Եկեղեցու Հատակածքը և ամ-ան կորովածքը:
Չափազորություն՝ 9/16 ուսանդների, զծաղրեց՝ 2. Գապարչյան:



Այդ թվականը իրոր վերաբերում է եկեղեցու շինությունը: Սակայն անհրաժեշտ է մի փոքրիկ ուղղում, կամ ավելի լավ է ասել, ճշտում մտցնել այդ խնդրում:

Մեծ զահլիճի պատերի մեջ կային մի բանի փոքրազիր խաչքարեր, որոնք կրում են 1694 և 1695 տարեթվերը (արձ. 17, 18, 22, 255): Կարծում ենք, որ 1693 թվականին սկսված շինարարությունը շարունակվել է նաև հաջորդ 1694 և 1695 թվականներին: Մի տարվա ընթացքում անհնար էր կառուցել այդ մեծ շենքը:

Մեծ երկրաշարժից հետո Երևանի, Քանաքեփի, Էջմիածնի, Արտաշատի շրջանում և շատ այլ տեղերում վերաշինած եկեղեցիները միևնույն կառուցվածքն ունեն և իրարից տարբերվում են միայն շափերով և զանազան մանրամասնություններով: Բոլորն էլ իրենց արտաքին տեսքով և բնօրինակից ճարտարապետությանը բոլորովին հրապուրիչ չեն և միջնադարյան ավելի վաղ ժամանակների ճարտարապետության համեմատությամբ շատ բանով ետ են մնում:


Ավելին էլ չէր կարելի պահանջել: Մոտ կրկն հարյուր տարվա զաղարից հետո, մի փոքր հնարավորություն էր ստեղծվել շինարարության համար, բայց չկային հին վարպետները, իսկ սովորական տներ կառուցող մարդիկ հաղիվ այդքան վարպետություն կարող էին ունենալ:

XVII դարի կառուցվածքներից հայկական ճարտարապետության մեջ աչքի են բնկնում Մուղնու ս. Քևոզ եկեղեցին, Խոր Վիրապի տաճարը, Կարսի վանքը և մի բանի ուրիշները: Եթե XVII դարի վերջին սկսված վերելքը շարունակվեր XVIII դարում, նա նոր բարձունքների կհասներ, բայց բաղադրական անբարենպաստ պայմանները խանգարեցին դրան:

* * *

1936 թվականի վերջերին, Երևան քաղաքի նոր հատակագծի և փողոցների բարեփոխության նախագծի համաձայն Կաթողիկե եկեղեցին ընկնում էր կառուցվելիք շենքերի տեղում: Այդ պատճառով հարց ծագեց նրա բանդման մասին: Սակայն, որպեսզի բանդման ընթացքում որևէ կարելիոր բան չփչանա, Երևանի քաղաքային խորհուրդը 2002 պատմության և զրականության ինստիտուտին դիմեց թույլատվություն ստանալու համար: Ինստիտուտը բանդումները շարժելից և թույլ տվեց, բայց պայման դրեց, որ բանդումները կատարվեն հնագետի ամենօրյա հսկողության ներքո, որպեսզի որևէ կարևոր բեկոր չկորի և չփչանա:

Այն ժամանակ վերահիշյալ ինստիտուտի կազմի մեջ էր գտնվում նաև Պատմական հուշարձանների պահպանության մարմինը, որը և տողերիս արդին նշանակեց այդ բանդումների հսկիչ-լիազոր:




4. Նորահայտ Աստվածածին եկեղեցու հա հատար:
Չափազորություն՝ 9/16 ուսանդների, զծաղրեց՝ 2. Գապարչյան:

Մեր պարտականությունների մեջ էր մտնում օրվա բոլոր ժամերին հետևել բանդումներին և եթե ի հայտ դային արժեք ներկայացնող բեկորներ կամ շենքերի մասեր՝ ապահովել նրանց պահպանությունը:

Բանդումներն սկսվեցին դեկտեմբեր ամսին և տեղեցին մինչև հաջորդ տարվա մարտ ամիսը: Այդ բանդումները թեև կրկնակի կերպով երկար տեղեցին հաճախակի մեր դրած արգելքների պատճառով, բայց Երևան քաղաքին պարզեցին միջնադարյան զեղեցիկ մի հուշարձան, մի բանի կարևոր արձանագրություններով, որոնցից Երևանը

զուրկ էր 1679 թ. մեծ երկրաշարժի պատճառով: Դեռ բանդումների սկզբին պարզվեց, որ տաճարի ան պատին գծագրվող փորրագրի եկեղեցու հր և հս պատերի արտաքին երեսները ևս պահ-



5. Նորահայտ Աստվածածին եկեղեցու ան ճակատը: Չափագրություն՝ ՊԻ ուսանողների, գծագրեց՝ Հ. Գապուրյան:

պահվել են տեղում և, որ զլխավորն է, ակներև զարձակ, որ սեղանի զլխին կառուցված գմբեթն էլ այս փորր եկեղեցու գմբեթն է և կապ շունի 1693—1695 թթ. կառուցած մեծ դահլիճի հետ: Ի հայտ եկան նաև փորր եկեղեցու հր և հս պատերի լուսամուտներն իրենց նախնական վիճակում նեղ ու երկար՝ ներսի կողմում անկյան տակ երկարող և լայնացող զրուվյամբ:

Հետաքրքիր էր տեսնել, թե սեղանի վերածված փորր եկեղեցու արտաքին պատերը ինչ տեսք ունեն և նրանցից ինչ է պահպանվել: Այդ էլ հնարավոր եղավ պարզել առանց այդ մասերը բանդելու:

Մեծ եկեղեցու հր-ան ավանդառան միջին մի անցք կար, որով կարելի էր բարձրանալ եկեղեցու կուսրը: Այդ անցքի մի տեղում երևում էր փորր եկեղեցու հր պատի արտաքին երեսը, որտեղ երկվում էր մի արձանագրության մասերը՝ եղան, Սահմադին և հողով ջրով բառերը, պատը բանդելուց առաջ, արձանագրության այդ բառերով էլ որոշվեց նրա ժամանակը:

Սահմազնի արզեն հայտնի արձանագրությունները պատկանում էին հնագույնը 1263-ին, իսկ վերջինը 1291-ին: 1295 թվականի մի արձանագրության մեջ հիշատակվում է ոչ թե Սահմազինն ինքը, այլ նրա թոռ Բեսուխան: Նշանակում է Երևանի նորահայտ արձանագրությունը բոլոր զեպրերում պատկանելու էր XIII դարի երկրորդ կեսին, հետևապես եկեղեցին ևս պատկանելու էր ամենատար արդ դարին:

Միջնադարյան կանգուն հուշարձաններից զրկված Երևանի համար այս փորրիկ եկեղեցին կատարյալ հայտնություն էր, ուստի և հարց բարձրացվեց այդ հուշարձանն ընգմիշտ պահպանելու վերաբերյալ:


Ինստիտուտը խնդիրը պաշտոնական հողի վրա դնելու համար մասնագիտական հանձնաժողով նշանակեց, որի անդամներից ոմանք տարբեր կարծիքներ հայտնեցին¹, բայց ինստիտուտի գիտական խորհուրդը միաձայնությամբ որոշեց կաթողիկեի հետադարյան հավելվածները բանդելու և հնագույն եկեղեցին պահպանելու մասին:

Շուտով Երևանի բաղարային խորհուրդը, հանրապետության ղեկավար մարմինների համաձայնությամբ, որոշեց կաթողիկեի փորրագրի նորահայտ եկեղեցին, իբրև պատմության մեծարժեք կոթող պահպանել տեղում, վերանորոգել վնասված մասերը և բարեկարգել շրջապատը²:

Երևանի Քաղաքային խորհուրդը շինարարական մարմիններին առաջարկեց նոր կառուցվող

¹ Հանձնաժողովը կազմված էր երեք հոգուց, նրա կազմի մեջ էին բացի մեկանից նաև հնագետ Սեդրակ Բարխուդարյանը և պրոֆ. Աշխարհբեկ Քալանթարը: Վերջինս այն կարծիքն էր հայտնում, որ երկրաշարժից հետո կառուցված մեծ եկեղեցին պատկանում է V դարին, թեև այդ կարծիքն այն ժամանակ էլ արզեն հերքված էր, որովհետև մեծ եկեղեցու պատերի միջից և նույնիսկ հմբեկից, զուրս էին եկել ուշ ժամանակի բազմաթիվ բեկորներ:

² Ինստիտուտի գիտական խորհուրդի կազմում էին գանդվում այն ժամանակվա բոլոր անվանի գիտնականները: Մասնակ Արևիյան, Հուշյա Անտոյան, Քաղեսու Ավգուրեյան, Ասատուր Խաչատրյան, Գրիգոր Դավանցյան, Հակոբ Մանուկյան, Արսեն Տեռտեյան և ուրիշներ: Խորհուրդի նախագահն էր ինստիտուտի գիրեկտոր Չեռի Գաբրիելյանը:



ԱՐԵՎՍՏՅԱՆ ԵԿԿՍ



6. Նորահայտ Աստվածածին եկեղեցու ամ ճակատը: Չափագրություն՝ ՊԻ ուսանողների, գծագրեց՝ Հ. Գապուրյան:

շենքերի նախագծերի մեջ համապատասխան փոփոխություններ կատարել նորահայտ հուշարձանը տեղում պահպանելու համար: Այդպես էլ եղավ: Կաթողիկեի նորահայտ փոքր եկեղեցին,



Նկ. 3. Կաթողիկե եկեղեցու և պատի ուշ ժամանակի մասերը՝ բանդելու միջոցին:

Տնում կոչվել է Աստվածածին, այդ է պատճառը, որ հետագայում մեծ եկեղեցու համար սեղանի վերածվելուց հետո էլ իր այդ անունը պահպանել էր: Այդ տաճարը ներսից և դրսից երեսապատված է սրբատաշ տուֆ բարով, ըստ որում ներսի բարերը շատ ավելի ողորկ են և կարերի հորիզոնական եղրագծերը պահպանելու համար անկյունափոր սառչվածք ունեն:


Աստվածածին փոքր տաճարն արտաքինից ուղղանկյուն բառանկյունի հատակաձև ունի, իսկ ներքուստ՝ բարդ եղրագծեր և եկեղեցու նախ կողմի կիսաբուրյր սեղանը մի կողմ թողնելով, մնացածը երկու կողմերից առաջ եկող երկու զույգ սրմնամուկների շնորհիվ առաստաղի վրա բառակուսի բացվածք ունի, որի վրա էլ նստած է արտաբուրյր բաղձանիսա և բեկրեկլալ կոն ունեցող գմբեթը:

Աստվածածնի իսկական լուսամուտները պահպանվել են հր և հս պատերի կենտրոնական մասերում: Մեկն էլ մնացել է գմբեթի ամ երեսին, որ մեծ եկեղեցու շինություն ժամանակ փակվել էր և չէր երևում: Դրանք նեղ ու երկար են և զիլներին պակաս ունեն: Տաճարի մյուս պատու-

հանները հետագայում ձևափոխել են և լայնացրել:

Աստվածածնի ամ պատը չի պահպանվել: մեծ եկեղեցին կառուցելու ժամանակ նրա ամ պատի կենտրոնական մասը վերևից ներքև լայն բացվածքով բանդել են, սրպեսզի մեծ դահլիճին նա ծառայի իբրև սեղան, բացի այդ, Աստվածածնի ամ պատի հս և հր անկյունները վերևից ներքև բանդել են և նրանց տեղում մեծ եկեղեցու համար սրմնամուկներ են կառուցել: Այդ բանդումների հետևանքով ոչնչացել են Աստվածածնի արձանագրություններից շատերը: նրանցից մնացել են իրենց իմաստի մեծ մասը կորցրած մնացորդներ:

Այժմ, Քման տաճարների օրինակով, կարող ենք թղթի վրա վերակազմել Աստվածածնի ամ պատի տեսքը գրեթե անխաղ կերպով, բայց այդ պատին եղած բազմաթիվ արձանագրությունները, ինչպես նաև հս և հր պատերի ամ ծայրամասերի արձանագրությունները, որոնք այդ բանդումների ժամանակ ոչնչացել են կամ եղծվել, այլևս անհնարին է վերականգնել:



Նկ. 4. Կաթողիկե եկեղեցու ներսում բանդման ընթացքում ի հայտ եկած սրմնակարերի ավազ սեղանի մասերում:

Աստվածածնի եկեղեցին իր ամ պատի վերին մասում, ֆրոնտոնի տակ ունեցել է նեղ ու երկար մի պատուհան, իսկ ներքևում՝ կիսաբուրյր ճակատակալ բարով փոքրիկ մուտք: Հավանաբար ճակատակալ բարի վրա էլ եղել է կառուցման արձանագրությունը: Ինչպես երևում է մնացորդներից, հուշարձանի այդ պատի վրա են եղել կենտրոնացված նվիրատվական և այլ բնույթի արձանագրությունների մեծ մասը:

Այժմ Աստվածածնի եկեղեցու պատերի անկյունները, ծածկի սալերը և գմբեթը վերանորոգված են, տաճարի ներսի գաջի սվաղը հանված, 1693—1695 թթ. հավելվածներից մնացել է ամ



Նկ. 5. Կաթողիկե եկեղեցու ավազ սեղանի տեղում ի հայտ եկած Աստվածածնի փոքրիկ տաճարը պեղման ընթացքում, նկարված ան կողմից:



Նկ. 6. Կաթողիկե եկեղեցու միջից ի հայտ եկած Աստվածածնի փոքրիկ տաճարը հր-ան կողմից:

մուտքի մեծ բացվածքի կամարը, որ շատ է խանգարում հուշարձանի արտաքին ամբողջությունը:



Նկ. 7. Նորաշայտ Աստվածածին եկեղեցու դմբեր և ծածկի մասերը:

Ինչպես ամենուրեք, այնպես էլ այստեղ, հուշարձանի շրջապատի զետիկներ բազմաթիվ շինությունների և բանդուամների հետեանրով դարերի բնթացրում բարձրացել է: Այժմ անհրաժեշտ է որոշ շտապիղով շրջապատի տարածության մակերեսն իջեցնել 13-րդ դարի մակարդակին: Այդ կարևոր է հուշարձանը «փոսից» դուրս բերելու համար, մանավանդ որ այդ փորումների ժամանակ կարող են պարզվել նաև 1609, 1642 թվականներին հուշարձանի մոտ շինված ժամատաների հատակագծերը:

Կաթոլիկի այս փորրիկ տաճարը գրեթե միակ շենքն է, որ մեծ երկրաշարժի ժամանակ կանգուն է մնացել: Եվ այդ ոչ միայն իր ամրակուռ ու խնամքով կառուցված լինելու պատճառով, այլ և այն հանգամանքի շնորհիվ, որ երկրաշարժից առաջ նա ժամատուն և այլ կառուցվածքներ է ունեցել, որոնց պատերը եկեղեցին փրկել են կործանումից:

Հասկանալի է, որ այժմ կանգուն փորը եկեղեցին չէր կարող Կաթոլիկի անունն ունենալ: Ինչպես ասացինք, ալմանդարը նա ս. Աստվածածին

է կոչվել, թեև այս անունը ևս հնից չի ավանդվել: Ջարմանախորեն 13-րդ դարի և 14-ի սկզբի մի բանի արձանագրությունների մեջ եկեղեցին բնահանուր անվամբ եււանոյ ժամատեղի է կոչվել հոգնակի թվով: Այդպես են արձ. № 12 (1284 թ.), № 2 (1301 թ.), № 4 (1318 թ.), իսկ Կաթոլիկի անունը առաջին անգամ հիշատակված է 1598 թվականի № 6 արձանագրության մեջ: Այդ անունը եկեղեցին ժառանգած պետք է լիներ այն բանից հետո, երբ նա ուներ մեծ ժամատուն և այլ շենքեր¹:




Նկ. 8. Կաթոլիկի եկեղեցու միջին զոտեղով Աստվածածին փորրիկ եկեղեցին, որ մեխին ծառայել է իբրև ավագ խորան:

Բ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ
(Տե՛ս նկ. 18—25)

Քանի որ այժմյան «Մոսկվա» կինոֆաբրիկայի տեղում, հնում «Շահար» կոչվող թաղի կենտրոնում:

¹ Կաթոլիկի եկեղեցու վերաբերյալ տե՛ս Կ. Կաթողոսյան, Երևանի Կաթոլիկիկի և Նորաշայտ հուշարձանի վիճակն արձանագրությունները, «Տեղեկագիր» 2002 պատմության և գրականության ինստիտուտի, դիրք 1, Երևան, 1938, նույնի, Երևանի միջնագրության հուշարձանները, «Լրտեր» հասարակական գիտությունների, Երևան, 1969, № 1:



7. Նորաշայտ Աստվածածին եկեղեցու հր ճակատը: Զափագրություն՝ ՊԻ ուսանողների, զծագրեց՝ Զ. Գապուրյան:

Կառուցված էր 1679 թվականի մեծ երկրաշարժի ժամանակ կործանված նույնանուն տաճարի տեղում, թեև հայտնի չէր, թե այդ կառուցումը որ թվականներին է տեղի ունեցել: Պատերին կային նորոգության վերաբերող երկու արձանագրություն, մեկը 1778 և մյուսը՝ 1811 թվականների: Տաճարի արտաքին տեսքն անհրապույր էր, ինչպես և Կաթոլիկի մեծ եկեղեցու տեսքը: Պատերը թեև շարված էին մաքուր տաշված բարերով, ներսից էլ, գրսից էլ, բայց ճարտարապետական որևէ գեղեցկություն չուներին: Դեռ այժմ, եկեղեցու թիթեղյա երկթեր տանիքը, որ XIX դարի կարկաստան էր բարե սալածածկ տանիքի վրա, անշքացնում էր առանց այն էլ պարզունակ արտաքին տեսքը:

Իրավացի է երվանդ Շահապիրը, երբ խոսք բնդհանրացնելով գրում է, որ «Երևանի եկեղեցի-

ները դրսից գեղեցկության տեսակետից այնքան էլ հաճելի տպավորություն չեն թողնում սովորական դիտողի վրա»: Մենք կավելացնենք, որ ներսից էլ նրանք հաճելի տեսք չունեն, թեև կառուցողներն աշխատել են թաղակապ այնպիսի զահլիճներ ստեղծել, ինչպիսիք մեզ ծանոթ են Հայաստանում IV—VI դարերում կառուցված եռանավ բազիլիկ տաճարներում: VI դարից հետո այդպիսի տաճարներ չեն կառուցվել: VII դարում բազմաթիվ նոր ձևեր են առաջ եկել և տիրապետող դարձել, որոնք իրավամբ այսօր մեր ճարտարապետության փառքն են կազմում:

Միայն XVII դարի վերջին կառուցվող եկեղեցիները, ինչ որ չափով սկսեցին հիշեցնել IV—VI դդ. բազիլիկ տաճարները:

Սկզբում այն կարծիքն էր տիրապետում, որ XVII դարի բոլոր այդ տիպի տաճարները կառուց-

վել են հնից մնացած հիմքերի վրա, բայց Կաթողիկե եկեղեցու ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդ հիշատակը նրա մեծ զանգվածը թեև այդ պահին էր. պատկանում, բայց հիմքից սկսած կառուցվել էր XVII դարի վերջին տասնամյակում և հնից եկեղ ոչ մի բան չէր պարունակում իր մեջ:

Մական Պողոս-Պետրոս եկեղեցում հնից մասեր էին պահպանվել ավագ խորանի կողքերին և արևելյան պանդասների մեջ: Նա արևմտյան պանդասներ չունեի: Կաթողիկե եկեղեցին ևս արևմտյան պանդասներ չունեի¹:

Պողոս-Պետրոս եկեղեցու ներսում, ավագ սեղանի կողքերի առաջակարկա մասերի կրեսին, ի հայտ եկան տարբեր ժամանակներում նկարված վեց շերտ նկարներ, որոնցից վերին կրկուսը՝ պատուհանի վրա, իսկ ներքին շորսը՝ արմերի ավազի վրա: Պատասանների վրա չի նկարները պատկանում



Նկ. 9. Կաթողիկե եկեղեցու որմնաքանդակներից:

էին XIX դարին, իսկ տակինները՝ հին ժամանակների: Ամենահինը, ինչպես ենթադրում են արվեստի և նկարչության մասնագետները, պատկանում էր VI դարին կամ VII-ի սկզբներին: Մինչ այդ որմնանկարները, եկեղեցու պատերը մերկ են եղել և

¹ Երվանդ Շահազիզը իր «Հին Երևանը» գրքի 224 էջում գրում է, որ Պողոս-Պետրոս եկեղեցու արևմտյան պատն աճբողջությամբ հին է: Դա սխալ է. հնից մնացորդներ կային միայն արևելյան մասում, որոնց մասին խոսք եղավ վերևում (բառակրտի հատակագծերով պանդասներ, որմնանկարներ և այլն):



Նկ. 10. Աստվածածին եկեղեցին հուշարձանների պահպանության վարչության վերանորոգումից հետո:

ավաղ չեն ունեցել: Ստորին որմնանկարների վրա բուսական զարդեր են, իսկ մյուս շերտերի նկարները Պողոս և Պետրոս առաքյալների դեմքերն են, որոնց և, ինչպես հայտնի է, նվիրված է եղել եկեղեցին:



Նկ. 11. Աստվածածին փոքր եկեղեցու արտաքին որմնախորշերից մեկի զխամասի քանդակները:

Այդ որմնանկարներից մեկի վրա չի է և 2 գրերը (երրորդ շերտ) սմանք թվական կարծեցին, որ ստացվում էր մեր 1131-ը (ՇՁ = 580 + 551 = 1131), այդ գրերին հաջորդող այլ գրեր ևս կային, որոնցից իբրև թև Իսան է անունն էր ստացվում, բայց դա տկենը սխալ էր, որովհետև այդ նկարը յու-



Նկ. 12. Աստվածածին փոքր եկեղեցու ներքին որմնապահարանը:



Նկ. 13. Կաթողիկե եկեղեցու պատերի շաղախի միջից դուրս եկած քանդակազարդ բեկորները:



Նկ. 14. Կաթողիկե եկեղեցու պատերի լիցքի միջից դուրս եկած խաչարարի բեկոր:



Նկ. 15. Կաթողիկե եկեղեցու պատերի լիցքի միջից ի հայտ եկած քանդակազարդ բեկոր:

ղաների էր և XII դարում յուղաների դեռևս ծանոթ չէր նկարչությանը¹:

Պողոս-Պետրոս եկեղեցու որմնանկարները խնամրով, շերտ առ շերտ տեղից հանվեցին այդ գործի լավագույն մասնագետների ձեռքով (Յուկինի ղեկավարությամբ) և այժմ պահվում են Հայաստանի թանգարաններում (ստորինը՝ Պետական պատկերասրահում, իսկ մյուսները՝ Հայաս-

¹ Л. А. Дурново, Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957, стр. 8.



Նկ. 16. Կաթողիկէ եկեղեցու պատի մէջ հացքրած բարձրարանակ սրբապատկեր:

տանի Պատմութեան պետական թանգարանում): Դրանք հայկական սակավաթիվ որմնանկարչութեան մնացորդների մէջ ունեն իրենց պատվաւոր տեղը և Երևան քաղաքի միջնադարյան պատմութեան համար բացառիկ արժէք են ներկայացնում:

Պողոս-Պետրոս եռանավ տաճարը Երևանի հնագույն և ամենամեծ եկեղեցին էր և նրա զոյու-

թյունը Երևանում ապացույց է այն բանի, որ Երևանը V—VI դարերում Հայաստանի աչքի ընկնող բնակավայրերից մեկն է եղել և, բառ երևույթին Պողոս-Պետրոսն այն ժամանակ քաղաքի միակ տաճարը չէր, այլ այնտեղ եղել են նաև այլ եկեղեցիներ, որոնց գոյութեան մասին ունենք անուշ-զակի, բայց կարեւոր տեղեկութիւններ: Այսպես



Նկ. 17. Կաթողիկէ եկեղեցու մեծ զահեճին պատկանող քանդակազարդ ընկեր:




Նկ. 18. Պողոս-Պետրոս եկեղեցին հին Երևանի կենտրոնական թաղում (Այժմյան կինո «Մոսկվայի» տեղում) հրամ-բց:

օրինակ, 607 թվականին նորընտիր Արրաճամ կաթողիկոսը Գլինում ժողով է հրավիրում Հայաստանի Բյուզանդիային անցած վայրերի հոգևորականների մասնակցութեամբ, որտեղ ժողովականները որոշում են ընդունում հաստատուն մնալ հայկական դավանանքին և նրովում են բոլոր տեսակի հերձվածողներին: Այդ ժողովին, ի թիվս սակավաթիվ հոգևորականների, Երևանից մասնակցել են երկու վաներից: Նշանակում է, այդ ժամանակ Երևանն ունեցել է անվական երկու մեծ

բերդին և հետո, 1835 թվականին, այնտեղից բերել, նվիրել են Պողոս-Պետրոսին: Կարևորն այն է, որ այդ դուռը կարողացել են հարմարեցնել Պողոս-Պետրոսի հարավային մուտքին, առանց փոփոխութիւնների:

Գ. Զ Ո Ր Ա Վ Ո Ր
(Տե՛ս Եկ. 26—32, գծ. 8)

Ջորավոր եկեղեցին հնում մի փոքրիկ մատուռ է եղել, կառուցված Անանիա առաքյալի գերեզ-



Նկ. 19. Պողոս-Պետրոս եկեղեցու ընդհանուր տեսքը հր-ան կողմից:

եկեղեցի, որոնցից մեկը Պողոս-Պետրոսն է եղել, իսկ մյուսը՝ հավանաբար այժմ հետադարյան վերակառուցումներով մեզ ծանոթ եկեղեցիներից մեկը, բայց չգիտենք թե որը²:

Հետաքրքիր է Պողոս-Պետրոս եկեղեցու հարավային երկփեղկ դուռը, ամբողջապես երկաթից շինված, որ առաջ պատկանել է Հին Բայազետի

մանի վրա և XVII դարում գտնվել է Երևան քաղաքից դուրս՝ հյուսիսային կողմի այգիներում:

Մովսես Սյունեցին դեռ իր վարդապետ եղած ժամանակ, Մելիքսեթ կաթողիկոսի հալածանքներից խուսափելու համար, էջմիածնից գալիս է Երևան, Կարին գնալու համար: Երևանում նա ծանոթանում է Ամիրզունա խանի հետ և նրա բարյացակամ վերաբերմունքից օգտվելով մնում է այնտեղ և Անանիայի մատուռի շրջապատում վանք է հիմնում:

¹ Տե՛ս «Չեռնարկ զոր ետուն Արրաճամու հայրց կաթողիկոսի ի միաբարութեան աշխարհիս հայրց, այնոցիկ որ էին ընդ իշխանութեամբ հոռոմոց ի թագաւորութեան Մարտիանոս», «Չիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 151:

² Պողոս-Պետրոս եկեղեցու մասին այսօր քիչ բան գիտենք: Նա քանդվել է 1931 թվականին, Հեռուստանների պահպանության կոմիտեան քանդվելուց առաջ շարժազրեց եկեղեցին, որն անհրաժեշտ էր պատմութեան համար:

³ Այժմ այդ դուռը պահվում է Երևան քաղաքի Պատմութեան թանգարանում: Դուռը բերել է բայազետցի Մուխսի Սաթիս, որից գնել է Երևանցի Տեր-Վարդանը և նվիրել Պողոս-Պետրոս եկեղեցուն (Ս. Եսաֆազի, Հին Երևանը, էջ 211):

Այդ մասին զեպրելին ժամանակակից պատմագիր Առաքել Գավրիժեցին գրում է.

«Կայր ի վաղեմի ժամանակաց վայելուչ մատուռ մի՞ շինեալ ի վերայ դամբարանի սրբոյ առարկոյն Անանիայի, որ էր ի հրախաչին

ողորմութեան ի շինումն տեղոյն... զի բնակեցել ի մէջ իւրեանց»:

Մովսէսը բացի եկեղեցուց շինում է նաև մատուռն, միաբանների համար խցեր, առաջնորդարան (սարավոթ) և Եր զայլ տունս յուրօք և կա-




Նկ. 20. Պոզոս-Պեարոս եկեղեցու հր մուտքը Բալազետի բերդից բերված երկաթե դռնով:

կողմանէ բաղարին Երևանայ ի մէջ այգեստանացն ևւ էր աւերակ և անմարդարնակ»¹: Խանն առաջարկում է այդտեղ վանք հիմնել, հավանաբար այն բանից հետո, երբ Մովսէսը որոշել էր վանք հիմնադրել և տեղ էր որոնում: Խանի առաջարկին միանում են Երևանի բնակիչները. «ամենայն ժողովուրդը՝ բաղարականք և վաճառականք», որոնք «յօժարութեամբ տալին տուրս

տարեալ դամենայն շինուածն, բնակեցաւ անդէն վարդապետն իւրովք միաբանօրն կարդան և սահմանան այն, զոր կարգեցին ի մեծ անապատըն»: Շուտով Մովսէս վարդապետն Անանիայի այդ փորձիկ մատուր վանքի է վերածում, պարտապատում, միայնակյաց միաբանություն հալարում, վանական դպրոց հիմնում: «Եւ զրոց աշակերտք իմաստունք», և այնպիսի ծաղկուն վիճակի հասցնում, որ վանքի համբավը, Գավրիժեցու սակով «Նշուակեցաւ ընդ ծագս աշխարհի՝ ի Հռոմաստան, ի Քրդաստան, ի Վրաստան, ի


¹ «Պատմութիւն Առաքել վարդապետի Գաւրիժեցոյ», Վաղարշապատ, 1884, էջ 225:



Նկ. 21. Պոզոս-Պեարոս եկեղեցին հս-ամ կողմից:



Նկ. 22. Պոզոս-Պեարոս եկեղեցու ներսում հավաքած Մտեփանոսի և Նովհանու խորանների քարերը:



Նկ. 23. Պոզոս-Պետրոս եկեղեցու ներքին մուրթերը հրամայեց:



Նկ. 24. Պոզոս-Պետրոս եկեղեցու ավագ սեղանի կողքերին ավաղի տակից ի հայտ եկած որմնակարները:

Պարսկաստան, զի յամենայն աշխարհաց վաճառականը զայնի անդր և տեսանէին և զհամբան տանէին»¹:

Մովսէս Տաթևացու կառուցած շինքերը երկար շմանցին: Նրանք, բացի Անանիայի մատուռից, փայտակերտ էին, ուստի և բոլորն այրվեցին և ոչնչացան 1635—1636 թթ. թուրք-պարսկական կռիվների ժամանակ:

Առաքել Դավրիժեցին գրում է.

«Իսկ Երևանայ անապատն, զորմէ ասացար զամբարան գու Անանիայի առաքելոյ, որ ինչ և շինուածք զոչր անդ բովանդակն փայտակերտ էր, զտո ի մատուռն, և սորա ամենեքան բանդեալ տերեղան ի գալ վերոյատացեալ երկուց թագաւորացն» (Թուրքաց և պարսից — Կ. Ղ.):

Այդ բոլորը Փիլիպպոս կաթողիկոսը (1632—1655) վերստին վերաշինեց, բայց «ոչ թե փայտի, այլ բարի և բոսվ... զժամատունն, զսեղանատունն, զիցեքն և զայլ ևս շինուածն ամենայն»²:

Սակայն Փիլիպպոս կաթողիկոսի բարաշեն կառուցվածքներն էլ երկար կյանք չունեցան: 1679

¹ Նույն տեղում, էջ 226:
² Նույն տեղում, էջ 244:

թվականի մեծ երկրաշարժին զո՞ գնացին, որից հետո, 1693 թվականին կառուցվեց այժմ զոչու-թյուն ունեցող եկեղեցին Խոճա Փանոսի նվիրատուի անունով: Այդ եկեղեցին կառուցված է բոլորովին նոր հիմքերի վրա և Անանիայի մատուռի հետ կապված չէ: Խոճա Փանոսի կառուցել աված եկեղեցին XVII դարի վերջին տասնամյակի տիպիկ հուշարձան է՝ Երևանի Պոզոս-Պետրոսի, Մուղնու եկեղեցու, Շողակաթի և Նույն ժամանակների պատկանող մյուս հուշարձանների նման:

Այժմյան եկեղեցու բուն անունը, ինչպես գիտենք արձանագրություններից և մատենագրական աղբյուրներից, Աստվածածինն է, իսկ Զորավոր անունը նա ստացել է հետագայում, այնտեղ պահվող մի ձեռագիր մատյանի անունից, որ հրաշագործ և զորավոր է համարվել:

Այստեղ վանական կյանքը տեղ է մինչև 1835 թվականը: Ռուսների գրավումից հետո, էջմիածնի կաթողիկոսը և միաբաններն այլևս Երևանի բաղաբուժ բիշ էին լինում և վերահիշյալ թվականին Փանոսի կառուցած եկեղեցին զարձավ ծխական եկեղեցի Մարազաչից եկած և Զորավոր եկեղեցու մոտերքին բնակված հայ պաղթականների համար:

Փանոսի կառուցած եկեղեցին Անանիայի մատուռի վրա է: Նա բանդել է մատուռը և փոխարեն կառուցել այժմյան եկեղեցին, որ ներսում ունի չորս սյուներ, մի սեղան և երկու ավանդատուն: Մուտքն արևմուտքից է, որտեղ եկեղեցու լայնությամբ կառուցված է սյունազարդ մի նախազավիթ: Դռան զլխին, եկեղեցու լայնքի միջին մասում, ունի պանդակատուն:

Խոճա Փանոսի ժամանակ Անանիայի դամբարանի մուտքը եղել է եկեղեցու միջից, գեանի մեջ: Այդ մասին Շահաթուրանյանը գրում է.

«Մուտ գեանափոք զամբարանի հոշակելոյ յանուն Անանիա առաքելոյ է ի մէջ եկեղեցու մեծ ի սրնն արեմտեան հիսսիտոյ, ընդ որ մտեալ և իջեալ ընդ աստիճանս ինչ յարեմտուս կոչս, և ապա իբրև բալլս հինգ, է փորթիկ կամբարայտի և ի նմա զամբարանն սրբոյն, որ անկանի ուղղակի ի ներքոյ հիսսիտային բաժնի գավթին»¹:

1889 թվականին դամբարանը բաժանել են եկեղեցուց, ներսից մուտքը փակել և զամբարանի զլխին, եկեղեցուց անկախ, կառուցել են գմբեթավոր մի փորթիկ շինություն: Այդ ժամանակ եկեղեցու ընդհանուր ոճին չբնուող դուռ և լուսամուտ-

¹ «Մտորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի...», հատոր Բ, էջ 145:

ներ են բացել և եկեղեցու ներսում վերնատուն շինել:


Այս եկեղեցին էլ, ինչպես Ե. Շահազիզն է գրում.




Նկ. 25. Պոզոս Պետրոս եկեղեցու ավագ սեղանի ան պատին ի հայտ եկած (3-րդ շերտ) Պետրոս առաքել որմնակարը:

«Մովսիսայանն և Փիլիպպոսաշեն եկեղեցին մի պարզ, երկարավուն, քառակուսի շինություն է՝ չորս պատ և զտրիպայր տանիք, և մի առանձին հասկի տպավորություն չի գործում սովորական դիտողի վրա, բացի արևելյան պատից, որ արտաբուստ զարդարված է մի քանի շատ նուրբ բանդակված խաչքարերով»²: Ինչ խոսք, որ այդ նուրբ կոչված խաչքարերը երբեք չեն կարող համեմատվել XI—XIII դարերի բանդակների հետ, ինչպես չի կարող Զորավորը համեմատվել հին դարերում կառուցված ճարտարապետական հուշարձանների հետ, սակայն այդ խաչքարերը, ինչպես նաև եկեղեցին, իրենց ժամանակի, այսինքն XVII դարի վերջին, արտասպառությունն են, այդ տեսակետով էլ արժեքավոր են հայ մշակութային պատմության համար:

² Նովադե Շահազիզ, 2ին Երևանը, էջ 195:



8. Զորավոր եկեղեցու հատակածեր և երկարության կտրվածքը:
Չափազրոյւթիւն՝ Կորյուն Գափաղաւանի:




Նկ. 26. Զորավոր (Անանիա առաքյալի) եկեղեցին հա կողմից:




Նկ. 27. Զորավոր (Անանիա առարչալի) եկեղեցու ընդհանուր տեսքը հր-ամ-ից:



Նկ. 28. Զորավոր (Անանիա առարչալի) եկեղեցին հր-ան կողմից:



Նկ. 29. Զորավոր եկեղեցու հր մուտքը:




Նկ. 31. Զորավոր եկեղեցու ամ նախագավթի մույթի քանդակները:




Նկ. 30. Զորավոր եկեղեցու ան պատի զարդախալը:



Նկ. 32. Անանիա առարչալի մատուցը Զորավոր եկեղեցու ամ կողմում:



9. Նորբի կամուրջի (Գետառի վրա) հատակաձևը և կորվածքը:
Չափազրույթյուն՝ Շ. Ազատյանի և Յու. Քամանյանի:




10. Նորբի կամուրջի հր ճակատը 1965 թ. վերանորոգումից հետո (ներկայացվում է վերանորոգման նախագիծը):
Չափազրույթյուն՝ Շ. Ազատյանի և Յու. Քամանյանի:

Գ. ՆՈՐԲԻ ԿԱՄՈՒՐՋ
(ՏԵՍ ԵՎ. 33. գծ. 9-11)


Փոքրիկ կամուրջ է Նորբի ձորում, Գետառի վրա: Նրա թռիչքը մի խելից մինչև մյուսը 6,9 մետր է: Անցյալում այդ կամուրջի նշանակությունը մեծ է եղել: Նրա վրայով են անցել ղևպի հյուսիս գնացող առևտրական կարավանները, որոնք հասել են

Սևանի ափերը, Վրաստան և ուսսական հարթու-
թյունները:

Գետառը թևե փոքրիկ ղետակ է, բայց երբեմն հեղեղում է երևան քաղաքի թաղերը և մեծ վնասներ պատճառում: Նրա վրայի կամուրջները հաճախ բանդվել են Գետառի ավերիչ ուժից, մա-
նավանդ, երբ վարարում է գետը հսկայական



Նկ. 33. Նորբի կամուրջը Գետառի վրա:




10. Նորքի կամուրջի Տր ճակատը վերանորոգումից առաջ:
Չափաքաղված՝ 6. Ազատյանի և Յու. Քամանյանի:

զեաւարարի է բերում: Գրանոլ է բացատրվում այն, որ Գեառաի վրա հին կամուրջներ չեն պահպանվել:

Նորքի այժմյան կամուրջը մոտ 10 տարի է

պահվում է Հայաստանի Պատմության թանգարանում: Վերջին նորոգությունները կատարել է Հուշարձանների պահպանության վարչությունը 1950-ական թվականներին:



Նկ. 34. Գեթեմանի մատուռ հս. տես կողմից:

Ե. Գ Ե Ռ Ե Մ Ա Ն Ի

(ՏԼ՛ս Ա. 34—37)

ինչ զործածությունից զուրս է եկել՝ նախկին նեղ խճուղին լայնահուն պողոտայի վերածվելու և նոր մեծ կամուրջներ կառուցելու հետևանքով: Այդ կամուրջն այժմ ճանապարհի կողքին պահպանվում է որպես պատմական հուշարձան:




Նորքի կամուրջը կառուցվել է 1664 թվականին նորքեցի Հովհաննես վարդապետի միջոցներով: Կառուցող վարպետն է, ինչպես այդ երևում է եղծված արձանագրությունից, Գրիգորի որդի Կիրակոսը, սակայն, ժամանակի ընթացքում այդ փորձիկ կամուրջը ևս որոշ փոփոխություն է կրել: Նրա կենտրոնական մասը հնում երկու կողմից ունեցել է վերելք, զրեթե կամուրջի կամարին զուգահեռ, որ սլաքավոր է և կենտրոնում ավելի բարձր է քան կես շրջանը:

Սակայն հետաքրքիր է այն, որ սրբատաշ բարով կառուցած այս կամուրջը դիմացել է բազմաթիվ ջրհեղեղների, ինչպես նաև 1679 թվականի հոգր երկրաշարժին:

Կամուրջի կառուցման գլխավոր արձանագրությունը փորագրված է նրա կամարի վրա, Հովհաննես վարդապետի փակագիր արձանագրությունը

Գեթեմանի մատուռը գտնվում էր Պետական օպերայի տեղում:

Նա կառուցված է եղել XII—XIII դարերում: Սկզբնական ունեցել է Կաթողիկոս եկեղեցու (ս. Աստվածածնի) ձևը, այսինքն եղել է արտաքինից ուղղանկյուն բառանկյունի շինություն. արևելքից արևմուտք երկարությունը լայնքի համեմատությամբ մեկ երրորդ չափով երկար: Կենտրոնում ունեցել է գմբեթ, որի հիմքի բառակալանի նստած է եղել ներսի, զեպի եկեղեցու կենտրոնին մոտեցող շորս որմնասյուների վրա: Եկեղեցու պատերի արտաքին երեսին եղել են խորշեր: Այս փորձիկ եկեղեցին ավերվել է 1679 թվականի մեծ երկրաշարժի ժամանակ, որից հետո վերակառուցվել է բոլորովին նոր ձևով: Հնից պահպանվել էր միայն արևելյան պատն իր երկու խորշերով և բեմի վրա բացվող նեղ պատուհանով: Մնացած պատերը բոլորովին նոր էին, հարթ մակերեսով, առանց խորշերի: Գմբեթը բոլորովին հանել էին, առաս-




12. Կոնդի ս. Հովհաննես Եկեղեցու հատակաձևը և երկարության կտրվածքը:
Չափագրություն՝ Կոլյուն Վաֆաբաշյանի:

կորակնեալը իրրև զմկունս ի ծակս որմոց սողոսկեալ մասնէին»¹:

Կաթողիկոսները, ինչպես նաև հայ և բյուզանդացի թագավորները, հաճախ Կողեռնի օգնու-

հօրն և յազգաս Յովհաննիսի, որ հոմանուն ասէին Կողեռնս: Կայսրը զիմում է Հայոց Հովհաննես թագավորին (1020—1042), որպեսզի այդ երկու հայ գիտնականներին Կոստանդնուպոլիս ուղարկի,



Նկ. 38. Կոնդի՝ Հովհաննես Եկեղեցու ան ճակատի վերին մասը:

Յյանն ևն զիմել արևի խավարման և երկրաշարժների պատճառներն իմանալու համար:
Այսպես օրինակ, Մատթևոս Ուտճայեցին (XII դ.) գրում է, որ բյուզանդական Վասիլ կայսրը

զատի տոնի խաթարման պատճառները նրանցից իմանալու համար²:

Անտիոպ վիճակում մեզ է հասել Կողեռնի տոմարական երկասիրություններից մեկը: Լաստի-



Նկ. 39 Կոնդի՝ Հովհաննես Եկեղեցու ամ մուտքի ճակատի վերին մասը:


(976—1025) անձամբ գիտեր Հովսեփ Ընծայեցու և Հովհաննես Կողեռնի մասին: Նա գրում է. «...յանտանէ զիտէր վասն Յովսեփայ Ընծայուց

վերոցին վկայում է, որ նրա զրչին է պատկանել և Հովհաննես Կողեռնի մասին: Նա գրում է. «...յանտանէ զիտէր վասն Յովսեփայ Ընծայուց վում»³:

¹ Պատմութիւն Արիստակիայ վարդապետի Լաստիվերտացւոյ, Թիֆլիս, 1912, էջ 9:

² Մատթևոս Ուտճայեցի, Ժամանակագրութիւն, Բ տպագրութիւն, Վարդաշապատ, 1898, էջ 52, 67—74:

³ Լաստիվերտցի, նշված աշխատութիւնը, էջ 8:



Նկ. 40. Կոզեռի գերեզմանոցը Կոզեռի բլուրի վրա, երևան քաղաքի տեսարանով:

Կոզեռնի գերեզմանի վրա շինված էր մի տապանատուն-մատուռ, հավանաբար կառուցված XI դ. կեսերին, բայց 1679 թ. երկրաշարժի ժամանակ հին մատուռը կործանվել է և տեղը նորն են շինել: Տեղում մեր անսած մատուռը նորոգված էր XIX դարում և վրան ու մի արձանագրություն չկար, բացի 1830 թվականի նորոգման արձանագրությունից, որից իմանում ենք, որ մատուռը նորոգվել է Սահակ Մելիք-Աղամալյանցի ձեռքով, ինքն էլ այդտեղ է թաղվել: Մելիք-Աղամալյանները այդ մատուռը դարձրել էին իրենց տոհմական տապանատունը:

Արվեստի տեսակետից Կոզեռնի գերեզմանոցի տապանաբարերը որևէ բանով աչքի չէին ընկ-

այնպիսի շոր տեղ, որտեղ ոչ մի կողմից ջուր չէր հասնում և ոչ մի ծառ կամ ծաղիկ չէր բուսնում: Գերեզմանոցում կային XIX դարի վերջերին և XX-ի սկզբներին պատկանող բառակող կոթողներ, գեղաձև գլխով, ինչպիսիք սովորական են նույն ժամանակների Փարաբարի գերեզմանոցում, Օշականում, Էջմիածնում և այլուր, բայց դրանց գոյությունը ոչ մի չափով չէր բարելավում գերեզմանոցի տեսքը:

Կոզեռն գիտնականի տապանաբարը վաղուց կորած էր, և ոչ որի հայտնի չէր նրա արձանագրության բովանդակությունը: Եղածների մեջ ամենահինը Մովսես կաթողիկոսի գերեզմանաբարն էր, որ մեռել է 1633 թվականին և թաղվել Կոզեռ-



Նկ. 41. Կոզեռնի մատուռը Սահակ Մելիք-Աղամալյանի 1830 թ. վերակառուցումից հետո:

նում, հակառակ Հայաստանի լեռնային շրջանների կենցաղային բնույթի պատկերներով հարուստ գերեզմանատների, որոնց վրա պատկերված են աշխատանքային դրվագներ (գուլանով և արոթով վար անելը, որսորդություն), խրախճանք (խորոված ուտել, զինի բմպել, երաժշտություն լսել), Կոզեռնի գերեզմանոցում միայն երկու տիպի տապանաբարեր կային՝ բառակող տափակ երեսով և օրոցաձև: Վերջիններս տափակ քարերի համեմատությամբ քիչ բարձր էին:

Տապանաբարերը թեև որոշ խմբավորում ունեին և աշխատել էին ազգակից ննջեցյալներին իրար մոտ թաղել, բայց ընդհանուր առմամբ, ո՛չ մի շարք գոյություն չունեն և ինչպես Արարատյան դաշտի բոլոր բնակավայրերում, այնպես էլ Կոզեռնում, գերեզմանոցի համար ընտրել էին

նի մատուռի մեջ, ինչպես այդ մասին վկայում է ախանապետ Առաքել Գավրիթեցին: Նա նկարագրելով Մովսեսի թաղումը ասում է, որ նրա անյունը՝

«...տարեալ ի հասարակաց գերեզմանատունն ի Կոզեռ կոչեցեալ բլուրն, զի վասն գերեզմանի Կոզեռ վարդապետին՝ որ անդ է... և յարանոպ գերեզմանի Կոզեռ վարդապետին և Մէլքիսէթ վարդապետին, ի մէջ երկուցս այսոցիկ պատրաստեցին զիր հանդստեան սըրբոյս այտորիկ»¹:

Ճշմարտության դեմ շմեղանչելու համար հիշատակենք, որ գերեզմանոցում կային մի քանի տափակ տապանաբարեր, որոնց երեսին արհես-

¹ «Պատմություն Առաքել վարդապետի Գավրիթեցու», էջ 240:

տավորների գործիքներ էին նկարված՝ դերձակի մկրտա, քարտաշի անկյունաչափ և այլ գործիքներ, բայց դրանք ավելի ուշ ժամանակների էին պատկանում՝ XIX կամ XX դարերին:

Բ. ԱՎԱՆԻ ԿԱՌՈՂՎԻԵ ՏԱՃԱՐԸ
(ՏԵ՛ս ԵԿ. 42—58, գծ. 13—22)

Ավանն ունի հնագիտական բազմաթիվ հուշարձաններ, որոնց թվում տուֆաշերտի մեջ փորված վաղ հայկական դամբարաններ և ուրարտական սյան մեծածավալ խարխոխ՝

Հայրենական Մեծ պատերազմից հետո Երևանի քաղաքն այնպիսի արագությամբ սկսեց ընդարձակվել, որ իր մեջ ընդգրկեց մի շարք գյուղեր՝ Նորագավիթը, Ներքին և Վերին Չարբախները, Քանաքեռը, Նոր Արարիկը, Շահումյան ավանը, այդ թվում նաև Ավան գյուղը, որ առաջինը ընդգրկեց հետո էր մոտ 7 կիլոմետրով:

Ավանն ունի մի նշանավոր տաճար, որ Երևանի միջնադարյան սահմանափակ հուշարձանների շարքում իր պատմական անցյալով և կառուցվածքով հատուկ տեղ է զբաղում հայ ճարտարապետության պատմության մեջ: Նրանով հիմք է դրվել մի նոր հորինվածքի, որն արագ թափով տարածվեց Հայաստանում, Վրաստանում և իր կատարելությանը հասավ 618 թվականին Վաղարշապատում կառուցված Հահրիսիմի տաճարի մեջ: Այդ ոճի շենքերից Վրաստանում նշանավոր է Մցխեթի ս. Խաչ եկեղեցին, թեև բացի ս. Խաչից նույն ոճով այնտեղ կառուցվել են այլ տաճարներ ևս:

Ա. ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՂՅՄԱՆ ՀԱՆԳՍԱՄԱՐՆԵՐԸ

Հինգերորդ դարում Հայաստանը գրկվեց իր ազգային պետականությունից և Բյուզանդիան ու Պարսկաստանը տիրեցին նրան՝ իրար մեջ բաժանելով երկիրը, բայց այդպեսով չբավարարվեցին: Երբեմն բռնությամբ, երբեմն սիրաշահելով պարսիկներն աշխատում էին Հայաստանում արմատավորել իրենց դավանած մազդեական կրոնը, իսկ դրան հակառակ, բյուզանդացիք ձգտում էին քրիստոնյա հայ ժողովրդի միջից վերացնել կրոնական այն խտությունը, որ դոյուքուն ունեն իրենց և հայերի միջև, որով հայերը սահմանազատվում էին Բյուզանդիայից և հակադրվում նրանվանողական բաղաբաղանությունը:

Վաղուց արդեն Բյուզանդիայի գերիշխանության տակ գտնվող Փոքր Հայքում հատուկ օրենք-

ներ էին սահմանվել հայերի դիմադրական ուժը կազմավորելու, իշխանական տները բալթալու և նրանց հունական աշխարհում տարալուծելու նպատակով: Հայ ժողովուրդը ծայրահեղ դժգոհություններում պայքարում էր երկու հզոր կողմերի դեմ, պահպանելու համար իր ինքնուրույնությունը:

Դարեր տեղը այդ պայքարը խիստ սուր բնույթ էր ստացել վեցերորդ դարի վերջին տասնամյակներին:

Պարսկաստանն Ավարայրի և նրան հետևող մյուս պատերազմներից հետո հաշտվել էր հայերի դավանած ազգային երանգ ունեցող քրիստոնեության հետ: Նույնը չէր կարելի սակ Բյուզանդիայի մասին, որի կայսրերը ոչինչ չէին խնայում Հայաստանը բազմեղանակապես դարձնելու համար, իսկ բազմեղանակապետությունը, ինչպես հիշա էին հասկանում հայերը, մի ահավոր միջոց էր հայերին և մյուս ժողովուրդներին իրենց հետ միաձուլելու համար:

Միայն հայերի նկատմամբ չէր, որ բյուզանդական կայսրությունը այդ բազաբաղանությունն էր վարում: Նա հայերի հետ միեկույն դավանանքն ունեցող վրացիների ու աղվանների մեջ ևս բազմեղանակապետ սերմեր էր տարածում և աշխատում էր իրար բարեկամ այդ ժողովուրդներին բաժանել միմյանցից, թշնամացնել և հեշտությամբ տիրել նրանց: Այդ իր ծրագրերն իրականացնելու համար Բյուզանդիան ոչ մի միջոցի առաջ կանգ չէր առնում:

Վերջ ի վերջո VII դարի սկզբներին, Դվինից գնացած Կյուրոսի կաթողիկոսության ժամանակ, վրացիներն անցան հունական դավանանքի և հրաժարվեցին հայկական եկեղեցուց, իսկ աղվանները մինչև վերջ կապված մնացին հայկական դավանանքին:

Հետաքրքիր են մեր միջնադարյան մատենագիրների բազմաթիվ վկայությունները բյուզանդացիների բորբոքած կրոնական վեճերի վերաբերյալ, որոնք ավելի սուր բնույթ ստացան Մորիկ կայսեր ժամանակ (592—602), որը, ինչպես հայ

² Պարսկաստանը թեև հայերին թույլ էր տվել քրիստոնյա մնալու, բայց երբեք չէր հանդուրժում, երբ պարսիկներն էին քրիստոնյա դառնում: VI դարի կեսերին քրիստոնեությունը ընդունած մի պարսիկ Դվինի մարզպանը սպանում է իսկ հայոց կաթողիկոսը այդ քաղաքում գիտեք թաղում է մայր եկեղեցու մոտ և վրան էլ կառուցում է մի տաճար: Այդ պարսիկը, որ ստացել էր հիգարուլիս անունը հայ եկեղեցու ճանաչած վկաններից մեկն է: ՏԵ՛ս «Յովհաննես կաթողիկոսի Գրասխանակերտացու Պատմության հայոց», Թբիլիսի, 1912, էջ 64:




42. Ավան Ս. Հովհաննես եկեղեցին:

¹ Այդ հետաքրքիր խարխոխ գտնվում է Սուրեն Մնացականյանի սան բակում (14-րդ փողոց N 40 տուն):

պատմիչներն են հաղորդում, ծագումով հայ էր, Օչական գյուղից¹։

Սերեոսի պատմության մեջ բազմաժամարար մեջ բերած Մորիկ կայսեր մի նամակից իմանում ենք, որ հայերը ծանոթ էին բյուզանդական կայսրու-

կրոնական վեճերն իր օգտին լուծելու նպատակով, Բյուզանդիան հաճախակի ժողովներ էր հրավիրում, որոնց մասնակցում էին բացի հայերից և հույներից նաև վրացիները, ազվանները, ասորիները։



Նկ. 43. Ավանի տաճարի ամ հակառը վերանորոգմանց առաջ։

թյան բուն նպատակին՝ կազմալուծել, չլստել հայերի ուժերը և Հայաստանը աիրել առանց հայերի։ Մորիկ կայսրը, ըստ Սերեոսի, պարսից խոսրով արբային գրում է հայերի մասին.

«Յայնմ ժամանակի թագաւորն յունաց Մարտիկ հրամայէ գրել առ թագաւորն պարսից զիր ամբաստան վասն իշխանացն ամենայն Հայաստանեայց և զպրաց նոցա։ «Ազգ մի խոտոր և անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում և պղտորեն։ Բայց եկ՛ ասէ, ես զիմար ժողովեմ և ի թրակէ զումարեմ և դու զրոյդ ժողովէ և հրամայէ յԱրեւել տանել։ Զի երէ մեռանին՝ րջնամլմ մեռանին, և երէ սպանանեն՝ թըշնամիս սպանանեն, եւ մեկ կեցուց ի զարդարեամբ։ Զի եթէ զորս յերկրի իւրեանց լինիցին, մեզ հանդել ոչ լինի»²։

¹ «Պատմութիւն հայոց արքայաւ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ», Քիֆիս, 1909, էջ 47—50։ Նույնը, բայց համատու, տես նաև «Ստեփանոսի Տարօնեցոյ Աստղիան՝ Պատմութիւն տիեզերական», ՍՊԲ, 1885, էջ 141։

² «Պատմութիւն Սերեոսի եպիսկոպոսի ի Հերակն», Քիֆիս, 1913, էջ 75։

Այդպիսի մի ժողով առաջին անգամ զումարել էին Կոստանդնուպոլսում³, իսկ հետո այդ ժողովների կենտրոնը դարձրին Քեդոդաւոյիսը, որ ավելի մոտ էր արևելյան բրիտանոյա պետութիւնների օսհամաններին։

Քեդոդաւոյսում զումարվեցին մի բանի ժողովներ, որոնց ընթացքում հույն հոգևորականութիւնն ամեն միջոց գործ էր դնում համակուտ, որ իրենց և հայերի զավանանքի մեջ էական տարբերութիւններ չկան և եղածն էլ փոխազարմար պարելի է վերացնել և հանդել մի զավանանքի։

³ Հայ բյուզանդական զավանարանական վեճերի լրատարանման համար կարևոր նշանակութիւն ունի մի բազմակրօնիկ հայի հայերեն գրած երկասերութունը, որի բնագրին անհայտ է և պահպանվել է նրա միայն հունարեն թարգմանութունը «Narratio du rebus Armeniae» վերնագրով։ Այդ երկը Եփրոսական հրատարակութիւններից հայերենի և Բարզանիկ հունացեա Շաշ Բարթիկանը և հրատարակել է «Բաների մատենադարանի» պարբերականի 6-րդ գրքում (Երևան, 1964, էջ 457—470)։ Այդ հատվածը մեծ կարևորութիւն ունի նաև Ավանի տաճարի, ինչպես նաև այլ խոյզերի լուսարանման համար։

VI դարի երկրորդ կեսի և VII-ի սկզբներին տեղի ունեցած այդ վեճերի մասին Մտեփանոս Օրբելյանը գրում է.

«Յայնմ ժամանակի բորբոքէր շարահար

աղանդն Քաղկեդոնի ի ձեռն բուռն թագաւորաց Յունաց և կամէր իբրև զբաղցկեղ ճարակել զաշխարհս Հայոց և զԱսորաց ուղղափառաց, ևս առանկ ի թագաւորեն Մօրկայ: Եւ



Նկ. 44. Ավանի տաճարի ամ ճակատը 1968 թ. վերանորոգումից հետո:



Նկ. 45. Ավանի տաճարի ամ մուտքը 1968 թ. վերանորոգումից հետո:

ղեսպանը և հրաւիրակը Հոռոմոց երբէք ոչ զաղաւէին յերեկելութեանց, բազում անգամ հրաման առչին ժողովոյ, մի անգամ ի Կոստանդնուպոլիս կոչեցին և երիցս անգամ ի Քէդուպոլիս. և դէմ յանդիման և ուժգին մեծամեծ հարցափորձութիւնք լինէին. և էր յայնմ ժամանակի Հայաստանի զպրոպիւնքս նորոգ և շէն. և յոյն լեզուին և զպրոպեանն յոյժ հմուտք և տեղեակք: Եւ որպէս հարցանէինն նորա՝ առանել իմն պատասխանի լսէինն¹:

Ինչպես տեսնում ենք, հայ հոգևորականները հունարեն լեզվի ու գրականության և ժանապանհ կրոնական խնդիրների վերաբերյալ իրենց գիտությունը ոչնչով չէին զիջում հույներին և դրանով իսկ, վեճերի ժամանակ, համարձակորեն պաշտպանում էին իրենց դավանանքն ու ինքնուրույնությունը:

¹ «Պատմութիւն ճահնդին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սինեաց», Բիճիլս, 1510, էջ 101:



Նկ. 46. Ավանի տաճարի հր պատի ներքին տեսքը վերանորոգումից առաջ:



Նկ. 47. Ավանի տաճարի հր պատի ներքին տեսքը վերանորոգման ընթացքում:



Նկ. 48. Ավանի տաճարի հս և ան պատերը ներսից, վերանորոգման ընթացքում:

Սակայն քաղաքական ուժերը հավասար չէին: Շատ անգամ հայ կղերը տեղի էին ապիս բյուզանդական բռնի ուժի առաջ:

Բյուզանդական կայսրերի հրավիրած ժողովները թեև իրենց նպատակին չէին հասնում և վիճելի հարցերը լուծում չէին ստանում, բայց դրանց միջոցով Բյուզանդիան կարողանում էր ձեռք բերել կողմնակիցներ, մանավանդ բյուզանդական մասում ապրող հայ կրոնավորներին շրջանում:

Narratio-ի մեջ Կոստանդնուպոլսի ժողովի մասին ասված է, որ ոմն Վարդան Իշխան (նկատի ունի փոքր Վարդան Մամիկոնյանին) սպանում է պարսիկ բռնակալ Սուրենին և փախչում Կոստանդնուպոլիս: Այնտեղ նա հրաժարվում է հազրոզվել հունական եկեղեցում, պատճառաբանելով հայկական դավանանքի դրած արգելքը: Կայսրը հրամայում է Վարդանին հայ եպիսկոպոսներին և վարդապետներին հրավիրել Կ. Պոլիս, այդ հարցը բնական համար: Փողովը տեղի է ունենում Պոլսում, սրանց հայ հոգևորականները միաբանում են հույներին՝ մի մասը սիրով, գլխավորապես բյուզանդական գերիշխանության տակ գտնվողները, մի մասն էլ առերևույթ: Վերջիններս Հայաստան վերադառնալուց հետո նորից հայկական դավանանքին են անցնում և ենթարկվում Գլխին հայաց կաթողիկոսության:

Այդ կրոնական վեճերը երկպառակություն էին

առաջանում նաև հայերի և վրացիների, հայերի և աղվանների միջև:


¹ Տե՛ս «Բանբեր մատենադարանի», հատ. 6, էջ 465:

Բյուզանդիան զեռու վազուց իր գաղտնի գործակալներն էր ուղարկում Հայաստան, որպեսզի կրոնավորներին և ժողովրդի մեջ հայկական եկեղեցին բյուզանդականին միացնելու վերաբերյալ հող նախապատրաստեն և կողմնակիցներ հավաքեն: Միշտ չէ, որ այդ գաղտնի գործակալներին շար աշխատանքը թարուն էր մնում հայ եկեղեցու գործիչների աչքից:

Ստեփանոս Օրբելյանը գրում է.

«Յաւուրս տեառն Վրդանիսի Սիւնեաց եպիսկոպոսի եկին ոմանք նեստորականք և քաղկեդոնիկք և խարկանօք բնակեցան յաշխարհս Սիսական և յԱղվանս: Ապա լուեալ տեառն Յովհաննիսի բնդոստոց թղթովք և ծանոց զմիասն որ բնդ յարգիւ ծածկեալ կայր. յորմէ զարհուրեալ Տեառն Վրդանիսի՝ հայաժական արար ի վիճակէ իւրմէ. և մեծաւ նզովիւք փակեաց զի մի՛ իշխեսցեն թողացուցանել ի սահմանս իւրեանց»:

Այս միջոցներով ևս չբավարարվեց Բյուզանդիան և որոշեց հայերին երկու մասի բաժանել և մի նոր կաթողիկոսություն հիմնել Հայաստանի բյուզանդական մասում, այն հույսով, որ շուտով հայերը բոլորը միասին կընդունեն նրա հոգևոր իշխանությունը: Այդ նպատակով Հայաստանի բյուզանդական մասում ապրող հայերի համար կաթողիկոս ձեռնադրեցին Հովհան անունով մեկին, որն իրրեկ հոգևորական մեծ հեղինակություն սներ հայերի աչքում և զարմանալի չէ, որ մեր մասնակիրները նրա անձի մասին զովասանքով



Նկ. 49. Ավանի տաճարի բլրի բնկորներ:

են խոսում: Գրախանակերացին Հովհանի մասին ասում է՝ «այր Նշմարիւ և աբղար էր և առարինի ի վարս... և բնաւ ոչինչ չեղեալ զկնի քաղկեդոնական աղանդիցն»²:

¹ «Պատմութիւն նահանգին Սիսական», էջ 97—98:

² «Յովհաննու կաթողիկոսի Գրախանակերացու պատմութիւն հայոց», էջ 73:

Պրեթև նույն կերպ է բնորոշում Հովհան Բազարանցուն նաև Վարդան պատմիչը, անվանելով նրան «Այր սաւր», որ բնաւ չէր խոտորեալ յաղանդըն Յունաց»³:



Նկ. 50. Փասակոզ կոթողի գտնված Ավանի տաճարի բակում (V—VI դդ.):

Այսօր մեր ձեռքի տակ եղած կցկոտոր և իրարամերժ տվյալներով զժվար է որոշել, թե Հովհան հակաթուծ ինքն անձնապես ի՞նչ տեսակետ է ունեցել VI դարում բոլորին հույոզ կրոնական հոսանքների մասին, իրոր համակրե՞լ է քաղկեդոնական աղանդը թե ոչ: Եթե մեր մասնակիրները նրան անվանում են Նշմարիւ, աբղար, աաաՄինի և որ բնավ չեղված չի եղել զեպի քաղկեդոնական դավանանքը, ապա հույների և հունադավանների աչքում նա եղել է քաղկեդոնական դավանանքի ներկայացուցիչ Հայաստանում: Narratio-ի հեղի-

³ «Մեծին Վարդանայ Բարձրաբերդոց պատմութիւն արևելքական», Մուսկով, 1861, էջ 84:

նակը գրում է, որ Մովսես եղվարդեցու օրով (574—604) բյուզանդացիք նորից հայ հոգևորականներին հրավիրում են Կ. Պոլիս հավատի հարցերը քննելու, բայց «Մովսէս կաթողիկոսը ուշադրու-



Նկ. 51. Քառակող կթողի պատվանդան, գտնված Ավանի տաճարի բակում (V—VI դդ.)

թյուն չդարձրեց հրամանին ստեղծվելով: «Նա չեմ անցնի Ագաս գետը, չեմ ուտի փոսն հացը և չեմ խմի ջրախառն տաֆ գիւնի»¹: Վաստուրական աշխարհի եպիսկոպոսները և նրանք ուղբեր գանձվում էին պարսից տիրապետության տակ, նմանապես շքանկացան զնախ: Այդ ժամանակ Կ. Պոլիս են գնացել և հույների հետ հաղորդությունը բնորոշել նրանց հետ միասին «ուղբեր որ գանձվում էին հոռոմայեցիների տիրապետության տակ»: Հույների հետ հաղորդվածների կաթողիկոսը և եպիսկոպոսները չեն բնորոշում, այդ պատճառով էլ ըստ Narratio-ի այդ հունազավաններն իրենց կաթողիկոս ձեռնադրեցին Հովնանին²:

Այստեղից պարզ է, որ հեղինակը Հովնան հակաթողիկոսի բաղկերցնական է համարում:

Ինչ էլ որ լինեն Հովնանի հույների հաստատած աթոռի գահակալն էր և, ինչպես հաղորդում են մեր պատմիչները, Մորիկ կայսեր նշանակած մարզը, այն էլ հակաթողիկոս, որ Գրասխանակերտում ճիշտ բնորոշումով հայոց կաթողիկոսության աթոռը երկու հատվածի էր բաժանել և խախտել հայոց կրոնական միասնականությունն ու ինքնուրույնությունը, նրա դերը հույժ բացասական և

վնասակար էր, մանավանդ, որ նա կաթողիկոս գարձավ այն ժամանակ, երբ 16 տարի արդեն գահակալել էր Մովսես եղվարդեցին և զեռ շարունակում էր իր կաթողիկոսությունը Գլինի մայր աթոռում:

Գլինի աթոռն այդ ժամանակ մարզպանների և պարսից արքունիքի հոգածության տարակիս էր: Պարսիկներն ամեն կարգի զիջումներ անում էին սրբազանի հայոց եկեղեցին Բյուզանդիայի ազդեցության տակ շքեղին:

Այս տեսակետով հետաքրքիր է Գրասխանակերտցու պատմածը Գլինի մայր եկեղեցու վերաշինության մասին 607 թ., Վրկանա նախկին մարզպան Սմբատ Բագրատունու ձեռքով:

Գրասխանակերտցին գրում է, որ երբ Սմբատ Բագրատունին ուզեց ազյուսով ու փայտով շինած Գլինի մայր եկեղեցին բանդել և նրա փոխարեն «Սրբոյ կոփածոյ բարամբր, զեղեցիկազոր շինածիւ, կրով ձուլեալ ի մի» մի նոր եկեղեցի կառուցել, Գլինի պարսից բերդապաշտը արգելում է և դիմում խոսքով Բ-ին, որպեսզի վերջինս թույլ չտա



Նկ. 52. Մենավոր սյան խաչադրդ խոյակ, գտնված Ավանի տաճարի բակում (VI—VII դդ.)

եկեղեցու շինությունը, պատճառաբանելով, որ եկեղեցին կարող է բերդի համար վնասակար լինել մտախլության պատճառով (հարձակվող թրջնամին եկեղեցին կարող է օգտագործել իբրև ամրություն՝ բերդը պաշարելու ժամանակ): խոսքով ոչ միայն չի արգելում եկեղեցու կառուցումը, այլև հրաման է տալիս բերդը քանդելու և եկեղեցին նույն տեղում շինելու մասին³:

³ Գրասխանակերտցի, էջ 71:

Պարսից արքան դրանով ոչ միայն Սմբատ Բագրատունուն էր պարտահասուց լինում նրա բազմաթիվ բաշագործությունների և ծառայությունների համար՝ Պարսկաստանում, այլև աշխատում էր հայ եկեղեցուն սիրաշահել:



Նկ. 53. Մենավոր սյան զիսմամարի բար, գտնված Ավանի տաճարի բակում (V—VI դդ.)

Գրասխանակերտցուն հակառակ, զեպրերին գրեթե ժամանակակից Սերեսու պատմիչը Հովնան հակաթողիկոս Բագրատունուն ներկայացնում է իբրև բաղկերցնական:

Նա գրում է.

«Քաժանեցաւ ապա և Աթոռ կաթողիկոսութեանն յերկուս. անուն միոյն Մովսէս և միւսոյն՝ Յովնան: Մովսէս ի պարսից կողմանէ, և Յովնան՝ Յունաց:

Եւ Յովնան ընդ նոսա (ընդ յոյսն—Կ. Ղ.)

հաղորդեալ միաւորեցաւ, բայց Մովսէս ամենին ոչ լինէր ի նոսա հուպ»:

Գրեթե նույնն է ասում 10-րդ դարի պատմիչ Ռիստանես Եպիսկոպոսը: Նա գրում է.

«...ի բունալ թագաւորութեանն հայոց բաժանեալ եղև աշխարհս մեր ի մէջ հոռոմոց և Պարսից. եւ նստուցին կողմն հոռոմոց հակառակաթողիկոս Մովսիսի զՍեան ոմն երկարեակ. որ ոչ համարեցաւ ի թիւ հայրապետացն հայոց: Որ ապա և յետոյ Արրահամու եղև հակառակ»:

Մաղաքիա Օրմանյանն էլ այն համոզման է, որ Հովնան Բագրատունցին բաղկերցնական է եղել:

¹ Սերեսու, էջ 84:

² Ռիստանես Եպիսկոպոս, Պատմութիւն հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 63, Բ հատուած:

Մեջ բերելով Գրասխանակերտցու և Վարդանի կարծիքներն այն մասին, որ Հովնանը բաղկերցնական չի եղել, նա գրում է.

«Արդ, ի՞նչպես ընդունիլ որ հակաբաղկերցունիկ մնացող մը՝ կրցած ըլլա Մորիկի պաշտպանութունը վայելել: Որչափ այ կարեւոր ըլլա պատմաբանին (Գրասխանակերտցու—Կ. Ղ.) վկայության կշիւր, մենք սխալ պնդենք Յովնան Բագրատունցին բաղկերցնական զավանդության համակերպող և հետևող մը ըսել, մեզի հիմն ունենալով Սերեսուի վկայությունը, թէ Յովնան ընդ նոսա. այսինքն ընդ յոյսն, հաղորդեալ միաւորեցաւ»³:

Աստղիկն էլ գրում է, որ Մորիկն էլ Հովնան Բագրատունցուն կաթողիկոս կարգել հունական մասի վրա.

«Բնկ կայսր Մորիկ զՅովնան ոմն նստուցանէ կաթողիկոս մասինն Յունաց. և Արրահամ նստէր ի Գուլին»⁴:

Ավանի հակաթողիկոսության հիմնադրման մասին Գրասխանակերտցին տալիս է մանրամասն տեղեկություններ: Նա գրում է.



Նկ. 54. Մենավոր սյան զարգարանդակ բերդը, գտնված Ավանի տաճարի բակում (V—VI դդ.)

«Յետ այսորիկ ըստ հրամանի կայսերն Մորիայ զՅոնան ոմն ի գաւառէ Կողայ ի Բագրատան զեղջէ կացուցանեն կաթողիկոս Յունական կողմանն՝ բնակեցուցանելով զնա ի բաղարագիւղն Աւան, ուր և շինեացն իսկ ինքնին Յոնան զպայծառակեւոս բաւարանն սուրբ և շուրջանակի նորա յարգարեաց կալուածս կայանի իւրոյ: Բնկ մեծ հայրապետն Արրահամ, ըստ նախասաց բանին, ի Գուլին բաղարի բնակէր ի Պարսից բաժնի անդ, վասն

³ «Ազգայատում», գրեթե Մաղաքիա արքեպ. Օրմանյան, Կ. Պոլիս, 1909, հատ. Ա, էջ 529:

⁴ Աստղիկ, էջ 86:

տիտի արձանագրություն, կամ մի տողով՝ պատերի ամբողջ երկարությամբ, կամ մի որևէ ամփոփ տեղում՝ մի բանի տողով:

Կատուցման միատող արձանագրությունները փորագրվել են միայն VI և VII դարերում: Հետագայում այդպիսի արձանագրություններ բոլորովին չկան: Ասփորարար նրանք սկզբում են տաճարի հարավային պատի սկզբից, բարձուտա, շարունակվում մյուս կողմերի վրա և վերջնում այնտեղ, ուր ավարտվում է գրությունը՝ հյուսիսային պատի վրա:

Կարևոր է նաև «Գիրք թղթոց», որ դարձյալ ժամանակակից տարջուր է և իր էջերում պարունակում է բազմաթիվ փաստաթղթեր հայ-բյուզանդական դավանաբանական վեճերի վերաբերյալ:

Այդ երկուսի վրա պետք է գումարենք նաև Narratio-ն, որ հակառակ գիրքերից է գրված:

Սերեուսը թեև ստույգ տեղեկություններ է տալիս Ավանի աթոռի հիմնադրման վերաբերյալ, բայց սամաար հիշատակում է միայն Հովհան Բաղանցու մարմինն այնտեղ թաղելու կապակցությամբ, նշելով, որ Պարսկաստանում մեռնե-

հետ միտան, երբ պարսիկներն իրենց հետ տարան ապահովության համար Կարին փոխադրած հայոց եկեղեցու գանձերը: Գրտները նաև, որ պարսիկները Հովհանին Պարսկաստան հանելարեցին ոչ թե պատերազմից անմիջապես հետո, այլ մի երկու տարի անց: Գրասխանակերտցու ասելով.

«Իսկ Աշոտ ուն հրամանաւ Խոսրովայն հասնալ ի Հայս և զիմեալ ի վերայ՝ խորտակէր զգորան Յունաց, զի ոչ լինէր թիւ սպանելոցն ի դաշտին, և ինքն կախալ զգործ պատերազմի ընդ Կարնոյ բաղաբի՝ անոցք զնա: Եւ յետ երկեամ մի ամաց զընակիչս բաղաբին յԱմաստան փոխել: Եւ վասն զի ծերունի կաթողիկոսն Յոհան կայր ի փախտապահանութեան՝ ... վարեալ ի զերութիւն և անգէն վախճանեալ՝ բերաւ ի զիւղն Աւան, որ եղաւ մերծ յեկեղեցին, զոր իւր իսկ էր շինեալ»¹:

Նշանակում է, Հովհանը զերեվարությունից առաջ երկու տարի Կարինում մնացել է պարսկական իշխանության ներքո: Եթե Հովհանի մահը տեղի է ունեցել 610/611 թթ. և նախքան այդ էլ նա երկու տարի Կարինում մնացած է եղել պարսիկների հաղթանակից հետո և որոշ ժամանակ էլ, մինչև իր մահը, ապրել է պարսկական զերության մեջ, Հովհանի փախուստը Ավանից կլինի 608 թ. անվազն մեկ տարի առաջ: Այս մեր կարծիքը հաստատվում է նաև այլ տվյալներով:

Մատենադարանից ունանք (Գրասխանակերտցի, էջ 72, Ասողիկ, էջ 86) Հովհանին ժամանակակից են համարում Աբրահամ Կաթողիկոսին, սակայն դա սխալ է, որովհետև, ինչպես հայտնի է, Աբրահամը կաթողիկոս է ձեռնադրվել 607 թ. և նրա առաջին գործերից մեկն է եղել բյուզանդական իշխանության տակ անցած հայ հոգևորականների և իշխանների մասնակցությամբ ժողով հրավիրել «Ե.թն ու տասներորդ ամի Ապերունդ Խոսրովու արքայից արքային», որ համապատասխանում է մեր 607 թ., երբ արդեն Ավանի կաթողիկոսությունը վերացել էր և այդ ժողովին Ավանից մասնակցում էին այնտեղի կաթողիկոսության հետ անընդմեջ շփուտ կրեցներ:

Այդ ժողովի վերաբերյալ փաստաթղթի մեջ, որ վերնադրված է «Ձեռնարկ՝ զոր Եստոն Աբրահամու հայոց կաթողիկոսի ի միաորոշմանն աշխարհահայոց, այնտեղի որ էին ընդ իշխանութեամբ Հոռոմոց ի թագաորութեանն Մարկան», հիշատակված են մասնակցողներից շատերի անունները: Առաջնորդ կախկուպոսներից հետո

թվարկված են մեծ իշխանները, որոնց հաջորդում են դարձյալ մի խումբ կախկուպոսներ, հավանաբար երկրորդական կարգի, որոնցից հետո գալիս են վանքերի երեցները: Այս խմբի մեջ հիշատակված է Ավանի վանքի երեց Հունանեսը, որի անունը գրված է «արքայ Կաթողիկոսին (էջմիածին)», Հափսիմեի, Հովհաննաթանքի, Օշականի, Եղվարդի (գրված է Աղվարդալ), Երեանի երեցներից հետո և Պաղավանքի ու Երեանի մի այլ երեցից առաջ:

Քանի որ ոչ մասնակցողների ցուցակում և ոչ էլ բանադրված աղանդների շարքում ոչ մի բան չկա Ավանի հակաթոռ կաթողիկոսության մասին, դա արդեն ապացույց է, որ այնտեղի կաթողիկոսությունը, որ Գվնի աթոռի զլիսավոր թշնամին էր, այլևս գոյություն չուներ:

«Ձեռնարկի» բոլոր մասնակիցները նշվել են «գամենայն հերձուածողս», որոնց թվում «զԱբրիտ, և զՄակեդոն, զԵստոն, և զԵստիրոս, և զԱր ժողովն Քաղկեդոնի, և պիղծ տումարն Լեւոնի» և բոլորը միավորված ընդունել են այն ամենը, ինչ որ սահմանել են հայոց եկեղեցու երանելի հայրերը: Խոստացել են անշարժ պահել հայոց ավանդական եկեղեցին և հաջորդություն չունենալ բյուզանդական ազանդի հետ²:

Հակաբաղկեզոտական բնույթի այսպիսի համարձակ որոշում կայացնելու և նպատակ է Սմբատ Բագրատունու ներկայությունը, ինչպես նաև այն, որ այդ ժամանակ պարսիկները քաղաքական կյանքում մեծ առավելության էին հասել:

Այդ ժամանակ, այսինքն 607 թ., երբ գումարվել է այդ ժողովը, նույն թվականին էլ Հայաստանի մարզպան է նշանակվել Սմբատ Բագրատունին՝ իհարկե ժողովը հրավիրվելուց առաջ: Նույն թվականին Սմբատ Բագրատունին վերականգնեց Գվնի մայր տաճարը և նախկին անգրմբիթ եռանավ բազիլիկ եկեղեցին վերածեց շնչաված կողմնային խորաններ ունեցող խաչաձև տաճարի, որի նորակառույց հակաչական գմբեթը նստած էր զաջ՝ ինչի կենտրոնում բարձրացող չորս հաստահեղույս մույթերի վրա:

Հայտնի է, որ Հովհան Բագրատունցին Մովսես Եղվարդեցու մահվանից հետո (604) մեծ պայքար էր ծավալել Գվնի աթոռի դեմ, վերջնապես Քերթողի տեղապահության տարիներին (604—607): Նա էր, որ 606 թ. խանգարեց կաթողիկոսի բնաորությանը, երբ այդ նպատակով Հայաստանի հունաց և պարսից մասերի հոգևորականներն ու



Նկ. 58. Խաչքարերի բեկորներ, Ավանի տաճարի բազիլիկում:

Այժմյան ավերակներից երևում է, որ Ավանի արձանագրությունը միատող չի եղել: Եթե միատող լիներ, նրա որոշ մասերը մնացած կլինեին հյուսիսային պատին, որը բիւ է բանդղված և արձանագրության մնացորդներ պետք է ի հայտ գային տաճարի փլուտակների մեջ:

Այդ արձանագրությունը կարող էր գրված լինել մի ամփոփ տեղում, հավանաբար մի մեծ բարի երեսին, որն այժմ անհետացել է:

Ավանի տաճարի կառուցման ժամանակը որոշելու համար մատենագրական զլիսավոր աղբյուրը Սերեուսի պատմությունն է, որ գրեթե ժամանակակից է զեպոսիին և հետագայի պատմիչները մեծ մասամբ իրենց տեղեկությունները բազմել են նրանից:

յուց հետո «Բերաւ մարմինն նորա ի զիւղն Աւան՝ յեկեղեցին, զոր ինքն շինեաց»³:

Հովհանի մահը տեղի է ունեցել պարսից Խոսրով Փարվեզի զահակություն 21-րդ տարում, նա զահակալել է 591 թ., հետևապես Հովհանը մեռել է 610/611 թթ.:

Շատերը Ավանի տաճարի կառուցման վերջին հնարավոր թվականը համարում են նրա կառուցող Հովհանի մահվան այդ թվականը, այսինքն 610/611-ը: Այդ տեսակետը պաշտպանողները մոռանում են, որ Հովհանը իր մահից տարիներ առաջ փոխել էր Կարին, այնտեղից էլ իբրև գերի տարվել Պարսկաստան՝ Կարնո հայ բնակչության

¹ Սերեուս, էջ 123—124:

² Գրասխանակերտցի, էջ 73—74:

³ «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 151:

իշխանները հավաքվել էին Գլինում: Ինչպես Ստեփանոս Օրբելյանն է գրում, կաթողիկոսի ընտրությունը «ոչ հաջողեցաւ այն անգամ», որովհետև Մովսէսի մահովանից հետո Հովհանն ինքն էր ուզում գրանդոյ հայ եկեղեցու միակ կաթողիկոսը, բայց հակաբաղկեղնական հոսանքն ուժեղ էր և ընտրությունը չկայացավ:

Հաջորդ տարում փոխվում է թրվածիակը: Մտքաւոր Քաղաքատունին, Պարսկաստանում բազմաթիվ բաշարթոյնություններ անելուց հետո, ինչպես սասցինը, նուրով Գարվեղի 17-րդ տարում, այսինքն 607 թ. զայիս է Հայաստան իբրև մարզպան և անմիջապես ձեռնամուխ լինում կաթողիկոսի ընտրության և հայոց եկեղեցական գործերի կարգավորման:

Նա ընտրությունը Մշտունյաց եպիսկոպոս Աբրահամին հայոց կաթողիկոս է նստեցում, այնուհետև նորոգում է մայր եկեղեցին, Հայաստանի Բյուզանդիային անցած մասի հողերը պետերի և աշխարհիկ իշխանների ժողով է հրավիրել տալիս կաթողիկոսի միջոցով՝ հայոց եկեղեցու մեջ առաջացած տարածաշնորհություններ վերացնելու նպատակով: Այդ ժամանակ Հովհան Բագարանցին արդեն փախել էր Կարին և լքել իր աթոռը:

Մեր մտածնազորներից երկուսը՝ Գրասխանակերտցին և Ասողիկը թվական տվյալներ ունեն Հովհան Բագարանցու կաթողիկոսության տեղուրության վերաբերյալ, բայց նրանք թվերի մեջ տալով տարբար տարբերություն կա: Գրասխանակերտցին գրում է, որ Հովհանը վախճանվեց «կայսրյա զաթոս հայրապետության ամս ԻՉ», այսինքն 26 տարի, դրան հակառակ Ասողիկը տեղեկացնում է, որ Հովհանը «կայսրյա թաթոս ամս 16»: Տարբար տարբար տարբերությունը, անշուշտ, հետևանք է գրասխանի և ոչ թե հեղինակների մտածնազորական տարբերության և անկասկած է, որ ճիշտն Ասողիկն է: Այդ սխալը, բոտ երևում էր անաշխատի էր շատ հնում, բանի որ XIII դարում մի բանի մատենագիրներ կրկին ևն Գրասխանակերտցուն (Կիրակոս Գանձակեցի, Վարդան): Ասողիկի վկայությունը Հովհան Բագարանցու կաթողիկոսությունը հասնում է մինչև 607 թ., որ, ինչպես տեսանք, հաստատվում է այլ տվյալներով ևս, իսկ եթե ընդունենք Գրասխանակերտցու նշած թվականը, Հովհանի կաթողիկոսությունը հասնում է մինչև 617 թ., որ բոլորովին չի համապատասխանում այդ ժամանակների պատմական աղբյուրին:

Հովհան Բագարանցու ժամանակի վերաբերյալ բոլորովին սխալ տեղեկություն է տալիս XIII դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին: Հակառակ զեպրերին ժամանակակից Աբրահամի, որը Հովհան հակաթոռն իրավացիորեն համարում է Մովսէսն եղվարդեցու (574—604) ժամանակակից, ասելով՝ «Բաժանեցաւ ապա և թաթոս կաթողիկոսութեան յերկուսս. անուն միուն Մովսէս, և միտայն՝ Յոհան»², Կիրակոս Գանձակեցին Հովհանին համարում է Աբրահամ Աղբաթանեցու հաջորդ: Նա գրում է.

«Ճե յետ տեանն Աբրահամու տանու զկաթողիկոսութիւնն տէր Յոհան, ի Կողովակ, ի զեղջէ Բագարանէ, ամս քանն և վեց. ոմանք ի պատմագրաց զերկուսեանն ի միում ամի ասնն վախճանեալ զԱբրահամ և զՅոհան, և կէսը ոչ»³:

Գանձակեցու գրածի անձնությունը իմացվում է թեկուզ միայն նրանով, որ, ինչպես հայտնի է, Աբրահամը կաթողիկոս է եղել 607 թ. մինչև 615-ը, երբ Մորիկ կայսրը վաղուց արդեն վախճանվել էր (նրան սպանել են 602 թ.), հետևապես նա չէր կարող իր մահովանից հետո հակաթոռ կաթողիկոսություն ստեղծել Ավանում: Եթե Գանձակեցուն հավասանք, Հովհանը կաթողիկոս է եղել 26 տարի և հաջորդել է Աբրահամին, նշանակում է նրա կաթողիկոսությունը հասել է մինչև 640-ական թվականները, որ բացարձակ սխալ է: Այդ ժամանակամիջոցում, ինչպես հայտնի է, կաթողիկոս են եղել Կոմիտաս Աղջեցին (615—628), Քրիստափոր Ապահունին (628—630), Եպր (630—641):

Գանձակեցու այս սխալն առաջ է եկել այն բանից, որ նա Հովհան Բագարանցուն դրել է հայոց կաթողիկոսների շարքի մեջ, առանց ուշք դարձնելու, որ նա հակաթոռ է եղել և չի նախորդել կամ հաջորդել հայոց կաթողիկոսներից և ոչ մեկին, հետևապես նրա կաթողիկոսությունը գուրդան է եղել և նրա գահակալության առանձին տարիներ չպետք է հասկանանք:

Այս բոլորից եզրակացնում ենք, որ Հովհանի փախուստը Կարին տեղի է ունեցել 607 թ., Գլինի ժողովից առաջ, և գրանով վերացել է Մորիկ կայսեր հիմնած Ավանի հակաթոռ կաթողիկոսությունը:

Narratio de rebus Armeniae-ի մեջ ասված է, որ Հովհան հակաթոռը գահի վրա մնացել է 14

տարի, մինչև Մորիկ կայսեր մահը, որ, ինչպես ասացինք, տեղի է ունեցել 602 թ., բայց մի բանի ստորից հետո ճշտում է, նրա վերացման թվականը կապուցվել պարսից նուսրով արքայի Հայաստանը գրավելու հետ և ավելացնում է, որ «Գա այն ժամանակ էր, երբ հերետիկոս Աբրահամը կաթողիկոս դարձավ»:

Երևում է, որ Մորիկի սպանությունից հետո, Ավանի կաթողիկոսությունը անկում է ապրել, թեև մինչև Մտքաւոր Բագարանու ձանցես զայն իր դուրսությունը պահպանել է և նույնիսկ կարողացել է 606 թ. խանգարել հայոց կաթողիկոսի ընտրությանը:

Հասկանալի է, որ Ավանի տաճարը կառուցվել է հակաթոռ կաթողիկոսության հիմնադրումից առաջ, այսինքն 590-ից առաջ և այդ թվականին էլ նա դարձել է կաթողիկոսության աթոռանիստ՝ Հայաստանի հունական մասի համար:

Բյուզանդական Հայաստանի բաղաբանական կենտրոնը թեև Կարին բաղաբան էր՝ Քնեզուպոլիսը, բայց կաթողիկոսությունը Ավանում՝ բյուզանդական տիրապետության սահմանադրվածի հիմնեցին, որպեսզի նա ժողովից պաշարի Գլինի հայոց կաթողիկոսության դեմ:

Աբրահամը ասում է, որ Հովհանը կաթողիկոս է ձեռնադրվել իր ծերության ժամանակ, երբ ճանաչված է հեղինակավոր հոգևորական էր: Նա գրում է.

«Երանելի ծերունի կաթողիկոսն Յովհանն ի գերութիւն վարեցաւ»⁴:

Եթե այդ ծերունին մոտ 60—65 տարեկան լինելը կաթողիկոսի ժամանակ, ուրեմն կաթողիկոս պետք է ձեռնադրված լինել մոտ 50 տարեկան հասակում:

Կարծում ենք, որ Հովհանը մինչև կաթողիկոս ձեռնադրվել իր հիմնադրած վանքի վանահայրն է եղել և երկար ժամանակ զբաղվել է շինարարությամբ և վանքի միարանություն ու տնտեսություն կարգավորումով:

Այս բոլորից եզրակացնում ենք, որ Ավանի տաճարը կառուցվել է ամենաառաջ 580-ական թվականներին, հակաթոռ կաթողիկոսության հիմնադրումից առաջ և ոչ թե VI դարի 90-ական թվականներին կամ VII դարում, ինչպես ընդունված է մինչև այսօր, բացառությամբ Քորտա Քորտամանյանի, որ Ավանի տաճարի կառուցումն իր աշխատություններում անվերապահորեն դրել է VI դարի մեջ:

Ավանի տաճարի հորինվածքի մեջ եղած հնամենի ձևերը ևս ապացուցում են նրա VI դարում կառուցված լինելը և բոլորովին չեն կապվում VII դարի հետ:

Սակայն այդ հարցին կանդաղադանանք ստորև:

Գ. ՃԱՏԱՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՐԻՆՎԱԾՔԸ

Ինչպես արդեն ասել ենք, Ավանի տաճարով հայկական ճարտարապետության մեջ հիմք է դրվել տաճարների մի նոր հորինվածքի, որն արտաքինից ուղղանկյուն բառանկյունի տեսք ունի՝ արևելքից զեպի արևմուտք ձգված, իսկ ներսից՝ խաչաձև է, շորս անկյուններին կառուցած

³ Ա. Երեմյանն իր մի հոդվածում («К вопросу о датировке кафедральной церкви в Аване», «Հրատարակչություն հայկական գիտությունների», 1969, № 3, էջ 47—62), հենվելով XIII—XIV դդ. պատմագիր Ստեփանոս Օրբելյանի վրա, այն կարծիքն է հայտնում, որ իբրև թե Հովհան Բագարանցին սկզբում որոշ ժամանակ կաթողիկոսություն էր պահպանում և հետո հեռացավ (до с здания католикосата в Аване Иоанн был католикосом в Карине), այնուհետև նա իր աթոռն տեղափոխել է Կոտայքի Արամուս գյուղը և վերջում էլ եկել նստել է Ավանում:

Այս միակշարման սխալ եզրակացության նա ճանդել է պատմագրին ճիշտ չհասկանալու պատճառով: Պատմագրի այն արտահայտությունը, թե «Յովհանն անի Քնեզուպոլիս եղև կաթողիկոս, և եկեալ եղ արքայի Կոտայքի յերամուսն զիւր» (Ստ. Օրբելյան, էջ 90—91), պետք է հասկանալ, որ Հովհանը կաթողիկոս է ձեռնադրվել (կարողիկոս եղավ) Քնեզուպոլիսում և զայով իր աթոռը հաստատեց (դրեց) Կոտայքի Արամուս գյուղում և ոչ թե նա կաթողիկոսություն է արել Քնեզուպոլիսում և հետո եկել Արամուս: Բացի այդ, Արամուսն ու Ավանը իրար ժողով գյուղեր լինելու հետևանքով Օրբելյանը չի տեսել է միմյանց հետ և Ավան զրեկտ փոխարեն Արամուս է դրել: Այդ երևում է նրանից, որ այդտեղ Օրբելյանը ոչ մի ակնարկ չունի Ավանի մասին: Ըստ Օրբելյանի, Հովհանը ոչ թե Ավանում, այլ Արամուսում է հաստատել իր աթոռը և այնտեղ էլ մնացել:

Մեզ անհասկանալի են նաև Երեմյանի առաջարկած իրարմանք թվականները: Հորվածի վերջում, երբ հանդիմանների 1-ին կետում նա գրում է, որ Հովհանը կաթողիկոս է եղել 584-ից մինչև 610 թվականը (Иоанн Багаранич был католикосом с 584 по 610 гг.) 20 տարի (Գանձակեցու համաձայն), իսկ մի քանի տող հետո, նույն երբահանդումների 4-րդ կետում գրում է, որ Ավանի բաղկերչունի կաթողիկոսությունը իր գոյությունը զպարբերեց 602/3 թթ. (в 602,3 гг. халкедонитский католикосат в Аване прекратил свое существование):

Անըզունելի են նաև Ավանի տաճարի կառուցման Երեմյանի առաջարկած թվականները: Հիմնական վերջը 588/590 և ավարտը՝ 595/597: Տաճարի կառուցումը Երեմյանը ետ է բերել դեպի 590-ական թվականները այն սխալ կաթողիկոսության պատճառով, որ իբրև թե Հովհանը իր կաթողիկոսությունը Կոտայքում սկսել է Արամուս գյուղում:


¹ Ստեփանոս Օրբելյան, էջ 98:

² Աբրահամ, էջ 54:

³ Կիրակոս Գանձակեցի, էջ 50:

⁴ «Բանքեր Արամուսագրանի», № 6, էջ 407:



⁵ Սերեյա, էջ 123:



13. Ավանի տաճարի հասակաձևը
Չափագրություն՝ Շ. Ազատյանի:

չորս ավանդաձևերի պատճառով: Այս տիպի տաճարները գմբեթավոր են, բայց տաճարի մեջ գրմբեթակիր մույթեր կամ սյուներ չկան, այլ բավականին մեծ գմբեթը նստած է լինում ավանդաձևերի առաջի կիսաբոլոր նախամուտքի զեպի եկեղեցու կենտրոնին մոտեցող մասերի վրին:

Ավանի տաճարի ճարտարապետական հորինվածքը դրսի երկրներից չի եկել Հայաստան և պատվաստվել այստեղ: Նա չի մշակվել և ձևավորվել տարբեր երկրների համագործակցությամբ, ինչպես, ասենք, այդ սեղի է ունեցել բաղրիվ



14. Ավանի տաճարի ամ ճակատը
Չափագրություն՝ Շ. Ազատյանի:

Այս տաճարների առավելությունը մույթեր և սյուներ ունեցող բոլոր տեսակի եկեղեցիների համեմատությամբ ակնբախ է: Կարևորն այն է, որ այստեղ դաճիճն ամբողջական է և սյուների ու մույթերի պատճառով չի մասնատվում, լույսը թափանցում է ամեն կողմ և լուսավորում դաճիճի բոլոր անկյունները: Առանց սյուների կանգնած բարձրասյուց գմբեթը տաճարին վեհություն է հաղորդում և ներս մտնողի առաջ անմիջապես բացվում է ամբողջ դաճիճն իր բոլոր անկյուններով ու բարձրադիր բեմով: Այցելուն ակամայից իր հայացքը հեռոճեսե բարձրացնում է մինչև լուսավոր գմբեթը, հակառակ սյուներ ունեցող դաճիճների, որոնց մեջ մտնողի առաջ ծառանում են ներքին սյուներն ու մույթերը, խանգարում են կալիչու դաճիճի ամբողջությունը, իսկ մույթերի վրի կամարներն ու անգմբեթ թաղերը ճնշող տպավորություն են գործում և մթազնում դաճիճը:

տիպի տաճարների հորինվածքում, որոնք, բացի Հայաստանից, մեծ տարածում ունեն նաև Հայաստանից դուրս, Ասորիքում, կամ այլ երկրներում և երբեմն ավելի հին են քան Հայաստանի շատ օրինակները:



Ինչ խոսք, որ Հայաստանի և մյուս երկրների բաղրիվ տաճարները մասնամասնություններով տարբերվում են միմյանցից և Հայաստանում ազգային զունավորում են ստացել, բայց բոլոր դեպքերում նրանք պաճպանել են իրենց հորինվածքի բնորոշ ընդհանուր գծերը:

Առաջներում կարծում էին, թե բաղրիվ տիպի տաճարները Հայաստան մուտք են գործել Ասորիքից կամ Հունաստանից, հայերի բրիտանոսություն ընդունելուց հետո: Այժմ հայտնի են այդ տիպին պատկանող տաճարներ, որոնք Հայաստանում կառուցվել են բրիտանոսության մուտքից շատ առաջ, հեթանոսության դարերում: Ռոմ լավագույն օրինակը Դվինի մայր եկեղեցին է:

Նա սկզբնապես կառուցված է եղել իբրև հեթանոսական տաճար, բրիտանոսության մուտքից առաջ, հավանաբար II դարում: Քրիստոնեության

Գմբեթավոր անսյուն դաճիճները տաճարների զարգացման մեջ մի քալլ առաջ են սյուներ ունեցող հոանավ հորինվածք ունեցողներից:

մուտքի ժամանակ վեր է ամփել եկեղեցու: Պատմությունից հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ Գրիգոր Լուսավորիչը հայրց, վրաց, աղվանից թագավորների հետ հին հեթանոսական տաճարները բրխատենակալի վերածնեց և բրմերին էլ վարդապետ ձեռնարկեց: Հայկական հնագույն տաճարների հեթանոսական ծագման մասին իր աշխատություններում բազմիցս նշել է Քորոս Քորամանյանը²:



15. Ավանի տաճարի՝ աև ճակատը:

Չափագրություն՝ Մ. Ազատյանի:

Մեր խոսքը դարձյալ մասնավորելով Ավանի մասին, պետք է շեշտենք, որ նրա հորինվածքը Հայաստանում առաջացել է ձեռքի ներքին պարզացման հետևանքով:

Քորամանյանը մի տեսություն դարգազրեց էջմիածնի տաճարի և նրա օրինակով կառուցված այսպես կոչված հինգ գմբեթանի հայկական տաճարների վերաբերյալ, որոնցից առաջինը, էջմիածնից հետո, Ավանի տաճարն է համարել:

Հետագայի ուսումնասիրությունները հշտեցին, որ էջմիածինը, Ավանը և մյուս եկեղեցիները սկզբնական շրջանում հինգ գմբեթներ չեն ունեցել,

¹ Գ. Ղափաղալյան, Գլխի բազալը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 88—109:

² Քորոս Քորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության հատ. Ա, էջ 106—109 և բազմաթիվ այլ էջեր:

բայց մեկ թվում է, որ Քորամանյանը ճիշտ է այն բանում, որ էջմիածնի տաճարը, որի հորինվածքը կապված է Գրիգոր Լուսավորչի տեսլիքի հետ, այսօրին համարվել է հայկական եկեղեցու տիպար, չորս սյուների վրա զրված գմբեթով, նվիրագործվեց հեթանոսությունից եկող բազիլիկ շենքերի կողքին և նրանից հետագայում առաջ եկան հարիսիմատիպ տաճարները:

Հայրց հնագույն տաճարներն այսնդատներ

չունենին և նրանց անհրաժեշտությունն էլ չկար, որովհետև նրանք դեռևս թանկարժեք գույք չունեին, կամ այնքան շատ չունենին, որ գույքի պահպանության համար եկեղեցու ներսում առանձին բաժանումներին պետք լիներ:

Սակայն, մեկ դար էլ չանցած, եկեղեցու սկզբնական պարզ արարողությունները փոփոխությունների ենթարկվեցին և հետզհետե հարստացան: Առաջ եկան և արմատավորվեցին հոգևոր և պատարագի հանդիսավոր երգեր: Եկեղեցին ճոխացավ թանկարժեք սպասով և հանդերձանքով, սրբոց մատուցներով, ոսկյա և արծաթյա խաչներով, ասեղնագործած ծածկոցներով և վարագույրներով, արծերավոր զորգերով, մագաղաթյա ձեռնագիր գրքերով, որոնք պահպանելու համար անհրաժեշտ պայմաններ չունենին հնագույն պարզունակ եկեղեցիները: Հայրց եկեղեցու կանոնների

մեջ հատուկ կետեր են գրվել գույքի պահպանության վերաբերյալ: Օրինակ, ներսես Պարթևի կանոնների մեջ գրված է՝



«Պաշտածն և պատարագիր և սպասք օրրոյ եկեղեցոյն ի զխաւոր բահանային տան եղիցի, որպէս յառաջագոյն կարգեալ է»:

Եվ ավելացնում է.

«Եւ ինքն զխաւոր բահանայն զեկեղեցին մի՛ իշխեսցէ թողուլ և գործոյ տան պարսպել, այլ մշտնջենատօր ի սուրբ եկեղեցոյն կացցէ, զի պաշտածն և աղաւթին տունջեան և պիշերոյ ժամօցն և զտեսչութիւն ժողովրդոցն մի խափանեսցէ»:

տագործելու համար: Կանոններ են գրվել այդ կարգի օրինազանցություններն արգելելու վերաբերյալ:

«Եւ լսեմ թէ զեկեղեցոյ սպաս, մանաանդ զվարագրոյ ի հարսանիս առագաստ փեսայի և հարսին, և զսկի՛հ գինի ըմպելոյ յանաթս տան զինուորաց, վասն որոյ զբահանայն զայն արժան է խլել ի կարգէ իրմէ, վասն այդպիսի խառնակ և շար գործոց...»³: Անգամ տեղեկություններ կան այն մասին, որ բահանաները ծախել են եկեղեցու գույքը, առանց կանոնավոր փաստաթղթերի և առանց վկաների: Այդ բոլոր անկարգություններից աղաավելու



16. Ավանի տաճարի՝ հս ճակատը:

Չափագրություն՝ Մ. Ազատյանի:

Սահակ Պարթևի կանոնների համաձայն եկեղեցու գույքը ասածունն է, և եպիսկոպոսը գույքի պահպանելն միայն և ոչ ուրի:

«Տեսանես զի Աստուծոյ են ինչքն, բանգի իր համարի գտօրան մեր, և ոչ մարդոյ ումեր, բայց միայն պահպան և վերակացու է տեսուչ եպիսկոպոսն: Բազում սպա զգուշութեան պէտք են եպիսկոպոսին և երկիրի...»⁴:

Եկեղեցական ավանդը աներում պահելն էլ վտանգավոր էր. հոգևորականները օգտագործում էին և շատ անգամ վարձով տալիս հարսանիքներում և զինվորականներին իրախճանքներում օգ-

և եկեղեցու ավանդներն անվտանգ պահպանելու միակ էլքը եկեղեցիներին կից առանձին պահեստատուն ունենալն էր, ավանդները պահելու տեղ, ...⁵, պատահաով եկեղեցիներին կից կառուցեցին փոքրիկ սենյակներ, որոնք կոչվեցին ավանդատուն՝: Վ որպից սկսած, նրանց կողքին իբրև հա-

³ Նույն տեղում, էջ 379, կանոն ԻԱ:

⁴ Հայրց եկեղեցու ավանդատները 12—13-րդ դարերից սկսած կոչվեցին հաս խորաններ (աշակողմյան խորան, ձախակողմյան խորան), որովհետև այդ ժամանակվանից սկսած նրանց մեջ, պատարագի վեճարարը զրվեցին՝ եկեղեցու բազմաթիվ նվիրատուների արչառության կամ հիշատակի համար պատարագ մատուցանելու համար:



⁵ Հայրց եկեղեցական օրենքների համաձայն միևնույն խորանում օրվա ընթացքում միայն մի պատարագ (զոհարիություն) կարելի էր կատարել:

¹ «Կանոնագիրը Հայրց», Ա, աշխատասիրությամբ Վաղյան ճակոբյանի, Երևան, 1964, էջ 484, կանոն ԺԳ:

² Նույն տեղում, էջ 413, կանոն ԾԲ:

վելված, փոքրիկ սենյակներ կառուցեցին՝ բաձանայի բնելու և ավանդները պահելու համար:

Այդ սենյակների սկզբում կառուցում էին եկեղեցու արևելյան ծայրին, հյուսիսային կամ հարավային կողմերում, որտեղ եկեղեցու խորանն էր և սպասարկող անձնակազմին հատկացված բաժինը, ժողովրդի համար արհելված մասը:



17. Ավանի տաճարի հր ճակարակ:

Չափադրություն՝ 5. Ազատյանի:

Սկզբում կառուցվող ավանդատներն ամբողջությամբ դուրս էին ցցված եկեղեցու ընդհանուր կազմությունից: Մինչև օրս պահպանվել է Քասաղի եռանավ տաճարի հյուսիս-արևելյան ծայրի ավանդատներ, որ V դարի հավելված է, շուտափույթ կերպով կառուցված, նրա պատերի ուղղությունն անգամ շին կարողացել հարմարեցնել բուն եկեղեցու պատերի ուղղությանը¹:

Ավանդատների զարգացման երկրորդ փուլը սկսվել է հինգերորդ դարում, երբ նա կառուցվում էր եկեղեցու հետ միասին, մի ընդհանուր նախագծով:

Այդպիսի ավանդատներ ունեն Տեկորի տաճարը (V դ.), Նրեույսը (V դ.), Դվինի միանավ տաճարը (VI դար) և այլն: Այստեղ գլխավորն այն է, որ ավանդատուն իր մի մասով արդեն մտնում է տաճարի կազմության մեջ, բայց կիսով

շափ էլ նրանից դուրս է մնում: Կառուցողներն այդ դուրս մնացած մասն օգտագործել են տաճարի շրջապատի սյունասարհը նրա արևելյան ծայրում փակելու համար:

Ավանդատների զարգացման երրորդ փուլը կարող ենք համարել այն ժամանակաշրջանը (VI—VII դդ.), երբ ավանդատները լրիվ շափով ընդ-

գրկվեցին տաճարի ուղղանկյուն բառանկյունու մեջ և դրանով իսկ եկեղեցու ներսում առաջ եկավ խաչաձևություն, որ շուտով դարձավ հայտնի եկեղեցու հատկանիշներից մեկը:

Մենք այստեղ չենք խոսում հատկաձևերի մյուս տարրերակների մասին, որոնք այնքան մեծ առատություն հանդես եկան VII դարում և մշակվեցին տարբեր ուղղություններով, փոքրիկ խաչաձև տաճարներից սկսած մինչև բազմանիստ եռահարկ Ջվարթնոցը, որովհետև նրանք շին արնչվում մեր այստեղ առաջադրած հարցի հետ, սակայն որոշակի կերպով կարող ենք պնդել, որ եկեղեցու հատակագծերի ներքին խաչաձևությունը կարևոր հանգումանը հանդիսացավ տաճարների գմբեթակիր ծանր մույթների վերացման համար, և այդ կարևոր երևույթը առաջին անգամ տեսնում ենք Ավանի տաճարում²:

¹ Քասու Քուրմանյան, նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատ. Ա, էջ 118, Արևմտեղ Սահելյան, Քասաղի բազիլիկայի ճարտարագիտությունը, Նրեույս, 1955, էջ 26:

² Ա. Յակոբսոնը և Ն. Տեկորսկին այն կարծիքն են հայտնել, որ թեպետ մեզ ծանոթ հոփոսիմեստիպ տաճարների ամենահին օրինակը Ավանի Կաթողիկեն է, բայց նա իր բարդ հորինվածքով հազիվ թե կարողանա առաջին օրինակը


Այս բոլորից հետևում է, որ Ավանի տաճարը, ինչպես նաև նրա հորինվածքն ունեցող մյուս բոլոր եկեղեցիներն առաջ են եկել տեղում, զարգացման ներքին օրինաչափությունների հիման վրա և դրանց առաջին օրինակը Ավանի տաճարն է:

Ավանի տաճարն իր պատերի արտաքին երեսին խորշեր չունի, ինչպիսիք ունեն VII դարում կառուցված նույն տիպին պատկանող բոլոր եկեղեցիները (Հոփոսիմես, Քարգմանաց, Միսավան, Արհաման), ինչպես նաև Վրաստանի օրինակները (Մցխեթի, Աթենի տաճարները):

Իրենց հիմնական դերից (պատերի ավելորդ թանձրությունը պակասեցնելուց), տաճարի արտաքին երեսների զլխավոր դերեցիվությունն են հանդիսանում:

Ավանի տաճարի կառուցման ժամանակ այդ խորշերի մասին զեռուս հատկացություն չեն ունեցել և այդ պատճառով էլ խորշեր չեն արել:

Ավանի տաճարն իր տիպի մյուս հուշարձանների համեմատությամբ ունի հնություն և նախնականության նաև մի շարք այլ հատկանիշներ, որոնք ի մի հավաքած հաստատում են նրա նա-



18. Ավանի տաճարի դեպի հր կործանք:

Չափադրություն՝ 5. Ազատյանի:

Շին տաճարները, որոնք ներսից և դրսից բառանկյուն են, պատերի մեջ գանգվածային և թանձր մասեր չունեն: Նրանց պատերը, եթե հաշվի չառնենք թաղերը և որմնամույթերը, ամենուրեք նույն թանձրությունն ունեն, իսկ երբ առաջ եկան հոփոսիմեստիպ տաճարները, արտաքինից բառանկյունի, իսկ ներսից խաչաձև, պատերի որոշ մասերը թանձրացան: Այդ թանձր մասերը թեթևացնելու նպատակով նրա արտաքին երեսին անկյունավոր խորշեր են արվել, որոնք բացի

խառնուրդ լինելը բոլոր մյուս օրինակների համար:


Առաջին հերթին պետք է նշենք պայտածե կամարների գոյությունը, տաճարի արևմտյան մուտքի գլխին: Ինչպես հայտնի է, պայտածե կամարները Հայաստանում գործադրության մեջ են եղել միայն IV—VI դդ., իսկ ավելի ուշ, VII դարում նրանք ամենուրեք փոխվել են կիսաշրջան միակենտրոն կամարների:

Բացի այդ, Ավանի տաճարի ամ մուտքը, որ գլխավորն է այդ պատի կենտրոնում և այդ

(ինն): Նրանց կարծիքով, որնեն, եղել են նաև ավելի նախնական և ավելի հին օրինակներ, որոնք մեզ չեն հասել: Մենք այդ կարծիքի դեմ չենք կարող առարկել, որովհետև Արևմտյան Հայաստանի հայ ճարտարագիտությունն ամբողջությամբ ոչնչացել է գրեթե ամբողջ ուսումնասիրության, թեև Արևելյան Հայաստանում էլ կարող էին լինել այդպիսի ոչնչացած հուշարձաններ:

¹ Գեորգի Չորինաչիլին հակադրվելով բոլոր հայ, ուսումնասիրողներին, Ավանի տաճարի արտաքին խորշերի բացակայությունը փոխանակ նրա հնության հասկանալու համար, կառուցող ճարտարագետի անշուքությունն է փրագրել: Գ. Чубинашвили, Разыскания по Армянской архитектуре, Тбилиси, 1967, стр. 14.

պատճառով շրջորհն զարգարված է, հետագայում փոփոխության է ենթարկվել և կարկատաններով փոքրացվել, բայց այդ փոփոխությունների ժամանակ հինը չեն քանդել, այլ նույնությամբ պահպանել են տեղում: Մուտքն ամբողջովին վերցրած հնություն մի նմուշ է և նրա ձևավորման մեջ մտած որմնախոյանները, որոնք շատ նման են V դարում կառուցած Երեբունյի տաճարի խոյաններին, Գ. Չուբինաշվիլու կարծիքով դրանք մի այլ, ավելի հին հուշարձանի վրայից են հանվել և այդտեղ օգտագործվել:



19. Ավանի տաճարի զեպի ամ կորվածքը: Չափազորություն՝ 5. Ազատյանի:

Սակայն մասնազետ լինելու հարկ չկա հասկանալու համար, որ այդ խոյանները մուտքի ձևավորման մյուս տարրերի հետ միասին մի ամբողջություն են կազմում և դրանք խորթ չեն Ավանի տաճարի համակառուցիչին:

Հնության արդյունք են նաև պատուհանների և բիվի ատամնաշար զարդաձևերը, ինչպես նաև գմբեթի տակ իրրև նրա հիմքը հանդիսացող կամարների գլխի բառակուսուց բազմանկյունու անցնելու յուրօրինակ միջոցները: Այդտեղ երկու տար-

րեր ձևեր են օգտագործվել միաժամանակ՝ իրար հաջորդող կամարների և առաջատավոր ձևեր:

Յուրօրինակ կազմություն ունեն Ավանի տաճարի ավանդատները: Հատակագծում նրանք բուլբուլային են և իրենց այդ ձևով միակ օրինակն են հայկական ճարտարապետության մեջ: Տաճարի արևմտյան կողմի լավ պահպանված մասերից երևում է, որ Ավանի ավանդատներն իրենց գլխին գմբեթ չեն ունեցել, հետևապես նրանք բարձր և երկնապայց են եղել, ծածկված սֆերիկ թաղով:

Գմբեթի թմբուկից ոչինչ չի պահպանվել:

1679 թ. մեծ երկրաշարժից քանդվելուց հետո հետզհետե բալբալվել ու ուշնացել է: Պեղումների ժամանակ ևս մնացորդներ չեն հայտնաբերվել, բայց նկատի ունենալով զարաշրջանը, կարծում ենք, որ հիշտ է պրոֆ. Բ. Աղաբաբյանի այն ենթադրությունը, որ տաճարն ունեցել է ութը կողերով բազմանիստ գմբեթի թմբուկ:

Ն. Մ. Տոկարսկին ուշադրություն է դարձրել այն բանի վրա, որ Ավանի տաճարի պատուհանների ատամնաշարերն անմիջապես լուսամուտի կզրին են, առանց որոշ չափով նրանից բարձր լի-


² P. Մ. Агабабян, Композиция купольных сооружений Грузии и Армении, Ереван, 1950, стр. 60.

նելու: Այդ երևույթը ևս նա համարում է հնից եկող սովորություն, որովհետև նույն բանը նա նկատել է նաև IV դարում կառուցված Քասախի տաճարում:

Հիշատակության արժանի է նաև այն, որ Ավանի տաճարի հարավ արևմտյան ավանդատան մուտքի կիսաբարի կենտրոնական մասի ծանրությունը թեթևացնելու նպատակով նրա վրայի երկարավուն երկու բարերն իրենց տակի մասում արանքներ ունեն և իրար վրա նստած են միայն ծայրերի կրունկներով:

մաշխարհային առաջին պատերազմը և զրավոր աղբյուրների ու ճարտարապետական բնութիւյան հիման վրա այն թվագրեց VI դարով, գտավ, որ կառուցված է էջմիածնի հասակագծային ձևերի հիման վրա և ունեցել է նրա նման հինգ գմբեթ՝ կենտրոնականը՝ զահիճի գլխին՝ մեծ, իսկ մյուս չորս փոքրերը՝ նստած են եղել շրա բուլբուլի ավանդատների գլխին:

Քորամանյանն իր աշխատությունների մեջ նշել է, որ Ավանի տաճարն առաջինն է Հոփսիսի մեատիպ բուլբուլ հայկական եկեղեցիների մեջ և



20. Ավանի տաճարի զեպի հա կորվածքը: Չափազորություն՝ 5. Ազատյանի:

Գ. ԱՎԱՆԻ ՏԱՃԱՐԻ ՏԵՂԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ներկա աշխատության նախորդ էջերում արդեն նշել ենք հայ ճարտարապետության համար Ավանի տաճարի ունեցած կարևորությունը, իսկ այժմ, միակողմանի շինելու համար, խիստ համառոտ կերպով, մեջ բերենք նրա մասին եղած թեթև ու զեմ կարծիքները:

Առաջինը Քորամանյանն էր, որ ուշադրություն դարձրեց Ավանի տաճարի վրա, զեռ նախքան հա-

նրա օրինակով են կառուցված նույնատիպ բուլբուլ տաճարները, այս ախպի տաճարներն իրենց կատարելությունը հասան Հոփսիսի հարկնվածքի մեջ:

Քորամանյանի կարծիքով (ինչպես նաև Վինենայի պրոֆ. Ժ. Ստրիգովսկու) Հայաստանի տաճարների այս ձևը աղբյուրություն է ունեցել Բյուզանդիայի ճարտարապետության վրա, որտեղ առաջ են եկել նույնատիպ տաճարներ: Նա գրում է.


«...Անիի և Բյուզանդիանի մեջ իրարու այնքան նման եկեղեցիներ իրարմ են անկախ ինչպես երևան գայերնին զուցե անբացատրելի մնար, և կամ առաջնության մրցանակը Բյուզանդիանը շահեր, եթե բարերախոտարար VI դարու վերջին Հոհան կաթողիկոսի՝ երևանի մոտ Ավան գյուղի մեջ կանգնած ներբուստ խաչաձև և հինգ գմբեթանի եկեղեցին կհաս-

¹ «Անիարհներ հայ ճարտարապետության պատմության» (Երևան, 1964, էջ 82) խմբակառ աշխատության մեջ Սա. Մուսաբախյանը հավանական է համարել, որ Ավանի գմբեթը ունեցած լինի 16 նիստ, այն պատճառաբանությամբ, որ աշխպես նրա լույսը բիշ կլինեք տաճարի ներսում, որովհետև ամեն մի նիստը մեկ պատուհան միայն կարող էր ունենալ:

կանգուն վիճակի մեջ այսօր մեզ հասած չբլար»¹։

Ավանի տաճարի արևմտյան մուտքի մասին Քորամանյանն ասում է, որ հայկական է և զգալի կերպով տարբերվում է բյուզանդականից, ինչպես նաև պարսկականից։ Նա գրում է.

«Մասնավոր շնորհակալության արժանի է Գարեգին վ. Հովսեփյանի մեկ հոգածությունը՝ այս անգնահատելի հիշատակարանի մասին, որ մանրամասն լուսանկարելով կորուստն ազատեց։ Մասնավորապես լուսանկարած է նաև հարավ-արևմտյան անկյունի փոքր դրծ-



21. Ավանի տաճարի դեպի ան կորովածքը։

Չափագրություն՝ Շ. Աղաջանի։

«Ավանի գյուղի մեջ շինված VI դարու եկեղեցին, որ հինգ գմբեթների է եղած, V դարու էջմիածնի հետեղությունը ունի մի շատ զեղեցիկ դուռ՝ բանդակազարդված դուռ արևելյան ոճով, նույնիսկ, կարելի է ասել, նույն ժամանակվան հայկական ոճով, որովհետև որչափ որ արևմտյան ոճերից հեռու է, այնուամենայնիվ չի կապվում արևելյան ոճերի հետ և մնում է ինքնուրույն հայկական...»²։ Քորամանյանն իր աշխատությունների մեջ մի բանի անգամ գրել է, որ ինքը տեսել է Ավանի տաճարի ավանդատների գմբեթի մնացորդ, նրա հարավ-արևմտյան ավանդատան զվիին, որ լուսանկարած է եղել Գարեգին վարդ. Հովսեփյանը.

բեթին մնացորդ բարիու բոլորակ շարքերն այն³։
Երբեք չենք կասկածում Քորամանյանի ճշմարտախոսության և անկեղծության վրա, սակայն այստեղ ինչ որ թյուրիմացություն կա, որովհետև այժմ կարելի է վերջնականապես այսպես ցուցված համարել, որ Ավանն ունեցել է միայն մի գմբեթ իր զահլիճի զվիին, իսկ շուր մանր դրծրեթները չեն եղել⁴։

Ռուբեն Աղաբաբյանն այն կարծիքին է, որ հոփսիսիմեստիպ տաճարները Վրաստանում և Հայաստանում զարգացել են իրարից անկախ, առան-

³ Նույն տեղում, էջ 71։

⁴ Պետք է նեմադրել, որ այդ բարիի շարքը գոյություն է ունեցել, բայց ոչ իրենց բուն տեղում, այլ ոտի սակից տաճար բարիին ապստոսի համար բարձրացրել պատերի զվիին են գրել։ Այդպիսի բարի Ավանում տեսել ենք շատ անգամ, սկսած 1927 թվականից։

ձին-առանձին, ինքնուրույն կերպով։ Հայաստանի այգորինակ տաճարներն են Ավան, Մասաբան, Եղվադը (Գր. Մամիկոնյանի վեցարեղ տաճարը) և, վերջապես, հոփսիսիմեստիպ տաճարների նախահայր Ավանը։ Այդ տիպի իր կատարելության է հասել Հոփսիսիմեստը։

Վրաստանի տաճարներն առաջ են եկել վրացական խաչաձև կառուցվածքներից։ Հիմքը հանդիսացել է նախ Նինոմիդիոսան, այնուհետև Շուսիքան, որից հետո Զվարթն։

Իհարկե այս տեսակետն ընդունել չի կարելի թեկուզ միայն այն պատճառով, որ վրացական Մուրի խաչ եկեղեցին ունի կառուցման արձանագրություն վրացերեն և հայերեն լեզուներով, որի մեջ հիշատակված է Քորոսակ հայ վարպետի անվան սկզբնագիրը՝ Ք և հայտնի է, որ Աթենի ս. Միոն նույնատիպ տաճար ևս Վրաստանում կառուցել է նույն Քորոսակ հայ վարպետը, իր գիմանկարն էլ բանդակել է տաճարի զվիսավոր ճակատին և հայերեն էլ գրել իր անունը⁵։

Ինչպես կարելի է ընդունել, որ այնպիսի երկու միմյանց հարեան ժողովուրդներ, ինչպիսիք հայերն ու վրացիներն են, մշակույթով իրարից անկախ են եղել և փոխազդեցություններից հեռու են մնացել, այն էլ մի այնպիսի ժամանակ, երբ 300 տարի վրացական եկեղեցին անբաժան էր հայկականից (IV դարից մինչև VII դարի առաջին տասնամյակը)։

Ն. Տոկարսկին, ինչպես վերևում ակնարկեցինք, այն կարծիքին է, որ Ավանի տաճարն իր բարդ հորինվածքով չէր կարող իր տիպի նախորինակը լինել։ Նա ունեցել է իր նախորդները, որոնք մեզ չեն հասել։ Նա գրում է.

«Խաչաձև տաճարի ձևը, հայվանաբար, հայ ճարտարապետներին ծանոթ է եղել զգալիորեն վաղ, բան հորինվածքային բարդ կառուցվածք ունեցող Ավանի տաճարի շինությունը երևանի մոտ և վաղազունը՝ փաստացիորեն թվազարդողների մեջ։

Այդ մասին է վկայում Աղայի խաչաձև դամբարանը։ Դեռևս հաստատույնա չգիտենք գմբեթավոր այդ տիպի հնագույն ներկայացուցիչներին, այդ պատճառով էլ ստիպված ենք իրեն օրինակ մեջ բերել VI—VII դարերից ոչ առաջ կառուցվածքները»⁶։

⁵ P. Я. Агабабян, նշված աշխատությունը, էջ 36։

⁶ Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв. Ереван, 1964, էջ 109։ Առաջին անգամ Ն. Տոկարսկին իր այս տեսակետները շարաբերել է նույն բովանդակությունն ունեցող իր գրքի առաջին հրատարակության ժամանակ («Архитектура древней Армении», 1945)։

Ն. Տոկարսկին գրում է, որ Հայկական հուշարձանների մեջ իրենց ձևերով և տիպարով առանձին տեղ են գրավում իրարից ոչ հեռու գանդուղ էջմիածնի և Կոտայքի շրջաններում կառուցված մի խումբ հուշարձաններ, որոնք բառակցով են, գմբեթավոր և իրենց շուր անկյուններին ավանդատներ ունեն։ Այդ շենքերը ստորին մասով ուղղանկյուն բառանկյունի են և իրենց մեջ են ամփոփում կառույցի բոլոր մասերը։ Բացի այդ, տաճարի կենտրոնական խաչաձևության անկյունները, ավանդատների առաջ ունեն երեք բառորդ բուլորակ խորշեր, որ տաճարների այդ տիպի բնորոշ մասերն են և այդ խորշերի միջից են բացվում զեպի ավանդատուն տանող մուտքերը⁷։

Ավանի իբրև հոփսիսիմեստիպ տաճարների նախազարգացար ընդունում են գրեթե բոլոր ուսումնասիրողները, որոնք թվում Հովս. Սարգիսյանին, Անատոլի Յակիրսոնը⁸, Ստեփան Մնացականյանը⁹, Ալեքսանդրա Երեմյանը, որ մանրամասնորեն ուսումնասիրել է Հոփսիսիմեի տաճարը և նրա հետ անընդմեջ հուշարձանները¹⁰, Հովհ. Խաչիսիսյանը¹¹ և շատ ուրիշներ¹²։ Բոլորի կարգությունները Ավանի վերաբերյալ, այս կամ այն տարբերությամբ նույնն են։

VII դարում, վրաց եկեղեցին հայկականից բաժանվելուց հետո, որոշ ժամանակ կարողացավ պահպանել իր հին ուղղությունը եկեղեցաշինության մեջ։ Այդ է պատճառը, որ VII դարի կառույցները Հայաստանում և Վրաստանում զեռես նման են միմյանց, իսկ ավելի ուշ, Հայաստանը շարունակեց զարգանալ իր ավանդական ուղիներով։

⁷ Նույն տեղում, էջ 121։


⁸ А. Я. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII вв., М.—Л., 1950.

⁹ «Այնպիսիք հայ ճարտարապետության պատմության», Երևան, 1964 (խմբական աշխատություն), էջ 144—147։ ձիշտ է այն զիտողությունը, որ Ավանի տաճարի գմբեթը ոչ թե շուր, այլ ութը հեռաբան ունի։


¹⁰ А. Б. Еремьян, Храм Рипсимэ, Ереван, 1955, բազմաթիվ էջեր վերաբերում են Ավանի տաճարին։ Երեմյանն ունի նաև հոգվածներ՝ «Երաբեր» հաս. զիտ., 1969, № 3, էջ 47—52։ «Երաբեր» հոգվածում Երեմյանը նշում է, որ հոփսիսիմեստիպ տաճարների կառուցվել են նաև Գրիմուս, հայ վարպետների ձևերով։

¹¹ «Всёобщая история архитектуры в 12-ти томах», том 3, М.—Л., 1966, стр. 214—218.

¹² Կ. Գալադյան, Ավանի երկնային ժամկետի արձանագրությունը, Երևան, 1945։ Նույնի, Երևանի միջնադարյան հուշարձանները, «Երաբեր» հաս. զիտ., 1969, № 1։ Նույնի Պատմա-նշագրական գիտությունների Ավանի տաճարի վերաբերյալ, ՊՔԷ, 1968, № 3։



22. Ավանի տաճարի ամ մուտքի ճակատը:
Չափազրույթյուն՝ Շ. Ազատյանի:



23. Ավանի ս. Հովհաննես եկեղեցու հասակաձևը և երկարության կտրվածքը:
Չափազրույթյուն՝ Կորյուն Վաֆազարյանի:

X—XI դարերում և հետագայում կենդեցական դահլիճներն ամբողջացնելու և սյուներից ազատելու գաղափարին հակառակ, Վրաստանում նորահատույց դահլիճները զարդարվեցին սյուներով և մույթներով: Այսպես են օրինակ, Բագրատի տաճարը Քոթայքիսում (կառուցած 1003 թ.), Կաթողիկե կենդեցին Մցխեթում (կառուցած 1010—1029 թթ.) և այլն¹: Վրաստանը շունեցավ նույնիսկ գավիթներ և խաչքարեր, որոնք այնքան բնորոշ են X—XIII դդ. հայկական կենդեցիների համար:

Ք. ԱՎԱՆԻ Ա. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ
(ՏԵՍԱ ԵԿ. 59—67, գծ. 23)

Փանվում է այգիների մեջ, գյուղից դեպի հր, բարձունքի լանջին: Սովորական մատուռներից մի բիշ ավելի մեծ կենդեցի է, արևելքից-արևմուտք ձգված ուղղանկյուն բառանկյունի արտաքին տեսքով: Կառուցված է տեղական սրբատաշ տուֆ քարերով: Թեև ծածկը բոլորովին բանդված է, բայց



Նկ. 59. Ավանի ս. Հովհաննես կենդեցիի հր-ամ կողմից:

տաճարի հյուսիսային պատի վրա պահպանվել է թաղի քարերի ստորին շարքը, որից նրանում է, որ նա ծածկված է եղել մեկ թաղով:

¹ «Всёобщая история архитектуры в 12-ти томах», т. 3, վրաց հարտարարչության բաժինը, հեղինակ՝ Գ. Չուբինաշվիլի:


Քորամանյանը հարևանցիորեն ծանոթանալով այս կենդեցուն, ենթադրել է, որ նա պատկանում է XIII—XIV դարերին: Նա գրում է.

«Բացի VI դարու այս կիսավեր կենդեցուց (Ավանի Կաթողիկե կենդեցուց—Վ. Ղ.)՝ Ավանում կան նաև ուրիշ փոքր կենդեցիների կիսականգուն մնացորդներ, որոնք հավանականորին XIII—XIV դարերուն կվերաբերին»²: Մի այլ տեղում Ավանի այդ փոքրիկ կենդեցիները Քորամանյանը վերագրել է X—XIII դարերին և նրանց գոյությունը Ավանում բացատրել Ավանի բնակչության մեծ թվով:

«Ավանի ժողովրդյան շատության և քաղաքի բնդարձակության ազդուց կարող են լինել ուրիշ կենդեցիներ և վանքեր, որոնք անմիջապես մոտերքը շինված են. այս վերջին շենքերեն, որ X—XIII դարերու արվեստների հատուկ են, դեռ կիսականգուն կգտնվին Ավանի շրջանին մեջ»³:



Նկ. 60. Ավանի ս. Հովհաննես կենդեցու մուտքի ճակատակալ քարը V—VI դդ. շրջանակվոր խաչերով:




Նկ. 61. Ավանի ս. Հովհաննես կենդեցու սեղանի գմբեթադրի ստորին երկու շարքերը պայտան կամարի մնացորդով:

² Քորոս Քորամանյան, Նյութեր հայկական հարտարարչության պատմության, Բ ժողովածու, Նրևան, 1948, էջ 119:

³ Քորոս Քորամանյան, Նյութեր հայկական հարտարարչության պատմության, Ա ժողովածու, Նրևան, 1942, էջ 289:



Նկ. 62. Ավանի ս. Հովհաննես եկեղեցին հր-ահ-ից, վերանորոգմից առաջ



Նկ. 63. Ավանի ս. Հովհաննես եկեղեցին ամ կողմից, 1968 թ. նորոգումից հետո:

Ավանի այս փոքրիկ եկեղեցիները (ս. Հովհաննես և ս. Աստվածածին) տարբեր աշխատությունների մեջ տարբեր դարերի վերագրելը, որ հատուկ չէ Քորսամայանին, առաջ է եկել այն բանից, որ այդ երկու եկեղեցիներն էլ միջին

դարերում շատ են վերանորոգվել և փոփոխությունների ենթարկվել: Սակայն այժմ, երբ Հուշարձանների պահպանության վարչության գիտաօժանմամբ արվեստանոցն Ավանի բոլոր եկեղեցիներում վերականգնման և ամրաց-

ման աշխատանքներ կատարեց 1968 թ. և նրանց վրայից ընկած քարերով վերաշրջան պատերը, պարզ դարձավ, որ այս երկու եկեղեցիները սկզբնապես կառուցված են եղել IV—V դարերում: Գրան իբրև ապացույց կարող է ծառայել ս. Հովհաննեսի խորանի գմբեթաձև որմնաշան կամարի երկու շարքը, հյուսիսային կողմում, որ պայտածեության հետքերը պահպանել է իր վրա և,

վել: Շրջապատում ունի V—VI դարերի կոթողներ և այլ մնացորդներ:

ՃԱ. ԱՎԱՆԻ ԳՆՐԵՉՄԱՆՈՅԸ

(ՏԵ՛ս գծ. 25)

Գյուղի հասարակական գերեզմանոցն է եղել, որտեղ մինչև վերջերս թաղումներ էին կատարվում: Գտնվում է Ավանի արևմտյան եզրին, դեպի



Նկ. 64. Ավանի ս. Հովհաննես եկեղեցու սեղանի տափնամարտ

բացի այդ, տաճարի արևմտյան մուտքի ճակատակալ բարի վրայի երեք հավասարաթև շրջանակավոր խաչերը ևս բնորոշ են IV—V դարերի համար: Այս եկեղեցու հնությունն իբրև ապացույց կարող է ծառայել նաև նրա հյուսիսային կողմում գտնվող գերեզմանական բառակող կոթողը, որի նմանները մեզ հայտնի են V—VI դարերից (Նկ. 60—61):

Հնից պահպանվել է նաև արևելյան պատն իր արտաբին երեսով, որ սկզբնական շինությունն է պատկանում: Այս տաճարը բազմաթիվ նորոգություններից հետո ավերվել է 1679 թ. երկրաշարժի ժամանակ և այլևս չի վերակառուցվել:

Տաճարի շրջապատում կան գերեզմանաքարեր և շրջանակավոր մի մեծ խաչքար, կանգնեցված 1297 թ.:

Ճ. ԱՎԱՆԻ Ս. ԱՍՏՎԱԾԱՆԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

(ՏԵ՛ս եկ. 67—68, գծ. 24)

Գտնվում է նախորդի մոտ: Գարձալ մատանման փոքրիկ եկեղեցի է, նույնպես կառուցված տեղական սրբատաշ տուֆ քարով IV—VI դդ., բայց վերակառուցվել և նորոգվել է X—XIII դարերում և հետագայում: Վերջնականապես ավերվել է Ավանի մյուս տաճարների նման՝ 1679 թ. մեծ երկրաշարժի ժամանակ: 1968 թ. մասնակի նորոգման է ենթարկվել և շրջապատը բարեկարգ-

Գառնի տանող ճանապարհի ոլորապտույտների մոտ: Կան կոտրատված, կանգուն և ընկած XIII—XVIII դարերի խաչքարեր և V—VI դարերին պատկանող աստիճանավոր պատվանդանի վրա կանգնեցրած մի մահարձան, որ գերեզմանոցի այգբան մեծ հնության վկան է:

Գյուղում կա ծխական մի եկեղեցի, նոր ծամանակներում կառուցած, հավանաբար հնի տեղում, որովհետև այնտեղ կան համեմատաբար հին խաչքարերի բեկորներ:

ՃԲ. ՔԱՆԱՔԵՆԻ


Ս. ՄԱՀԱՐՁԱՆ

(ՏԵ՛ս եկ. 69, գծ. 26)


Իրականում շրջանակավոր մեծ խաչարձան է, կանգնեցրած հայոց ՉԺԻ և արզի տոմարի 1265 թ., գյուղի հյուսիսային կողմում, Աևան տանող խճուղու կողքին:

Սա քարի շրջանակի մեջ հազարած շքնաղ փորագրությունը մի մեծ խաչքար է և ունի կանգնեցման ընդարձակ արձանագրություն, որից իմանում ենք նաև խաչքարի կազմող Մխիթարի անունը:

Այս խաչքարը երկրաշարժի ժամանակ կանգուն է մնացել (գուցե և նորից իր տեղն է դրվել)



Նկ. 65. Ավանի ս. Հովհաննես եկեղեցու բակում գտնվող խաչքարերի բեկորները և V—VII դդ. քառակող կոթողի խաչքարանդակի պիսամասը:





Նկ. 66. Կենդանակերպ, խիստ յուրահատուկ տապանաբար Ավանի ս. Հովհաննես եկեղեցու բակում (XIV—XV դդ.):

և այսօր Երևան քաղաքի այն սակավաթիվ հուշարձանների թվին է պատկանում, որոնք կանգուն վիճակում են հասել մեր օրերին: Այս խաչքարձանը կարող է համարվել փորագրական արվեստի

լավագույն նմուշներից մեկը:

Տեղում կան նաև այլ խաչքարեր՝ կանգուն և տեղահան եղած վիճակում, բուրն էլ միջին մեծության: Սրանց գոյությունն ապացույց է այն



24. Ավանի ս. Ասովածամին եկեղեցու հատակագիծը և երկարության կտրվածքը: Չափազրույթյուն՝ կուրյուն Ղաֆաղաշյանի:

բանին, որ Քանաքեռի գերեզմանոցը XIII—XV դարերում եղել է ալգանդ: Քանաքեռն ունի երկու եկեղեցի, երկուսն էլ հին են եղել, բայց մեծ երկրաշարժի ժամանակ կործանվել են և հիմնովին վերակառուցվել 1695 թ., սրբատաշ տուֆ բարով: Թեև այդ եկեղեցիները վերակառուցվել են նոր հիմքերի վրա, XVII դարին հատուկ հատակաձևերով, բայց նրանց պատերի մեջ պահպանվել են հին շենքերի մնացորդներ, զիսավորապես արևելյան մասերում և եկեղեցիների ներսում, որտեղ վերակառուցման

ժամանակ պատերի մեջ հազցրել են XV—XVI և XVII դարերին պատկանող բազմաթիվ խաչքարեր: Եկեղեցիների շրջապատի պեղմամբ կարելի կլինի պարզել նրանց հին հատակաձևերը և կառուցման ժամանակը:

Ք. ՔԱՆԱՔԵՌԻ Ս. ՀԱԿՈՐ ԵԿԵՂԵՑԻ
(ՏՆ՝ս նկ. 70—71, գծ. 27)

Երկու եկեղեցիներից համեմատաբար մեծն է, նվիրված Մծբնա ս. Հակոբ հայրապետին:



Նկ. 67. Ավանի Աստվածամորն Եկեղեցին վերանորոգումից առաջ:




Նկ. 68. Ավանի Աստվածամորն Եկեղեցին 1968 թ. վերանորոգումից և շրջապատի բարեկարգումից հետո:

Ուղղանկյուն բառանկյունի շենք է, արեւելքից արեւմուտք ձգված: Ունի երկթեք տանիք, դահլիճի կենտրոնում շորս մուլթերը պահում են դահլիճի երեք նավերի կամարներն ու նրանց վրայի թաղերը: Ավագ սեղանի կողքերին կան երկու ավանդատներ: Ունի երկու մուտք, մեկը հարավային և մյուսը՝ արեւմտյան կողմում: Արեւմտյան կողմում ունեցել է արտաքին փորրիկ նախագա-

9. ՔԱՆԱՔԵՌԻ ԱՍՏՎԱՍԱՍԻՆ ԵԿԵՂԵՑԻ

(Տե՛ս Եկ. 72—73, գծ. 28)

Սա փոքր է, բան նախորդը: Գտնվում է նախորդից ոչ հեռու բարձունքի վրա: Սա ևս թաղակապ եկեղեցի է երկթեք տանիքով: Ավագ սեղանի կողքերին ունի երկու ավանդատուն և մյուս եկեղեցու նման սա ևս ունի երկու մուտք. մեկը՝ հա-



Նկ. 69. Քանաքեռի մահարձանը կանգնեցված 1265 թվականին:

վիթ, որի միայն հետքերն են մնացել: Մասնակի նորոգության է ենթարկվել 1798 թ.: Հնում սա եղել է զլուղի ծխական եկեղեցին և կոչվել է նաև ներքի եկեղեցի¹, այն ժամանակվանից սկսած, երբ մյուս եկեղեցին ևս դարձել է ծխական եկեղեցի:

մուտքը արեւմտյան կողմից: Արեւմտյան մուտքը սկզբնապես անվաճ է եղել նախագավթի մեջ, որը հետագայում բանդվել է:

Ըստ Զարարիա Սարկավալի աչա եկեղեցին պատկանել է այնտեղի կուսակրոն միաբանության, այսինքն՝ Քանաքեռի վանքին և ունեցել է շուրջանակի պայրիսպ, միաբանների բնակարաններ և վանական այլ շինություններ, որոնց հետքերը երևում են սեղանում:

¹ «Զարարիա Սարկավալի պատմագրություն», հատ. Ա, Վաղարշապատ, 1870, էջ 52:

Շահաթունյանցը ենթադրում է, որ Քանաբուրի մենաստանն այս եկեղեցին է եղել, որ Զարբախ Սարկավագը հիշատակում է իր պատմագրության մեջ Մեխուրի շարժման կապակցությամբ: Սրա ներսում ևս կան պատերի մեջ հազրբաժ խաչքարեր իրենց կազմողների անուններով և թվականներով: Քանաբա գյուղի ձորում, Հոսողան գետի վրա, մնացել է սրբատաշ քարերով կառուցած միաթիչք կամուրջի և հին եկեղեցու մնացորդներ (նկ. 74):

ՃԳ. ՆՈՐՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ
(Տե՛ս գծ. 29)

Նորքն ունեցել է երկու եկեղեցի, մեկը Սիմոն Մերունի, մյուսը՝ Աստվածածին: 1679 թ. երկրաշարժի ժամանակ երկուսն էլ քանդվել են, իսկ հետագայում՝ բոլորովին ավերվել:

Ա. Սիմոն Մերունի եկեղեցին երկար ժամանակ մնացած է եղել ավերակ վիճակում: Շահաթունյանցը XIX դարի 40-ական թվականների սկզբին այդ եկեղեցին տեսել է խարխուլ, բայց զործող վիճակում: Նա գրում է, որ նորքեցիք՝ «ունին եկեղեցի քարաշէն ի հին աուրց՝ յանուն Սիմէոնի Մերունայ, այլ ի ժամանակի անդ մեծի երկրաշարժութեանն զիպելոյ յամին 1679, զրկեալ է ի գմբեթէն և խախտեալ մեծ մասամբ: Թէև մինչև ցայժմ տե՛ւ և կարի երկվիղի աղօթին ի նմա՞»:

Սակայն XIX դարի կեսերին Սիմոն Մերունի եկեղեցու հին մնացորդները բանդել և տեղում նոր եկեղեցի են կառուցել, որի վրա մենք երկու արձանագրություն գտանք, մեկը զանգակատան կառուցմանն էր վերաբերում, իսկ մյուսը՝ Շոգակաթ Հարությունյանի թաղման, սակայն ուշ ժամանակի լինելու պատճառով այդ արձանագրությունները չբերին մեր ժողովածուի մեջ:




ա. Սիմոն Մերունի եկեղեցու զանգակատան կառուցման արձանագրությունը.

1. Կամօրն Աձյ կառուցա —
2. Գանգակատունս արգե —
3. ամբ մ[աշտեսի] Սիմաօնի Գաթեանց
4. Նորքեցու ի իշատակ ի —
5. ր և իւրանոց ի Քրիս —
6. տոս հանդուցեոցն, 1885:

Արձանագրությունը փորագրված էր տաճարի հս-ան ավանդատան հր պատի ներսում:

¹ Նույն տեղում, էջ 47—53:

² Շահաթունեանց, Ստորագրութիւն... հատ. Բ., էջ 150:





25. Ավանի գերեզմանոց, գերեզմանակա՛ն կրթող V—VI դդ.՝ Չափագրութիւն՝ Կորյուն Ղափաղաբա՛նի:

բ. Արձանագրություն.

1. Ի 1846 ամի 17 օգոստոսի
 2. Հանդէպս ո՞նի ի տապանի
 3. Շողակաթ Յարութիւնեանցն:
- Այս արձանագրությունը փորագրված էր տաճարի արևմտյան պատին՝ արտաբուստ: Նորքի Սիմոն Մերունի եկեղեցին քանդվել է ներկա դարի 30-ական թթ.:

Բ. Աստվածածին եկեղեցին բոլորովին ավերակ է, տեղում բարակույտների մեջ երևում են խաչքարերի բեկորներ, որոնք այնքան էլ հին չեն: 1679 թ. երկրաշարժից հետո չի նորոգվել և տեղացիները, լրած լինելով իրենց մեծերից, ասում



26. Քանաբու, մահարձան 13-րդ դարի, հատակաձև և ճակատ: Չափագրութիւն՝ Կորյուն Ղափաղաբա՛նի:

են, որ հնում այդտեղ մեծ եկեղեցի է գոյություն ունեցել:

Նորքը երևանին է միացել 1837 թ., իսկ մինչ այդ համարվել է առանձին գյուղ:

Նորքն ունի հին գերեզմանոց, որտեղ ամենահին արձանագրությունը պատկանում է 1800 թ. (տե՛ս № 286 արձ.):

ՃԳ. ԶՈՐԱԳՅՈՒՆԻ ԱՆԱՊԱՍԸ

Սա հնում եղել է երևանի թեմական առաջնորդարանի կենտրոնը և կապված է եղել եպիսկոպոսական աթոռի հետ: Նախքան մեծ երկրաշարժն իր պարսպի ներսում ունեցել է բազմաթիվ

շենքեր և մի քանի եկեղեցիներ: Այժմ այնտեղ մնացել է միայն ս. Սարգիս Չորավոր եկեղեցին, որ կառուցվել է նույնանուն հին եկեղեցու փոխարեն, 1835 թ.: Շահաթունյանցը գրում է, որ այդ անապատում ժողովրդի համար շինված եկեղեցին ս. Սարգիսն է եղել, կառուցված նահապետ կաթողիկոսի հրամանով, բայց «յաղազս կարի հնութեանն վտանգաւոր գոլոյն աղթաւորացն ի նմ ժողովրդոց, ըստ խարխուլ շինածայն, յամի 1835, ի ժամանակի պաշտաման մերում հոգեւոր այցելութեամբ տուար բակել զայն բոլորովին ի հիմանց, հրամանաւ վե՛հափառ կաթողիկոսին, և նոր ի նորոյ, ի նոյն տեղուց ընդարձակ ևս հիմնադրութեամբ, տուար կառուցանել զորմունսն, որոյ շենք հանդերձ չորս սեամբն ի սաշածոյ և ի հասարակ քարանց և ի կրոյ հասանի գրեա թէ ի կատար չայս ամ»:





Ս. Սարգիս եկեղեցու կառուցումը, ինչպես երևում է այս մեքերտույնից, տեղ է ունի տարի: Կառուցումն, ինչպես ասացինք, սկսվել է 1835 թ. և ավարտին է հասել 1842-ին, որովհետև «շասանի գրեա թէ ի կատար չայս ամ» վերաբերում է 1842 թ., երբ թեմի առաջնորդ Շահաթունյանցի գիրքը տպագրվել է:

Այս անապատն, ըստ Շահաթունյանցի, եղել է նաև կաթողիկոսների իջևանը: Նրանք այդ վանքում ունեցել են հատուկ բաժանունը իր առանձին եկեղեցով, որ կոչվել է ս. Գեորգ: Շահաթունյանցը գրում է, որ Չորագյուղի անապատը, «որ է իջևան կաթողիկոսաց աթոռոյ էջմիածնի, և տեղին բովանդակ սեպհականութիւն նոյն կաթողիկոսական աթոռոյն էջմիածնի»:


Առաքել Գալիբեկյանի գրում է, որ XVII դարում, մինչև Մովսես Տաթևացու ձեռնարկական մեծ աշխատանքները, էջմիածնի վանքը գրեթե ավերակ էր և անմարգարանակ Վասան զի կարողիկոսու՛մն անդ էջմիածին ոչ բնակէին, այլ յերևան քաղաք ի Աթոռիկէ եկեղեցուչն և կամ թէ ի շրջագայութիւն»:

Շահաթունյանցը գրում է, որ Չորագյուղի անապատը չորս բաժանուններից էր կազմված, որոնցից առաջինը կարողիկոսաբանի մասն է եղել, իր առանձին պարսպով և շրջափակով և տեղավորված է եղել շրազդանի գառիթափի գլխին: Նրանից զեպի հյուսիս, դարձյալ քարափի գլխին, գտնվել է ս. Հակոբ եկեղեցին, «Յակորայ Հալրապետի (1759—1763) կառուցեալ ի վերայ շորից

¹ Շահաթունեանց, Ստորագրութիւն... հատ. Բ., էջ 146—148:




27. Քանաքեռի ս. Հակոբ եկեղեցու հատակածեր և կորվածքը:
Չափագրության՝ Կուչյան Ղաֆադարյանի:



28. Քանաքեռի՝ ս. Աստվածածին եկեղեցու հատակածեր և կորվածքը:
Չափագրության՝ Կուչյան Ղաֆադարյանի:

սեանց, որմունքն ի հասարակ բարանց և ի հողոյ, իսկ սիւնքն և կամարքն հանդերձ առատազօր ի քրճեայ աղիւտոյ: Այնուհետև ավերացնում է, որ «այժմ հայազգի բնակիչք այսր Չորագեղչ

Չորագլուզի վանքից և մեծ անապատից այժմ միայն այլ ս. Սարգիս եկեղեցին է մնացել, իսկ մնացած բոլոր շէնքերն ավերվել են կամ հրդեհվել փայտակերտ լինելու պատճառով: Այգին ու




Նկ. 70. Քանաքեռի ս. Շաղիբ եկեղեցու ամ մուտքը:

աստ աղօթեն»: Շահաթունյանցն ավելացնում է նաև, որ այստեղ եղել են «բազում սենեակք և փուռն հացի», որոնք նա ավերակ վիճակում է տեսել:

Անապատի երրորդ մասը, արևելյան կողմում, եղել է «ծառատունի և պարտեղ բանջարոյ», իսկ չորրորդը՝ ժողովրդին սպասարկող ս. Սարգիս եկեղեցին, որ կառուցված է հնի տեղում, ինչպես ասացինք, 1835 թ., բոլորովին նոր հիմքերի վրա, ավելի քան բարձրակա հասակազույգ, բան հնումն է եղել:

Ծառատանն էլ վաղուց զբաղեցրել են բազարի բնակիչները և այնտեղ բնակելի տներ կառուցել: Ս. Սարգիսն այժմ էլ Արարատյան հողեր թեմի առաջնորդական եկեղեցին է և վազգեն Ա. ամենայն հայոց կաթողիկոսը հին եկեղեցին նույնութամբ պահպանելով նրա վրա հավելվածներ է անում տաճարի արտաքին տեսքը բարեփոխելու նպատակով:

Այս մենաստանում վիճական արձանագրություններ բոլորովին չեն պահպանվել:



Նկ. 71. Քանաքեռի ս. Շաղիբ եկեղեցու ան հակառի բանդակները:




Նկ. 72. Քանաքեռ, ս. Աստվածածին եկեղեցին հր-ամ կողմից (Քանաքեռի նախկին վանքը):

ՃԵ. ՀՐԱՊԳԱՆՆԻ ՀԻՆ ԿԱՄՈՒՐՔԸ¹

(ՏԵ՛ս Եկ. 75—76)



Նկ. 73. Քանաքեռ, ս. Աստվածածին եկեղեցու ամ մուտքը:



Նկ. 74. Քանաքեռի ձոր, «Տիվտիվի վանք»-ի ավերակները:

Պատվում է Սարգսի բերդի (Արարատ գիւնու գործարանի) ստորոտին, համաշխարհային Երկրորդ պատերազմի ավարտին կառուցված Հաղ-րանակի կամուրջից գետի հոսանքով բիշ ներքև, Հրազդանի ձորի մեջ:

Նոր կամուրջների կառուցումից հետո այս հին կամուրջը պահպանվում է իբրև հուշարձան: Նրա վրայով անցնում են միայն մոտակա այգիները գնացողները:

Հին Երևանը Հրազդան գետի վրա վերջին դարերում ունեցել է միայն այդ կամուրջը, որով նա կապվել է աշափնյա հեռավոր և մոտակա շրջանների՝ Արագածոտնի, Էջմիածնի, Նիգի, Քալինի և ավելի հեռավոր վայրերի հետ:

Այս կամուրջը կառուցվել է 1679 թ., մեծ Երկրաշարժից անմիջապես հետո, մեծահարուստ վաճառական խոնա Փիլավի ծախսով, այդ պատճառով էլ կամուրջն անցյալում կոչվել է խոնա Փիլավի և կամ Կարմիր կամուրջ: Վերջին անունը նաև տաացել է Կարմրավուն տուֆ բարով շինված լինելու պատճառով:

Երկրաշարժից առաջ եղած կամուրջը 1655 թ. նկարել է Ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Բարտիստ Տավերնիեն: Նրա նկարածի մեջ 1679 թ. երկրաշարժից կործանված կամուրջը երեք բացվածք ունի, գրեթե միաշափ մեծությամբ, բայց Տավերնիենին հավատալ չի կարելի, որովհետև նրա նկարում Երևանը եվրոպական բաղադր է 2—3 հարկանի տներով և եվրոպական տիպի եկեղեցիներով:

Ներկայիս գոյություն ունեցող կամուրջը (խոնա Փիլավի) 1830 թ. ռուսական պետական մարմինները որոշ շահով բարեփոխեցին: Նորոգության ժամանակ խելերը և կամուրջին մոտեցող երկու կողմի ճանապարհները բարձրացրել են, կենտրոնի սապատը հանել և հավասարեցրել են բարձրացրած խելերին:

Հին Հայաստանն ունեցել է հեռարբեր և զեղեցիկ բազմաթիվ կամուրջներ Եփրատ, Տիգրիս, Հրազդան, Արփա, Դերետ և այլ գետերի վրա: Գրանցից շատերն եղել են միաթռիչք, իսկ մի քանիսն էլ բազմաթռիչք:

Բազրատունյաց թագավորության շրջանում Հայաստանում կառուցվել են մինչև 34 մետր բացվածք ունեցող միակամար քարե զեղեցիկ կամուրջներ, բայց Երևանի այս կամուրջը, Աշտարակի հին կամուրջի, Օշականի և մի քանի այլ

կամուրջների հետ միասին, բնորոշ օրինակներ են XVII դարի համար, որոնք կառուցվել են Հայաստանի բանուկ առևտրական ճանապարհների վրա:

խոնա Փիլավի կամուրջի երկարությունը 87,5 մետր է, լայնքը՝ երկու կողմի բաղրիքների միջև 6,47 մետր: Ինչ խոսք, որ այսօրվա հասկացողությամբ շատ նեղ է, բայց կառուցման ժամանակ այգրանը նեղ չէր համարվում, որովհետև նրա վրայով անցնելու էին միայն սայլեր, գրաստներ, հետևակ և հեծյալ մարդիկ:

Երևանի այս կամուրջն ունի կամարավոր շորս բացվածք, որոնցից երկու կենտրոնականները մեծ են և նրանց միջով գետն է հոսում, իսկ երկու ծայրերի բացվածքները փոքր են, համեմատաբար բարձրադիր: Մեծ բացվածքներն ունեն 14,0 և 14,10 մետր տրամագիծ, իսկ փոքրերից մեկն ունի 3,0 և մյուսը 3,4 մետր տրամագիծ: Սրանց միջով անցնում են մոտակա տարածությունները ոտոզող ջրանցքները՝ գետի աջ և ձախ ափերի ուղղությամբ¹:

ԺԶ. ԳՆՈՅ ԱՂԱՒԹ

(ՏԵ՛ս Եկ. 77—78)

Երևանի ամենանշանավոր և մեծ մզկիթն է, կառուցված Հուսեյն Ալի-խանի հրամանով, հիշքերի 1179 և մեր արդի տոմարի 1765/6 թթ.:

Ունի ընդարձակ ծառատունկ բակ, ջրավազան, բառանկյունի շրջափակի մեջ առած խցեր, զպրոցական (մեդրեսե) և այլ օժանդակ շենքեր: Այժմ այդ մզկիթում են տեղադրված Երևանի քաղաքի պատմության և Հայաստանի բնագիտության թանգարանները:

Երևանում եղել են և այժմ էլ կան այլ մրզկիթներ և:

ԺԷ. ԵՐԵՎԱՆԻ ԲՆՐԳՆՐԸ


Տարբեր ժամանակներում Երևանն ունեցել է տարբեր բերդեր: Հասկանալի է, որ այդ բերդերի գոյությունը կապված է եղել Երևանի տեղաշարժերի և տարբեր դարաշրջանների հետ:

Հնագույնը՝ Էբրուսի ուրարտական ամրոցն է եղել, որն, ինչպես հայտնի է, հիմնվել է մեր դարաշրջանից առաջ—782 թ. և նրանով է սկիզբ առել Երևան քաղաքը:

Երկրորդը՝ Երևանի վաղ միջնադարյան անսպիկ ամրոցն է, որի տեղն այժմ անհայտ է, բայց հիշատակվել է պատմագիրների երկերում:

¹ Օ. X. Халпахьян, Инженерные сооружения Армении, «Архитектурное наследство», № 17, М., 1964, стр. 87.


ՀԱՏԱԿԱԳԻՑ
ՆՈՐԻՒՄՆԵՐ ԾԵՐՈՒՆԻՑ ԶԵԿԵՂԵՑՈՒ



3
Չափադրույթը՝ 1:100

զմարկը՝ 1/100

29. Նորի Սիմեոն Սերունի էկզեկցու հատակակերտ
Չափադրույթուն՝ Կարա Ղաֆաղաբյանի և Հարություն Քումյանի:



Նկ. 75. «Վարմիր» (Սոճա Փիլավի) կամուրջը Հրազդան գետի վրա, կառուցված 1679 թ.,
հին կամուրջի փոխարեն:



Նկ. 76. «Վարմիր» կամուրջը Հրազդան գետի վրա: Գիմարը երևում են Սարգսի բերդի
պարիսպների մնացորդները:

Տվյալ զեկրում մեզ համար մեծ կարևորություն ունի Երևանի միջնադարյան բերդը, որ մատենագրության մեջ առաջին անգամ հիշատակվել է արաբների երրորդ արշավանքի ժամանակ 650 թ.¹:

Սերնուրը գրում է, որ Իսմայլի զորքերը «եկին ժողովեցան ի Երևան և մարտեան քնդ բերդին և ոչ կարացին առնուլ»²:


Նույն զեկրերը հիշատակում է նաև X դարի մատենագիր Հովհ. Գրասխանակերտցին³: Վաղ

¹ Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, երկրորդ մաս, Երևան, 1960, էջ 191—201:

² «Պատմութիւն Սերնուի եպիսկոպոսի ի Հերակն», Քիֆ-լիս, 1912, էջ 188:

³ «Յովհաննու կաթ. Գրասխանակերտցու Պատմութիւն հայոց», Քիֆլիս, 1912, էջ 488:

միջնադարյան այդ բերդը հայտնի չէ թե ի՞նչ բնույթ է ունեցել, բաղաբից անկախ է եղել, թե՞ բաղաբի բուն մասն իր մեջ է բնդրվել, ունեցել է միջնաբերդ, որտեղ բաղաբի իշխողներն են ապրել իրենց զորքի հետ միասին:



Նկ. 77. Գեոյ մզկիթի բակի գլխավոր մուտքը, խցերի արտաքին պատը հր կողմում:

Երևանի հին թաղերից մեկը կոչվել է **Շնաբ**, այսինքն բաղաբ, որ բուն Բաղաբ իմաստն է ունեցել, սովորաբար բաղաբը հնում պաշտպանված էր լինում բաղաբորմով: Եթե նկատի ունենանք հին Երևանի թաղերը (և հատկապես Շնաբը), կարծում ենք, որ բաղաբի բերդը կառուցված պետք է լիներ Կոնդի բլուրի վրա, այսինքն այն ժամանակվա բաղաբի միակ հարմար տեղում, որն իշխում էր շրջապատի վրա, գտնվում էր բաղաբի գլխին և մտտիկ էր Հրազդանի գետին:

Ֆրանսիացի ճանապարհորդ ժան Ծարդենը Երևանում է եղել մեծ երկրաշարժից մի քանի տարի առաջ, 1673 թ.: Նրա նկարագրության մեջ, ինչպես և Երևանի զմանկար համայնապատկերի վրա, բացի Մարզաբի բերդից, կա նաև մի ուրիշ բերդ, որ Ալձարձուղ անունն է կրում (Կեռտչի կայա): Այդ բերդի մասին Ծարդենը գրում է.

«Բերդին մոտիկ (խոսքը Մարզաբի բերդի մասին է—Վ. Ղ.) ընդամենը մի հազար բայլ հետու, գտնվում է նրա վրա իշխող մի բլուր, ամրացված երկշար պատերով և լավ հրակնատներով, այդ ոչ մեծ ամրացիկի մեջ, որ

կոչվում է Կեռտչի Կայա (Ալձարձուղ), կարող են տեղավորվել երկու հարյուր մարդ»¹:

Այս փոքրիկ ամրոցը հին մնացորդն է և ոչ թե նրա ամրոցությունը, որ բացի բլուրից, որտեղ միջնաբերդն է եղել, նա տարածված է եղել

նաև շահաստանի վրա, բնդրվել նրա հիմնական մասը: Այստեղ է եղել հայ միջնադարյան անտիկ ամրոցը: Ծարդենի ժամանակ Երևանի այդ բերդը կորցրած է եղել իր իմաստը և վերածված բնակելի թաղի, որտեղ հայերի կողքին ապրել են նաև հայ բոշաներ, որոնք եկել են Երևան Արևմտյան Հայաստանից:

Երբուրդ Մարզաբի բերդն է, որի մնացորդները կային Հրազդանի գլխին դեռևս ներկա դարի 20-ական թթ.: Բերդը կառուցել է 1583 թ. թուրք Ֆահրադ փաշան, բաղաբից դուրս, բոլորովին նոր տեղում, որտեղ նախապես ոչինչ կառուցված չի եղել:


Առաքել Գալիբեցիի գրում է, որ թթին Ռիթ (1032+551=1283) լեռնան բերդ շինեցաւ»²:

Երվանդ Շահադիզն իր զբոյրի մեջ մի բաղվածք է բերել նորում 1587 թ. գրված ձեռագրի

¹ «Путешествие кавалера Шардена по Закавказью в 1672—1673 гг.», перевод Д. П. Носовича, 1900, стр. 242. Տե՛ս նաև Ե. Շահագիզի *Հին Երևանը*, էջ 119:

² «Պատմության Առաքել Կարապետի Գալիբեցի», էջ 488:

հիշատակարանից, որի մեջ այդ բերդը կոչված է **նուրաբիմե**¹: Այդ տեղեկությունը ժամանակակցի մի վիճարկություն է այն մասին, որ Ֆահրադ փաշայի կառուցած բերդը հին հայկական բերդի հետ անույթյուն չունի:



Նկ. 78. Գեոյ մզկիթի գլխավոր ճակատը:

Մի փաստ էլ այն է, որ մենք երեսնական թվականների սկզբից ի վեր, պաշտոնի բերմամբ հետևել ենք Մարզաբի բերդի բուն տարածության վրա կատարված բոլոր տեսակի հողային աշխատանքներին, երբեմն էլ ստուգողական պեղումներ ենք կատարել այնտեղ, բայց հին բերդի և ընդհանրապես հին մշակույթի մնացորդներ չենք գտել:

Մարզաբի բերդից մեզ հասել են մի քանի նկարագրություններ: Մեծ երկրաշարժից առաջ այդ բերդը նկարագրել է Ֆրանսիացի Ծարդենը²: Նա գրում է.

«Երևանի բերդը կարող է մի փոքրիկ քաղաք համարվել. նա ձվաձև է, շուրջ հազար բայլ շրջապատ ունի և բովանդակում է իր մեջ 800 տուն: Բերդի մեջ ապրում են միայն պարսիկներ, իսկ հայերն այնտեղ ունեն միայն խանութներ, որտեղ նրանք աշխատում

¹ Ե. Շահագիզի, *Հին Երևանը*, էջ 178:

² Ծարդենի նկարագրությունը կրճատումներով մեջ ենք բերում Եր. Շահաբիբի «Հին Երևանը» գրքից (էջ 119):

և առևտուր են անում ցերեկները, իսկ երեկոները փակելով խանութները, ցրվում են իրենց տները: Այդ բերդը շրջապատված է երեք կարգ ժանիֆալու պարիսպներով, կառուցված է հում աղյուսից, գույց և միայն

հողից, պարիսպներն ունեն աշտարակներ և բերդն ամրացնելու համար հին արևելյան սովորությամբ անկանոն ձևով բաշխված մի թումբ: Եվ... բերդը զեպի հյուսիս-արևմուտք ընկած է մի ահռելի անդրադարձի ձորի եզրերին, լայն, ուղղաձիգ վերևից ցած հարյուր սաժեն խորությամբ, որի խորքում հոսում է գետը...

Փոխարքայի (Մարզաբի) ապարանքը գտնվում է բերդում՝ հիշյալ ահռելի անդունդի եզրերին: Այդ մի գեղեցիկ և շատ մեծ շինություն է, որ ամառը լավ տպավորություն է թողնում»:

Այդ բերդը հիմնովին կործանվել է 1679 թ. մեծ երկրաշարժի ժամանակ. բայց անմիջապես վերակառուցվել է շրջապատի խանութներին օգնությամբ: Զբարբախ Քանաքեղցին գրում է.

«Եւ բերդն Երևանայ ի հիմանց տապալեցաւ: Եւ սպա եկն մեծ իշխան Միրզայ-Խալաֆիմն, զոր ասէին Հաւորէճան-Վազիրի, նստաւ լեռնան, և կոչեաց զմերձակայ դա-

նորայն զնախշուանայ, զՊար[տ]աւայ, զՋա-
կամայ, զԼոտոյ և զՍուլթանան՝ Մակուայ,
զԱկոտոյ, զԱտարակայ, զՄարայ: Եւ եկին սո-
քա՝ և շինեցին զԵրզն Երեմիայն ամրագոյն
քան զառաջինն»¹:

Այս բերդը Հրազդանի բարձրադիր գետափին
գրավում էր մոտ 18 հեկտար տարածություն, նրա
հողակերտ հակալական պատերն ու ահարկու աշ-
տարակները դրված էին բարձր ճիւղերի վրա: Ներ-
ստում, բացի բերդի բնակիչ պարսիկների տներից,
եղել են Սարգսրի ապարանքն իր նշանավոր «շու-
շաբանդով», կանանոցը կամ հարեմը, երկու մըզ-

1827 թ., ուսական զորքերի գրավումից հե-
տո, բերդը թեև նորոգվեց և ներսի շինքերից մի
քանիսը ևս վերակառուցվեցին և հարմարեցվեցին
բնակության համար, բայց հողից և աղյուսից շին-
ված այդ ահեղի զանգվածը հեռագեակ բարձր-
վեց և ոչնչացավ:

Օտար բռնակալների կառուցած այդ բերդը
Երևանի ժողովուրդը շփրեց: Հայ բնակչությունը
միայն շարիք ու բռնություն էր տեսել այդ բերդից
և այդ պատճառով իրենք չհամարեց:

Իդուր չէ, որ մեր անմահ լուսավորիչ Խաչա-
տուր Արովյանը Սարգսրի բերդը համեմատել է



Նկ. 79. Փանահ խանի ապարանքի հակառ (լուսանկարված է ներկա դարի 20-ական
թվականներին):

կիթ. մեկը՝ հասարակաց, մյուսը՝ Սարգսրի հա-
մար, ընգարձակ զորանոց և այլ շինություններ:
Բերդն ուներ զեպի Հրազդանի ձորն իջնող գետ-
նուղի, որ բերդի մոտ ճյուղավորված էր երկու
մասի, մեկի մուտքը գտնվում էր բերդի ներսում,
ազատ տարածություն վրա, կամարակապ մեծ
դռնով, իսկ մյուսինը՝ Սարգսրի պալատում²:

¹ «Ջաբրակայ Սարկաուգի պատմագրութիւն», հատ. Բ,
էջ 104—105:


² Բերդի մէջից զեպի Հրազդան գետն իջնող գետնուղին
մենք ուսումնասիրել ենք 1933 թ., երբ շրանցքի համար հո-
ղային աշխատանքներ էին կատարվում բերդի տակ, նրա զա-
տիթած լանջին, այժմյան գինու գործարանի պատերի մոտա-
կայքում զեպի Կարմիր կամուրջն իջնող հին խճուղու կող-
քին, բացվեց գետնուղին:

հազար զլիսանի զեի հետ և հայ ժողովրդի ոխն ու
ատելությունն այդ բերդի նկատմամբ արտահայ-
տել է հետևյալ բառերով.

«Լեռ քարափի վրա՝ ցից գլուխը բարձ-
րացնում, թամաշա յա անու՝ հանդարտ՝ հա-
զար զլիսանի զեի պես՝ Երևանու հազար տա-
րեկան քավթառ, պառալած, չորս կողմը
խանդակով կապած, բրջերով զայլմացրած,
սուր սուր ատամները գլխին շարած, հինգ
զազաչափ հաստ պարսպով երկու տակ բըռ-
նած, մեկ ոտը կոնդուր, մեկ ոտը Գամաւ-
բուլաղի գլխին դրած, մեկ բերանը հյուսիս,
մեկը հարավ բաց արած, չորացած գլուխը
երկինքը ցցած, լեն փեշքը երկրումը փրած

անամոթ երեսը կոկած, սվաղած, հազար
բնով, հազար փանջարա աշքերը դեռ ու դեռ
լածած, չուխտ շանդերով Զանգվի՛ բարոտ,
զարհուրելի, սևադեմ ձորը խտած, զոշին
կպցրած անմազ, անլիզու, մարդակեր բերդը,
ու զեղնած երեսը հեռու տեղից ծածկում, ա-
զահճ աշքերը գետնին բցում, որ միամիտ տես-
նողին դժաշտուով խաբի, դժա հեշտ իր ծոցը
բաշի ու բիրաղի, անձեն, անասն կուլ տա,
փչացնե՞»¹:

Ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Ծարդենը,
1673 թ., նախորդից ընդամենը 18 տարի հետո և
հետաքրքիր է, որ այդ երկու համայնապատկեր-
ներն էլ վերաբերում են 1679 թ. մեծ երկրաշար-
ժից առաջ ղոյուսթյուն ունեցող վիճակին: Ծարդենի
ներկայացրած պատկերը Երևան քաղաքի մասին
տալիս է թեև ընդհանուր, բայց ճիշտ պատկերացում:
Նկարի վրա երևում են թաղերը, բերդերը,
հրապարակները, գետերը, ճանապարհները, եկե-
ղեցիները, իջևանները, մզկիթները և այլն:



Նկ. 80 Բնակիչ հին տուն Երևանում (Գեոռյանցի փողոցում):

ԺԸ. ԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՀԻՆ ՏՆԵՐԸ

(Տե՛ս նկ. 79—81)

Երևան քաղաքի համայնապատկերը մեզ ծա-
նոթ է XVII դարի կեսերից: Առաջին անգամ Երե-
վանի համայնապատկերը դժագրել է Ֆրանսիացի
ճանապարհորդ Ժան Բարտիստ Տավերնիեն
1655 թ.: Նա մեր քաղաքը ներկայացրել է եվրո-
պական տիպի երկու-երեք հարկանի տներով, եվ-
րոպական ոճի եկեղեցիներով: Նրա գծագիրը մեծ
մասամբ մտացածին է և նրա միջից բացակայում
է անգամ Կոնդի բարձունքը:

Երևան քաղաքի համայնապատկերը շատ ա-
վելի լավ և իրականությունն ունի է ներկայացրել

¹ Խ. Արովյան, Վերջ Հայաստանի (Երկերի լիակատար
մոզովածու, ութ հատորով, հատ. III, Երևան, 1948, էջ 53):

Երևում է, որ քաղաքի հին թաղն (Շհարը)
ունեցել է բնակելի տների խիտ շարքեր, որտեղ
պարկեց են հայերը, իսկ մյուս թաղերը, մանավանդ
քաղաքի ժայռամասերը, ամեն մի տուն ունեցել
է իր այգին՝ կավակերտ քառակող պարսպի ներ-
ստում, որ խիտ բնորոշ է եղել Արարատյան դաշ-
տի արհեստական ոռոգվող հողամասեր ու-
նեցող բնակավայրերի համար: Ըստ Ծարդենի,
քաղաքն ունեցել է երկու հին եկեղեցի. մեկը՝ Կա-
թողիկեն, որ նա Կարովիկ է անվանում, իսկ մյու-
սը՝ Չորագեղի անապատը, որ Երկերեսանի (Եր-
կու երկից) է անվանում²: Մյուս եկեղեցիների մա-
սին չի խոսում:

² «Երկու-յերեցի» Ծարդենը բացատրում է երկու աթո-
ռանիստ (երկաթոս, հավանաբար երկու երեց քառն է, որ
ազավազել են և հետագայում երկերեսանի են դարձրել):

Քաղաքի բնակելի հին տները բաժանելու ենք մեկը մյուսին հաջորդող երեք հիմնական խմբերի:

Առաջին խմբին պատկանել են միջնադարյան երևանի այն տները, որոնք կառուցվել են հին քաղաքում (Շահար), գոյություն են ունեցել վաղ միջնադարից սկսած մինչև XIV—XV դարերը:

Ների բարև խորհիսները և բոլոր շորս սյուների կենտրոնում գտնվող հորի բերանի բառակուսի ձևավոր բարը, փոքրիկ անցքով: Այդ բարերի տակ սենյակի կենտրոնում փորված հորը ղլխատան անցքից ներս թափված անձրևաջրերի կլանման համար է լինում:



Նկ. 81. Բնակելի հին տներ «Կոնդո» թաղում:

Սրանք բարաշեն տներ են, պատերը մեծ մասամբ շարված են կավային շաղախի օգնությամբ: Տների ձևերը, որոնցից և ոչ մի օրինակ չի պահպանվել գեանի երեսին և նրանց գոյությունը մեղ հայտնի է քաղաքի կենտրոնական փողոցներում հողային աշխատանքների ժամանակ տարբեր խորություն մեջ ի հայտ եկած մնացորդներից, բառանկյունի են և հավանաբար ունեցել են երզնկավոր ծածկ: Սրանք զրևթե ոչնչով չեն տարբերվում Դվինում տարածում գտած այն տներից, որոնք ներսում մի բանի բաժանմունք ունեն և որոնց կենտրոնական մասը հավասարակողմ բառանկյունի հատակաձև ունեցող սենյակներն են, փայտակերտ ղլխատան ծածկով, որ նստած է լինում շորս անկյունների վրա զրված շորս հաստարուն փայտյա սյուների ղլխին:

Ինչպես Դվինում, այնպես էլ Երևանում, այդպիսի սենյակների համար բնորոշ են իրարից հավասար հեռավորության վրա գտնվող փայտե սյու-

Ղլխատունը վաղ միջնադարից սկսած տիրապետող ձև է եղել Արարատյան դաշտի բնակելի տների համար, որոնք հետագա դարերում իրենց գոյությունը շարունակել են զրևթե բացառապես ղլուղներում:

Երկրորդ խմբին պետք է վերագրենք Երևան քաղաքի այն տները, որոնք կառուցվել են XVII—XVIII դարերում, պարսկական ոճով և հաճախ պարսիկների համար: Դրանք կառուցված են վերածած և հում աղյուսով, ըստ որում վերած աղյուսները շենքի ղլխավոր ձևկառին դասավորվել են տարբեր եղանակներով և առաջ են բերել զարդաձևեր: Ներքո գտնվող բազմաթիվ գունավոր դարձեր են ունեցել, շատ ղեպերում հայելու բեկորների օգտագործմամբ: Պատահաններին դրվել են գույնըզույն ապակիներ: Իրեն նմուշ այդ ոճի ճարտարապետության Երևանում պահպանվել էր Փանահ խանի ապարանը XVIII դարից (նկ. 79):

Այդ ժամանակաշրջանի հայկական տները



Նկ. 81—82 Երևանի համայնագատները ըստ Շարդենի:



Նկ. 83—84 Երևանի համախապատկերը ըստ Կեր Պորտերի:

թեև այլ ոճով են կառուցված եղել, բայց հարուստների տները որոշ ազդեցություն կրել են:

Այդ տեսակետով խիստ բնորոշ օրինակ էր Մելիք-Աղամալյանների տունը Կոնդի թաղամասում, կառուցված XVII դարի վերջերին, 1679 թ. երկրաշարժից անմիջապես հետո, բայց մի բանի անգամ նորոգված XVIII և XIX դարերում:

Այդ ժամանակներին (XVII—XVIII դդ.) են պատկանում նաև երևանի մզկիթները:

Երբորդ խմբին են պատկանում դեռևս հասու կենտ պահպանված ծաղրտակեն ձևավորում ունեցող լայն պատշգամբավոր տները, որոնք մեկ և կես կամ երկհարկանի են: Այդ ոճի տները ընդհանուր են Երևանի, էջմիածնի, Աշտարակի և մերհին են, բայց երևանում պահպանված օրինակները հավիվ թե XIX դարից առաջ կառուցված լինեն: Այս ախյի տների պատերը պլուստախառն բարակերտ են և շատ դեպքերում նաև հոտ ազդու են օգտագործել շերեացող տեղերում:

Անցյալ դարի 30-ական թվականներին երևանում սկսվում է տարածվել նորաձև եվրոպական խառնուրդով բարաշեն տների մի նոր տարատեսակ, մեծ մասամբ սրբատաշ քարե ձևկառույցով և պատուհանների լայն բացվածքով:

Թ. ԵՐԵՎԱՆԻ ԱՇՏԱՐԱԿԻ ԱՌԵՎՈՎԱՄԸ

Այդ աշտարակը այժմ գոյություն չունի: Աշտարակը տեսել է և նկարագրել Ֆրանսիացի Շարդենը: Իր նկարագրության մեջ նա ասում է՝

«Ես սկսեցի գրել այս աշտարակի կառուցված սրբատաշ քարով: Ես չկարողացա իմանալ որևէ բան նրա կառուցման ժամանակի կամ ինչ նպատակով կառուցված լինելու մասին: Արտաքուստ ունի արձանագրություններ, որ գրեթե դատելով նման են հայկականի, բայց չեն կարողանում կարգով: Այս աշտարակը հին է և ունի յուրահատուկ ճարտարապետություն: Ներսը բուրբուղի դատարկ է և նրա շրջապատում ավերակներ շատ կան, որոնց դիրքից կարելի է ենթադրել, որ այդտեղ վանք է եղել և աշտարակն էլ նրա միջին է եղել»:

Հասկանալի է, որ այդ աշտարակը Շարդենի տեսնելուց մի բանի տարի հետո, մեծ երկրաշարժից բանդվելու էր և հիմնահատակ կործանվելու, իսկ շրջապատի ավերակների տեղում նոր շենքեր էին կառուցվելու և փոփոխված աշտարակի բարերն էլ օգտագործվելու էին:

Սակայն այդ բանը հաշվի չեն առել հետագայի ուսումնասիրողները:

Շահախնայանցը գրում է, որ Անանիայի մենաստանից և Ջորդաղուղի անապատից բացի Երևանում այլ եպիսկոպոսի աթոռանիստ չկա, բայց «Անապատն Անանիայի չունի մերձ իր այնպիսի շինուած աշտարակի և ոչ եղևալ է յառաջագոյն»:

Շարդենի նկարագրած աշտարակի վերաբերյալ սխալ տեղեկություններ է հաղորդում Ալիշանը: Նա մոտույմանական մի աշտարակի լուսանկար է դրել այդտեղ և գուցեգուցե շրջալուսանկարով դարդարած, իսկ Շարդենի տեսած Աշտարակը, ինչպես ասացինք, սրբատաշ քարերով է շինված եղել և ունեցել է հայերեն արձանագրություն: Նա ունեցել է «յուրահատուկ» ճարտարապետություն, իսկ Ալիշանի լուսանկարի միջինը մոտույմանական աշխարհում բազմաթիվ օրինակներ ունի և իր ձևերով ծանոթ է ամբողջ աշխարհին:

Իր «Ճանապարհորդություն Քիֆլիսից մինչև Ագուլիս» աշխատության մեջ, Բաֆֆին, իբրև ականատես, գրել է.

«Երևանում ուշադրության արժանի հնություն ունի չի մնացել... Ողջ մնացել է միայն Սարդարի այգին, որի մեջ տակավին պահպանվել է մի զեղեցիկ բարձր մինարեթ, պարսկական շույլ ճաշակով զարդարված»:
Նշանակում է Շարդենի և Ռաֆֆու նկարագրածը տարբեր հուշարձաններ են եղել, որոնք այժմ չկան:

1 «Путешествие кавалера Шардена...», стр. 242—243.

2 «Ստորագրություն կաթողիկե էջմիածնի...», Բ հատ., էջ 148:

3 «Ճանապարհորդություն Քիֆլիսից մինչև Ագուլիս», Ռաֆֆի, Օրհերի ժողովածու, հատ. 3, Երևան, Հայպետհրատ, 1957, էջ 536: Առաջին անգամ լույս է տեսել «Փորձ»-ի 1877/1878 թթ. X 3-ում:



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԳ

ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՓԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- [] — Փակագծով վերականգնված են ավերված գրերը
- () — Փակագծով լրացված են բնագրում բացակա լող գրերն ու բառերը:
- { } — Փակագծով մեջ են առնված բնագրում եղած ավելորդ գրերը (սչ բոլոր զեպերում):
- Գծիկով ցույց են տրված բնագրի շկարզացվող գրերն իրենց թվով (փակագրերը հաշվված են իբրև մի նշան):
- ... Երեք կետերով ցույց են տրված անվերծանելի տեղերն առանց նկատի ունենալու գրերի թիվը:



Գ Լ Ո Ւ Ն Գ

ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ



իջնագրայան Հայաստանի վիմական արձանագրությունները, շրնչին բացառությամբ, գրվել են կրոնական բնույթի շենքերի վրա՝ վանքերի, եկեղեցիների, նրանց համալիրի մեջ մտնող այլ կառուցվածքների պատերին, խաչքարերի և տապանաքարերի վրա: Աշխարհիկ շենքերն ունեն միայն հատ ու կենտ արձանագրություններ:

Նույնիսկ այնպիսի խոշոր բաղաբներն, ինչպիսիք են Գվիկն ու Անին, վիմական արձանագրությունները հայտնի են զխաղաղության կրոնական շինություններից: Նույնն է նաև Երևանը:

Ներկա աշխատության մեջ հրատարակվող 293 արձանագրություններից միայն երեքն են զբրված աշխարհիկ բնույթի կառույցի վրա, որ նորրի կամուրջն է (№ 85, 86 և 87), իսկ մնացած 290-ը զբրված են եկեղեցիների պատերին, տապանաքարերի և խաչքարերի վրա:

1679 թ. Երևանը մեծ աղետի է ենթարկվել: Հունիսի 4-ին տեղի է ունեցել մեծ երկրաշարժ, որի ժամանակ բաղաբի բնակելի տների հետ միասին կործանվել են նաև եկեղեցիները և ոչնչացել նրանց վրայի արձանագրություններից շատերը:

Երկրաշարժից հետո 15 և ավելի տարիներ Երևանի եկեղեցիները մնացել են ավերակ վիճակում: Հավանաբար այդ տարիներին բաղաբի բնակիչները կարգի են բերել իրենց բնակելի տները և միայն զրանից հետո հնարավորություն են ունեցել մտածելու ավերակ եկեղեցիները վերակառուցելու մասին:

Մական եկեղեցիները վերակառուցել են ոչ միև հին ձևերով, այլ մեծ մասամբ նոր բարերով

ու նոր հիմքերի վրա: Այդ եկեղեցիները բնորոշ են XVII դարի վերջի և XVIII դարի սկզբի համար: Այդ վերակառուցումների ժամանակ, ինչպես պարզվեց Պողոս-Պետրոս եկեղեցու և Կաթողիկեի հետագրայան մեծ դահլիճի բանդման ժամանակ, հին շենքերի փլատակված բարերն օգտագործել են պատերի միջուկի համար և դրանով աղարտել և ոչնչացրել են բազմաթիվ արձանագրություններ:

Ընդհանրապես Հայաստանում վիմական արձանագրությունների մեծ մասը գրվել է X—XIII դարերում, իսկ XVII—XVIII դարերում զբրվածների թիվը բիշ է:

Օրինակ. Հաղբատի բոլոր 257 արձանագրություններից 200-ը գրվել է X—XIII դդ., իսկ մնացած 57-ից միայն 28-ն են գրվել XVII—XVIII դդ.: Սանահնի վանքի 189 արձանագրություններից 125-ը պատկանում են X—XIII դդ., իսկ մնացած 64-ից 51-ը՝ XIV—XVI դդ. և միայն 8 արձանագրություն բաժին է ընկել XVII—XVIII դդ. և մեկն էլ պատկանում է XIX դարին²:

Այլ է վիճակը Երևանում: Այստեղ X—XIII դդ. պատկանող արձանագրությունների մեծագույն մասը ոչնչացել է 1679 թ. երկրաշարժի ժամանակ, այդ պատճառով ներկա աշխատության մեջ եղած 293 արձանագրություններից 192-ը, այսպիսինքն կեսից շատ ավելին, պատկանում են XVII—XVIII դդ., իսկ X—XIII դդ. ունեն ընդամենը 32

¹ Կ. Ղաֆաղաշյան, Հարատ, ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, 1963, Երևան, էջ 111:

² Կարո Ղաֆաղաշյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 75:

արձանագրություն, որոնցից շատերն էլ ի հայտ են եկել պեղմամբ:

Այս վիճակագրությունը մեջ բերինք ցույց տալու համար, թե ինչքան աղետավոր է եղել 1679 թ. երկրաշարժը, որ հիմնահատակ կործանել է Երևանի դարպարը կազմող բազմաթիվ շենքեր և ոչնչացրել նրանց վրայի հարյուրավոր արձանագրությունները:

Սակայն երկրաշարժի ժամանակ փլուստակվելուց դեռ են մնացել մեզ հայտնի երեք հուշարձան: Գրանցից մեկը բազարի կենտրոնում գտնվող Կարողիկիի ս. Աստվածածին եկեղեցին է, երկրորդը՝ Նոր Բի կամուսը և երրորդը՝ Ավանի հովանեճաչն եկեղեցին (որ կիսով չափ է տուժել երկրաշարժից): Այդ երեք հուշարձանների վրա էլ պահպանվել են մի քանի տասնյակ հին արձանագրություններ:

1. Կարողիկիի ս. Աստվածածին եկեղեցին երկրաշարժից չի կործանվել փորձածվել և ամբողջով կազմվածք ունենալու և խնամքով կառուցված լինելու պատճառով: Ինչ խոսք, որ կանգուն մնալուն նպաստել է նաև երեք կողմերից նրան հարող հին ժամատուրը, որը թեև հիմնահատակ փլուստակվել է, բայց կործանումից փրկել է բուն եկեղեցին:

Կաթողիկիի ս. Աստվածածին եկեղեցու արձանագրությունները, մինչև վերջերս հայտնի չէին, որովհետև 1694—1695 թթ. կառուցված եկեղեցական մեծ դահլիճի պատերի մեջ էին մնացել բոլոր արձանագրությունները:

1936—1937 թթ. ձմռան ամիսներին, երբ բանդից հետադարձան դահլիճը, բացվեցին և մեծ զժվարություն մարքվեցին հին եկեղեցու պատերի վրա փորագրված արձանագրությունները: Բացի այդ, բանդվող դահլիճի պատերի միջուկից և հիմքերի միջից ի հայտ եկան մի քանի տասնյակ ամբողջական և բեկորների վերածված արձանագրություններ:

Այստեղ հրատարակվող վիճագրերից 59-ը (№ 1—59) պատկանում են Կաթողիկիին, որոնք բոտ իրենց տեղագրության կարելի է բաժանել չորս տարբեր խմբերի:

Առաջին խմբի մեջ գրել ենք Աստվածածին փորքիկ եկեղեցու պատերին փորագրվածները, որոնք ամենահինն են: Գրանց թվով 16 է (№ 1—15 և 55) և գրված են մեծ երկրաշարժից առաջ: Հնագույնն ունի 1264 թվականը (№ 1), իսկ վերջինը՝ 1609 (№ 3):

Գրանցից մի քանիսը կարևոր տեղեկություններ են հաղորդում միջնադարյան Երևանի մասին

և ամենաարժեքավորներն են մեր ժողովածուի մեջ:

Երկրորդ խմբին են պատկանում այն արձանագրությունները, որոնք մեծ եկեղեցու կառուցման ժամանակ (1694—1695) կամ հետագայում փորագրվել են նրա պատերին: Սակայն, պետք է նշենք, որ դրանք, որ թվով 10-ն են, ոչ թե ընդարձակ և բովանդակալից արձանագրություններ են, այլ փորքիկ հիշատակագրեր: Մեծ եկեղեցին նույնիսկ կառուցման արձանագրություն չունի: Իրեկ կառուցման թվական են կարգաբար ընդունել ենք 1694—1695 թթ., հենվելով այն բանի վրա, որ դահլիճի ամ ճակատին հազարավոր փորքիկ խաչքարերը կրում են 1694 և 1695 թվականները: Գրանք, հավանաբար կառուցման օժանդակող անձնավորությունների հիշատակն են հավերժացրել (№ 17 (1694), 18 (1695), 22 (1694), № 23-ը թվական չունի, բայց անկասկած գրվել է 1694 կամ 1695 թթ.): Արձանագրությունների այս խմբին ենք միացրել նաև Կաթողիկիի ներսում, գաջի սվաղի վրայի որմնանկարների վերաբերող ներկիով արված մակագրությունները (№ 50—54) և այդ որմնանկարներն իրենց հիշատակի պատրաստել տվողների անուններն ազգաբնակչության արձանագրությունը (№ 49), որ պատկանում է 1819 թ.:

Այդ արձանագրությունը, թեև ուղ ժամանակի է պատկանում, մեջ ենք բերել ցույց տալու համար որմնանկարների ժամանակը:

Երրորդ խմբի մեջ գրել ենք այն արձանագրությունները, որոնք ի հայտ են եկել մեծ դահլիճի պատերի և մույթների կառուցված միջուկից: Այս արձանագրությունները նախապես գրված են եղել խաչքարերի կամ հին շենքերի պատերի վրա և Կաթողիկիի մեծ դահլիճի կառուցման ժամանակ օգտագործել են իբրև լիցքի բարձր կրաշագանի հետ միասին: Այս խմբի արձանագրությունների երեք մեծ զժվարություն կարողացանք մարել կրաշագանի ամուր կպած զանգվածից, սակայն մեր սպասածին հակառակ մեծ կարեւորություն ունեցող բան չգտնվեց նրանց մեջ: Այս խմբի վիճագրերի ընդհանուր թիվը 23 է, որոնք մեր ներկա աշխատության մեջ գրանցել ենք 24—38, 47 և 56—59 համարների տակ: Հնագույնն ունի 1472 (№ 29) և հետնագույնը՝ 1642 թվականը: Ի միջի ալյուց, այս վերջին թվականին են պատկանում վեց խաչքարեր (№ 21, 26, 30, 36, 38 և 59): Գրանք բոլորը միասին վկաներ են այդ թվականին կառուցված եկեղեցական դահլիճի, որ գոյություն է ունեցել երկրաշարժից առաջ և կործանվել

է 1679 թվականին: Այդ մասին ակնարկ կա նաև արձանագրությունների մեջ (№ 36 արձ.):

Չարձուց խմբին ենք վերագրել արձանագրածքարերի այն բեկորները, որոնք դուրս եկան դահլիճի ծածկի թաղի միջուկից (№ 39—46 և 48) և ժամանակի տեսակետից հետնագույններն են բոլոր արձանագրությունների մեջ: Սրանց գոյությունը պարզվում է, որ դահլիճի սայլածածկը թիթեղի է փոխվել XIX դարի կեսերին: Այս խմբի արձանագրությունների մեջ ենք գրել նաև ուղ ժամանակի մի խաչքար (№ 16 գրված և քանդակված 1832 թ.), որ, հավանաբար, եկեղեցու զանգակատան կառուցման միակ վկան է:

Կաթողիկիի արձանագրություններից և ոչ մեկը չի հրատարակվել, նույնիսկ տաճարի ճակատին երևացողները, հավանաբար նրանք կարևոր չեն համարվել:

Կաթողիկիի փոքր եկեղեցին հայտնաբերելուց հետո, մենք այդ արձանագրությունները հրատարակեցինք պատմության և զբաղմունքային ինստիտուտի «Տեղեկագրում»: Սակայն հայճնագործն հրատարակած հոդվածի մեջ չեն մտել տասից ավելի արձանագրություններ, որոնք ավելի ուղ հայտնաբերվեցին:

Կաթողիկիի ս. Աստվածածին եկեղեցին իր ամ պատի երեսին ունեցել է մի քանի ընդարձակ արձանագրություններ, որոնցից այսօր մեզ են հասել իբրև տողերի վերջավորություն կամ սկզբը նավորություն, որովհետև Կաթողիկիի մեծ դահլիճը կառուցելու ժամանակ Աստվածածնի ամ պատր բանդել են մինչև վերին կամարը և բացվածքը լայնացրել, որպեսզի նա մեծ դահլիճին ծառայի իբրև խորան: Այդ բանդումների ժամանակ ավերել են կամ փշացրել պատի երեսին եղած բոլոր արձանագրությունները, իսկ այդ պատի եկեղեցու գլխավոր ձակասան է հանդիսացել, հետևապես կարևոր արձանագրությունները այդուհի են եղել, որոնց թվում, հավանաբար, նաև եկեղեցու շինության արձանագրությունը, որ, հավանորեն, գրված է եղել մուտքի կիսաբոլոր ձակասակով քարի վրա: Այդ պատի երեսին պահպանված արձանագրությունների բեկորները մեր ժողովածուում գրել ենք 10, 11, 12, 13, և 55 համարների տակ:

2. Պողոս-Պետրոս թեև Երևանի հնագույն եկեղեցին է համարվում, կառուցած V դարում, և 1679 թվականին: Այդ մասին ակնարկ կա նաև արձանագրությունների մեջ (№ 36 արձ.):

¹ Կ. Գաթողիկյան, Երևանի Կաթողիկիի և նորահայտ հուշարձանի վիճակն արձանագրությունները, «Տեղեկագր», 2002 պատմության և զբաղմունքային ինստիտուտի, գիրք Ա, Երևան, 1935,

բայց հին արձանագրություն չի հասել մեր ձեռքը: Այստեղ հրատարակվող 16 արձանագրություններից (№ 60—75) և ոչ մեկը ուղղակիորեն չի վկայում երկրաշարժից հետո եկեղեցին վերակառուցելու մասին: Կան մի քանի հիշատակի խաչքարեր՝ թվականով և անթվակիր, որոնք բուրլուն էլ վերաբերում են 1692 և 1693-ին: Այդ տարեթվերն էլ պետք է ընդունենք իբրև հիմք երկրաշարժից հետո եկեղեցին վերակառուցելու վերաբերյալ: Այդ խաչքարերի մեջ հիշատակվող անձնավորությունները՝ Միխիբ Աղամալը, Մնացականի որդի Զարբար և այլն, այն անձերն են, որոնց նվիրաբերած գումարներով էլ վերակառուցվել է եկեղեցին: Հետաքրքիր է, որ եկեղեցու տարբեր պատերի մեջ հազարավոր երեք խաչքար բանդակել է տվել իր հիշատակին (№ 72, 73 և 74) վերահիշյալ Զարբար 1693 թ.:

Պողոս Պետրոս եկեղեցու նորոգությանն են վերաբերում մեր ժողովածուի № 60 ընդարձակ արձանագրությունը, ինչպես նաև 61-ը, որ աղ-դարբարում է տաճարի հր կողմի նորոգության մասին: Այս վերջինը կրում է 1820 թվականը (№ 61): Այդ նույն նորոգությանն է վերաբերում նաև № 63 արձանագրությունը:

Եկեղեցու բանդման ընթացքում, հնագիտական հսկողության թուլության պատճառով (1931—1932 թթ.) պատերի միջից դուրս եկած արձանագրածքարերի մասին ոչինչ չգիտենք, մասնավորապես նրանք արձանագրությունները ոչնչացել են 1679 թ. մեծ երկրաշարժի ժամանակ:

3. Ջորավոր ս. Աստվածածին եկեղեցու արձանագրությունները են հին շեն: Տեղում եղել է մի հին մատուռ և այլ շինություններ, որոնք չեն պահպանվել: Այժմ մեր ձեռքը հասած բոլոր արձանագրությունները գրված են մեծ երկրաշարժից հետո վերակառուցման և հետագա նորոգությունների ժամանակ:

Ջորավորն ունի վերակառուցման ընդարձակ շափածո արձանագրություն (№ 81): Ունի նաև մի քանի հիշատակագրեր նվիրված տաճարի կառուցող Խոճա Փանոսի (№ 79) և նրա ընտանիքի անդամների (77, 78, և 80) հիշատակին: Մի քանի արձանագրություններ վերաբերում են XVIII դարում կատարված նորոգությունների (82, 83), մեկն էլ՝ XIX դարում եկեղեցու դռներն ու լուսամուտները ձևափոխելուն և վերնատան կառուցմանը (№ 84): Վերջինս գրված է բոլորազգրով: Այս ուղ ժամանակի արձանագրությունը մեջ ենք բերել դռները և լուսամուտները ձևափոխելու ժամանակը պարզելու նպատակով:

Չորավոր եկեղեցին մեր ժողովածուում ունի ընդամենը 9 արձանագրություն (№ 76—84):

4. Նորքի կամուրջն ունի երեք արձանագրություն, բոլորն էլ գրված են կառուցման իվակահյին (1664) և ազգաբարձում են կամուրջի կառուցման հետ առնչություն ունեցող անձնավորությունների անունները (№ 85—87): Անապական տեսակետից հետաքրքիր է փակագիր անձնանունը (№ 87), թեև չի պարզում, թե փակագրի մեջ հիշատակվող Յովհաննէս-ը վարդապետ է թէ՛ վարդապետ: Եկատի ունենալով արձանագրության ուշ ժամանակի պատկանելը, մենք զգուշության համար թողել ենք վարդապետ տիտղոսը: Այս նույն Հովհաննէսը հիշատակվում է նաև կառուցման (№ 85) արձանագրության մեջ, բայց այնտեղ էլ նրա տիտղոսի վարդապետ կամ վարդապետ լինելը չի պարզվում, որովհետև բուն արձանագրության մեջ այդ բարդ հանգևե է գալիս ձայնավորները սղված վերջուպս ձևով: Հետաքրքիր է, որ կամուրջը, ինչպես և նրա վրայի երեք արձանագրությունները, բոլորն էլ գրվել են մեծ երկրաշարժից առաջ, 1664 թ.:

Կամուրջի արձանագրությունները հրատարակվել են 1931 թ. Շահադիզի «Շին Երևան» գրքի 216—217 էջերում: Փակագիրը (№ 87)՝ նաև ՊՊ ցուցակ, էջ 56:

5. Գեթնմանի մատուռն ունեցել է երեք արձանագրություն, երեքն էլ անթվակիր փոքրիկ հիշատակագրեր են պատի երեսի խաչերի արանքում գրված: Դրանք բոլորն էլ XVII դարին են պատկանում: Այդ հիշատակագրերը գրված են պատի այն մասի վրա, որը չի տուժել երկրաշարժից, այդ պատճառով էլ նախավոր է և հավանական, որ այդ երեքն էլ գրված լինեն երկրաշարժից առաջ: Այս մատուռի երեք հիշատակագրերն էլ նախկինում չեն հրատարակվել:

6. Կոզիի ս. Հովհաննէս եկեղեցին համեմատաբար հարուստ է վիճակա արձանագրություններով, բայց բոլորն էլ համառոտ են և շատ բլբեր են, որ լուի հիշատակագրության սահմաններից դուրս են գալիս: Այն տաճարի արձանագրությունները 17-ն են, որոնք մեր ժողովածուի մեջ գրանցված են 91—107 համարների տակ: Արձանագրությունները թվագրված չեն և միայն եկեղեցու ձևակառուցող կա «թվ. ՌՃՄԹ» (1710) թվականը (արձ. № 93): Անըկիրա է, որ այդ թվականին էլ՝ երկրաշարժից հետո, կառուցվել է եկեղեցին, որովհետև նույն պատին կան մի շարք խաչարարք, որոնք փորագրվել ու պատերի մեջ են հագցվել 1710 թ. եկեղեցին վերակառուցելու ժա-

մանակ: Այդ խաչարարքը նվիրված են եկեղեցին կառուցել տվող Մելիք Աղամալի և նրա մեծածորների հիշատակին: № 94-ի մեջ գրված է «Կաման Աստուծայ եկեղեցին Մելիք-Աղամալ շինել[ա]ց»: Եկեղեցու ներսում եղած երեք արձանագրություններն էլ կառուցողական բնույթի են, մեկը՝ Մելիք Աղամալինն է (106), որ դարձյալ ազգաբարձում է եկեղեցին նրա միջոցներով կառուցված լինելը, երկրորդը՝ նշում է, որ եկեղեցու ներսի սյուներից մեկը Մարգարի կողակից Մարիանի ծախսով է շինվել, իսկ երրորդի մեջ ասված է, որ մազազործ Հարությունն իր կնոջ՝ Եղիսարեթի հետ եկեղեցու ֆարջն է շինել:

Այդ իսկ պատճառով, այս տաճարի բոլոր արձանագրություններն ու խաչարարքը վերագրել ենք 1710 թ.:

7. Կոզեռնի գերեզմանոցի հնագույն արձանագրություններից մեկը պետք է պատկաներ Հովհաննէս վարդ. Կոզեռնին, որի անունով էլ կոչվել է գերեզմանոցը, բայց այնտեղ հին արձանագրություններ չկային, թեև այդ գերեզմանոցը, ինչպես այդ մասին վկայում է Առաքել Գավրիթեցին, եղել է հասարակաց գերեզմանատուն: Նույնն է վկայում նաև Հովհ. Շահաբունյանցը, առելով, որ «Կոզեռնի կոչեցեալ բլրակի ու հիստիստիսն բաղաբին է գերեզմանոտ հայազգի բնակչացն» (Բ հատոր, էջ 155): «Կոզեռնի մոտ հետագայում,— գրում է Երվանդ Շահազիզը,— թաղվել է Բաղեշի Ամրոտը վանքի արտաքին գիտությունների դպրոցի նշանավոր գաղտառ Մելիքոսեթ Վժանեցի վարդապետը, իսկ դրանց երկուսի (Կոզեռնի և Վժանեցու—Կ. Ղ.) մեջտեղը՝ մեր հայտնի Մովսես Գ. Սյունեցի կաթողիկոսը: Այնտեղ՝ դրանց գերեզմանների վրա հետագայում շինվել է մի վայելուշ մատուռ, որ կոչվել է «Կոզեռնի մատուռ» («Շին Երևան», էջ 187):

Այդ մատուռը Մելիք Աղամալյանները դարձրել էին իրենց տոհմական տապանատունը, ըսկրած 1835 թ.:

Մենք, երևանի բաղաբային սովետի հանձնարարությամբ, ինչպես արդեն ասել ենք, 1934 թ. ընդօրինակել ենք Կոզեռնի գերեզմանոցի բոլոր տապանագրերը հնից սկսած մինչև XVIII դ. վերջը, որոնց բոլորի թիվը հասել էր 302-ի: Այդ արձանագրությունների ժողովածուն մշակված և հրատարակության պատրաստի վիճակում 1935 թ. հանձնեցինք Պատմության և պատկանության ինստիտուտին հրատարակելու համար: 1936 թվականին ինստիտուտը խմբագրական մի հանձնաժո-

ղով նշանակեց այդ ժողովածուն քննելու և ապագրության հանձնելու համար:

Հանձնաժողովին ամենից առաջ ժողովածուի միջից դուրս հանեց բոլոր անթվական արձանագրությունները, առանց հաշվի առնելու նրանց կարևորություններն ու հնությունը, որից հետո ժողովածուի մեջ մնաց ընդամենը 86 արձանագրություն, որ և այժմ հրատարակում ենք № 108—193 համարների տակ:

Վերջերս, երբ ներկա ժողովածուն պատրաստ էր ապագրության, պատահաբար գտանք Կոզեռնի գերեզմանոցին վերաբերող 12 յուսակար, որոնց արձանագրությունները գրինք ժողովածուի վերջում № 259—270 համարների տակ: Դրանցով Կոզեռնի գերեզմանոցի այստեղ հրատարակվող արձանագրությունների ընդհանուր թիվը դարձավ 98:

1934 թ., երբ ընդօրինակում էինք գերեզմանոցի արձանագրությունները, մատուռը թեև կանգուն էր, բայց նրա մեջ չկար և ոչ մի տապանաբար, հետևապես և ոչ մի արձանագրություն: Այդ պատճառով Մովսես Սյունեցու և Սահակ Մելիք-Աղամալյանի տապանների արձանագրություններն ընդօրինակել ենք ուրիշների հրատարակություններից առանց գծագրության:

Ինչպես արդեն նշել ենք, Կոզեռնի գերեզմանոցում ոչ մի խաչարար կամ կենցաղային պատկերով գերեզմանաբար չկար, որոնք այնքան բնորոշ են շրջապատի բնակավայրերի գերեզմանոցների համար:

Բովանդակությամբ ևս երևանի տապանագրերը աղբյուրիկ են: Սովորաբար գրված է նեչեցյալի անունը, հոր անունը և մահվան տարեթիվը, երբեմն նաև արհեստն ու տոհմանունը:

XVII և XVIII դարերի գրավոր աղբյուրների կողքին Կոզեռնի գերեզմանոցի արձանագրությունները, կարծում ենք, որոշ նշանակություն ունեն երևանի համար: Մասնավորապես որ այն ժամանակվա հրատարակությունները սակավաթիվ են:

8. Ավանի արձանագրությունները, որոնց ընդհանուր թիվը 41 է (№ 194—230 և 283—284, 288—289, 292—293), իրենց հնությունը և շատերի բովանդակությամբ գիտության համար մեծ արժեք ունեն, բայց մի վերապահությամբ, որ Ավանը հնում, թեև երևան բաղաբային շատ մոտիկ, բայց նրանից անշատ, Կոտայքի ավաններից մեկն է եղել և բաղաբային միացել է միայն վերջերս՝ Քանաքեռ գյուղի հետ միասին:

Ավանի վիճակում արձանագրությունները փորագրված են հինգ տարբեր հուշարձանների վրա,

այդ պատճառով էլ մենք նրանց ստորաբաժանել ենք հինգ խմբի:

1. Ավանի տաճարը (այդպես ենք պայմանականորեն անվանում հակաթու Հովհանի կառուցած եկեղեցին) թեև կառուցման վերաբերյալ արձանագրություն չունի, բայց նրա վրա պահպանվել են փորագրված բառեր, որոնց արժեքը խիստ մեծ է հայոց գրերի պատմության համար, բանի որ դրանք Տեկորի տաճարի, Թալինի տապանաբարի և Գլինի մի քանի մանր արձանագրությունների կողքին մեզ հայտնի հայոց հնագույն գրերն են:

Այս տաճարի վրա է փորագրված եզր կաթողիկոսին վերաբերող և յոթերորդ դարի 30-ական թվականներին պատկանող երկիզգված (հայերեն և հունարեն) ծածկագիր վիճարկությունը, որ մինչև այսօր մեզ հայտնի ծածկագրության հնագույն օրինակն է և բարի վրա փորագրված միակը: Բովանդակության տեսակետից ևս այդ արձանագրությունը յուրօրինակ է և կապված է VII դարի զավանդարանական ու բաղաբային հարցերի հետ (№ 194):

Ավանի տաճարի պատերի վրա փորագրված են Զարարյանների և այլոց իշխանական կարգադրությունները, որոնց մեջ հիշատակվում են պետական տարբերք և արհեստները: Այդ արձանագրություններն արժեքավոր են անտեսական կյանքի ուսումնասիրության համար:

2. Ավանի արձանագրությունների երկրորդ խումբը գտնվում է կիսով չափ քանդված ս. Հովհաննէս եկեղեցու պատերին և նույն եկեղեցու շրջապատում (№ 213—220, 288, 289, 293): Սրանց մեջ կան մի երկու արձանագրություն (№ 215 և 219), որ վերաբերում են այգու առուծախրի և խաչարարի կանգնեցմանը: Դրանք հետաքրքիր մանրամասնություններ են պարունակում իրենց բովանդակության մեջ:

3. Արձանագրությունների երրորդ խումբը գրված է ս. Աստվածածին ավերակ եկեղեցու պատերին: Դրանք նվիրատվական բովանդակություն ունեցող վիճարկերի բեկորներ են և մի քանի հիշատակագրությունների մնացորդներ (№ 221—224):

4. Չորրորդ խումբը տապանագրեր են և գերեզմանոցային խաչարարքի հիշատակագրություններ: Ավանի այս գերեզմանոցը շատ հին է, այնտեղ կա նույնիսկ V—VI դարի աստիճանավոր պատվանդանի վրա գրված կոթող, բայց արձանագրած բարերը թիշ են, և հնագույն կրում է 1471 թվականը (№ 227):

5. Հինգերորդ խումբը (283—284) գյուղական ավերակ կեղեցուն է պատկանում:

9. Քանաքեռի արձանագրությունները փորագրված են երեք տարբեր հուշարձանների՝ երկու կեղեցիների և ճանապարհի կողքին գտնվող մաս՝ արձանի վրա:

1. Քանաքեռի մանրամասն նախկինում եղել է գերեզմանոցի մեջ: Խճուղի անկյակցելու ժամանակ XIX դարում գերեզմանոցը վերացրել են և ճանապարհի կողքին մնացել է այդ մաս՝ արձանի կողմը որմնափակ մեծ խաչքարն իր արձանագրություններով: Հետաքրքիրն այն է, որ մաս՝ արձանը (կառուցված 1265 թ.) 1679 թ. մեծ երկրաշարժի ժամանակ կանգուն է մնացել, շնչածած այն բանին, որ «Ե. Քանաքեռ գիւղ ոչ մնաց բուն մի հատ» ինչպես գրում է ավանատես Զաքարիա Սարգսյանը:

Բացի խաչքարի կանգնեցման 1265 թ. րնդարձակ արձանագրությունից (№ 231) նրա որմնափակի հր երեսին կա 1265 թ. գրված բավականին մեծ մի արձանագրություն, այդպես ասուածաբար վերաբերյալ, որի տակ, իբրև վկա, բազմաթիվ մարդկանց անուն է գրված (№ 232): Մնացածները մանր արձանագրություններ են, մեծ մասամբ խաչքարերի վրա գրված հիշատակագրություններ (№ 233—239):

2. Քանաքեռի ս. Հակոբ կեղեցին ունի յոթ արձանագրություն, որոնք փորքի հիշատակագրեր են կամ տպանարարի բեկորներ (№ 240—244 և 271—272): Ամ պատին ունի երկրաշարժից հետո վերաշինության թվական, որ է 1695 (244):

3. Քանաքեռի Աստվածածին կեղեցին ի տարբերություն ս. Հակոբի, ունի շինության րնդարձակ արձանագրություն՝ գրված 1696 թվականին (№ 248): Մնացածները մանր հիշատակագրություններ են խաչքարերի վրա:

10. Վերջում գրել ենք բազաբի տարբեր տեղերից Երևան բազաբի պատմության և Հայաստանի պատմության թանգարաններում կենտրոնացրած մի բանի արձանագրություններ (251—258), որոնցից շատերի սկզբնական տեղն անհայտ է: Գրանք XVI—XVII դարերին են պատկանում, բացի մեկից, որ XIII—XIV դարից է և բերված է Նորագավթից (254): Այս արձանագրությունը թեև պակասավոր է, բայց հետաքրքիր բովանդակություն ունի: Այդ արձանագրություններից մեկն է Պողոս-Պետրոս կեղեցուց է բերված (255) և կրում է 1694 թվականը, որ, ինչպես արդեն ասել

ենք, նրա վերակառուցման թվականն է, մեծ երկրաշարժից հետո:

Երևանի բոլոր 293 արձանագրություններից միայն 27-ն է, որ մեզանից առաջ հրատարակվել են այլ ուսումնասիրողներ: Մնացած 231-ից 59-ը մենք հրատարակել ենք առաջին անգամ: Գրանքը 50-ը Կաթողիկե կեղեցու արձանագրություններն են, իսկ 9՝ Ավանիին:

Կաթողիկե արձանագրությունները հրատարակել ենք փորագրի ս. Աստվածածին կեղեցու հայտնագործումից հետո, երբ նրա պատերին բացվեցին երևանի պատմության համար բացառիկ արժեք ունեցող արձանագրություններ:

Ավանի արձանագրություններից 9 հրատարակել ենք երկրեզման ծածկաբեր արձանագրության կապակցությամբ, առանձին գրությունով:

Երևանի վիմական արձանագրությունների առաջին հրատարակիչը Հովհաննես արքեպ. Շահ-խաթունյանցն է: Նա իր «Ստորագրություն կաթողիկե կեմիածին և հինգ զատուցն Այրարատայ» աշխատության երկրորդ հատրում, Երևանից գետեղել է չորս արձանագրություն Պողոս-Պետրոս կեղեցուց (№ 60, 61, 64 և 65), երկու արձանագրություն Զորավոր կեղեցուց (№ 81 և 82), մեկը՝ Կողոնի գերեզմանոցից (№ 192), մեկը՝ Ավանի տաճարից (№ 198), երկուսը՝ Քանաքեռի մասնարձանից (231, 232), մեկը՝ Քանաքեռի ս. Հակոբ կեղեցուց (244) և մեկն էլ Քանաքեռի Աստվածածին կեղեցուց (248): Այսպեսով Շահ-խաթունյանցը Երևանից հրատարակել է բնագամներ 12 արձանագրություն:

Նա, ըստ սովորության, ուշադրություն չի դարձրել մանր հիշատակագրերի վրա:

Երևանի ուրբ արձանագրություն հրատարակել է Մեսրոպ արքեպ. Սմբատյանցն իր «Տեղագրություն Գեղարքունի ծովազորը զավտար...» աշխատության 8—15 էջերում, որոնցից երկուսը՝ Զորավոր կեղեցուց (81, 82), չորսը՝ Կողոնի ս. Հովհաննեսից (91, 93, 94 և 105), մեկը՝ Կաթողիկեից (255) և մեկն էլ՝ Կողոնի գերեզմանոցից (192):

¹ Կ. Ղաֆազյանց, Երևանի Կաթողիկեի և նորահայտ հուշարձանի վիմական արձանագրությունները: «Տեղեկագիր» Հեթոմ պատմության և գրականության ինստիտուտի, Երևան, 1938, գիրք Ա, էջ 165—192:

² Նույնի, Ավանի երկրեզման ծածկագրի արձանագրությունը, Երևան, 1945:

³ «Ստորագրություն կաթողիկե կեմիածին և հինգ զատուցն Այրարատայ», աշխատությունները Յո՛ւ՛լ. Կ. Վ. Շահ-խաթունյանց, հատ. Բ, էջմիածին, 1842, էջ 136—160:

Այլիշանը Շահ-խաթունյանցից բնագործակել է ընդամենը 10 արձանագրություն: Երկու արձանագրություն զուրս է թողել ուշ ժամանակի պատկանելու պատճառով (№ 64 և 65), չնայած այն բանին, որ երկուսն էլ շինարարական բնույթ ունեն: Կոստանյանն էլ իր «Վիմական տարեգիր»-ից զուրս է թողել վերոհիշյալ երկու արձանագրությունները:

Այսպեսով, տեսնում ենք, որ Այլիշանի «Այրարատ»-ում և Կոստանյանցի ժողովածուում տպագրված վիմական արձանագրությունները արժեք չունեն, որովհետև արտագրված են Շահ-խաթունյանցից, միայն թե Կոստանյանն ըստ իր սովորության կրճատել է արձանագրություններից կարևոր համարած մասերը:

Այլ կերպ է վարվել հին Երևանի պատմագիր Երվանդ Շահազիզը:

Նա Շահ-խաթունյանցից բնագործակել է իր գրքում արտատպել է Երևանին վերաբերող բոլոր հրատարակված արձանագրությունները, բայց զուրս է թողել Ավանի և Քանաքեռի արձանագրությունները, որովհետև այն ժամանակ, երբ Շահ-խաթունյանցը գրում էր իր գիրքը, Քանաքեռն ու Ավանը Երևանից անկախ գյուղեր էին և չէին մտնում Երևան բազաբի սահմանների մեջ:

Ի պատիվ Շահազիզի պետք է ասել, որ նա Շահ-խաթունյանցից վերցրած արձանագրությունները ստուգել է բարեբի վրա և լրացացիչ կերպով առաջին անգամ հրատարակել է Երևանի պատկանող 13 արձանագրություն (Զորավորից՝ մեկ (83), Նորքի կամուրջից՝ երեք (85, 86 և 87), Կողոնի ս. Հովհաննեսից՝ յոթ (88, 91—94, 105—107), Կողոնի գերեզմանոցից՝ մեկ (193):

Երևանի արձանագրությունների բոլոր հրատարակիչներն իրենց աշխատությունների մեջ գետեղել են միայն արձանագրությունների լուր րոմանդակությունը՝ առանց գծագրության վրա ուշադրություն դարձնելու: Միայն Երվանդ Շահազիզն է, որ իր գրքի 217 էջում գրել է Նորքի կամուրջի փակագիր արձանագրության գծագրի և Զորավորի ս. Գեթեմանի մատուփ արձանագրությունների երեք լուսանկար (առանց գծագրի):

Անցյալում մեր հրատարակած Կաթողիկե կեղեցու հիսուն արձանագրություններից (1—9, 14—54) յոթ կարևորները, որոնք 1936—1937 թթ. ի հայտ եկան Նորարաց Աստվածածին կեղեցու պատերին, տպագրել ենք գծագրությամբ և մաս

ամբ նաև լուսանկարներով: Պարբերականի էջերում աղվեսն ասել անհնարին էր:

Ավանի տաճարի երկրեզման արձանագրության հետ միասին 1945 թ. հրատարակել ենք նույն տաճարի մի բանի արձանագրություններ իրենց գծագրությամբ, որոնք այժմ այստեղ արտատպում ենք որոշ լրացումներով:

Երևանի բոլոր վիմական արձանագրություններն իրենց գծագրությամբ բաժանվում են երեք տարբեր խմբերի: Այդ խմբերը միասնամանակ համընկնում են ժամանակագրական առումով երեք տարբեր դարաշրջանի:

ա. Հնագույնների պատկանում են VI—VII դարերին: Գրանք Ավանի տաճարի հնագույն արձանագրություններն են, որոնք իրենց գրերի ձևերով շատ քիչ բանով են տարբերվում բուն մեսրոպյան երկաթագրերից: Այդ գրերը լայն և ուղիղ ստեղծներ ունեն, կամարակոր են, կլուսանկար ուղիղ և երկար, խիստ լայն են, իսկ Ձ Ծ գրերը գրեթե շրջանագծի տեսք ունեն: Այդ գրերը կոթողային կեղեցիկ գծագրություն ունեն, որոնց պատկերներն էլ մեջ տեղի ինստիտուցիայի գաղափարը գեղեսուսուսը չի գործել (տե՛ս 194, 200—204):

Բ. Երկրորդ խմբին են պատկանում աղվեսի մեծ թվով արձանագրություններ, որոնք այս կամ այն տարբերակներով պատկանում են XIII դարից սկսած մինչև XVII դարի կեսերին: Աղվեսի արձանագրություններ ունենք Կաթողիկեի պատերին, Ավանի տաճարի վրա և վերջին օրինակներն էլ՝ Նորքի կամուրջի պատերին:

Այս խմբի գրերի առանձնահատուկ կողմը կարելի է համարել նրանց ստեղծները միացնող կամարների նեղությունը, կլուսանկարի դեպի ներքև հակված լինելը, փակագրերի և այլ կարգի հապավումների առատությունը և գրերի իրենց բարձրության համեմատությամբ նեղ լինելը:

Գրերի այս ոճը, չնչին տարբերությամբ, կիրառված է եղել Արագածոտնում, Կոստայում և նրանց մերձակալում: Երկաթագրի այս տեսակը տարածված է եղել նաև շատ հեռուներում, մինչև իսկ Գուգարքում, Սյունյաց աշխարհում և այլ տեղերում: Հետաքրքիրն այն է, որ հայաց բոլոր արձանագրությունների կեսից աղվեսն փորագրված են այս ոճով:

Այս ոճի գրերը հին նման գեղեսուսուս ու բարակ ստեղծներ չունեն, կամ, ասենք, ստեղծները խոր և հաստ, իսկ կամարները նեղ ու մակերեսային են: Այս ձևին են պատկանում նաև Անիի, Մարմաշենի արձանագրությունները, թեև Անիում

¹ «Զաքարիա Սարգսյանի պատմագրություն», հատ. Բ, էջմիածին, 1870, էջ 104:

¹ «Այրարատ, րնաշարհ՝ Հայաստանից», տեղագրական Հ. Անեղ Վ. Այլիշան, Վենետիկ, 1890, էջ 299—320:

և Մարմաշենում գրերի զմայրության մեջ արտա-
խմը ավելի է զգացվում: Այնտեղ հասնի գրերի
կուտաները կես չեն և գրերը համեմատաբար լայն
են:

Այս ոճին պատկանող երևանի վիմական ար-
ձանագրությունների թիվը մեծ չէ, որովհետև
նրանց մեծազույն մասը ոչնչացել է մեծ երկրա-
շարժի ժամանակ:

Գ. Գրերի երրորդ խմբին են պատկանում մեր
ժողովամեր մեջ հրատարակվող արձանագրու-
թյունների բացարձակ մեծամասնությունը, որ
հասնել է եկել մեծ երկրաշարժից հետո՝ XVII դա-
րի վերջերի և շարունակվել է XVIII դարում:

Այս խմբի գրերի տառնձնատակ կողմերն
են. ուղղահայաց ստեղծների հաստ և խոր փորա-
գրությունը, կամարների նեղ և մակերեսային լի-
նելը, կուտանների զլիսահարկությունը, բոս որում
կուտաններն իրենց արմատի մոտ կամար են ձև-
վացնում, շատ անգամ գրերի հիմնական ստեղ-
ների իրար միացնող կամարների չափին հավա-
սար են, որպեսզի գրերի ընդհանուր ոճը պահպան-
վի, կուտանների կամարների էլ նեղ և մակերեսա-
յին փորագրություն են ունենում, իսկ նրանց զր-
խահակ մասը, գրերի հիմնական ստեղծների նման,
հաստ ու խոր են լինում:

Եթե երրորդ խմբի գրերի մասին որոշակի
չենք կարող ստել, թե երևանի արձանագրու-
թյունները որտեղի վիմագրական դարձրել անմիջական
ազդեցության ներքո են ձևավորվել, որովհետև այդ
շրջանի գրերը, ինչպես ասացինք, շատ են տա-
րածված և գրեթե ընդհանուր են ամբողջ Արևել-
յան Հայաստանի համար, այդ երրորդ խմբի
գրերը, բոս իրենց զմայրության, երևանում ձև-
վավորվել են էջմիածնի անմիջական ազդեցու-
թյան ներքո: Այդ է պատճառը, որ երևանի XVII
դարի վերջի և XVIII դարի արձանագրու-
թյուններն իրենց զմայրությանը ոչնչով չեն տարբերվում
էջմիածնի նույն ժամանակի գրերից:

Հետաքրքիրն այն է, որ նորի կամուրջի
1664 թ. արձանագրությունը շատ ավելի մոտ է
երևանի XII դարի վիմագրերին, քան նույն տեղի
մի երեք տասնամյակ հետո գրված արձանագրու-
թյունների զմայրական ոճին:

Կարծիք թե 1679 թ. մեծ երկրաշարժը հա-
կատարներն նշանակություն է ունեցել գրերի
ավանդական ձևերը վերացնելու խնդրում:

Երևանն այս շրջանում ոչ միայն էջմիածնի
գրերի զմայրական ձևերն է չուրացրել, այլև գր-
վածքի արտահայտության ոճը: Անգամ երևում է,
որ շատ տեղերում արձանագրությունների բնա-

գիրը կազմել են էջմիածնի միարանները կամ
նրանց անմիջական ազդեցության տակ գտնվող
մարդիկ: Եվ դա շատ հավանաբար է, որովհետև,
ինչպես Առաքել Գալբրիմեցին է վկայում, XVII
դարի վերջին և XVIII դարում, էջմիածնեցիք մեծ
մասամբ երևանում էին լինում: «Որ է իջևն կամբո-
ղիկոսունըն անդ էջմիածնի ոչ բնակէին, այլ յն-
բեան քաղաք»: Կաթողիկոսները երևանում մեկից
ավելի աթոռանիստ վայրեր ունեին և նույնիսկ
ստանձին եկեղեցի (ս. Գեորգ) «որ է իջևն կամբո-
